Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՄԵՋ Է

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԼԵՎԻՆԵՐԸ

Էրվան ԿԵՐԻՎԵԼ

Նախաբան

Վարուժան Սիրապյան

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ՄԵՋ Է

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԼԵՎԻՆԵՐԸ

Թարգմանիչ
Աննա Հակոբյան

SIGEST

Գիրքը հրատարակվել է
«Չոպանյան ինստիտուտի» հովանավորությամբ
www.tchobanian.org

INSTITUT
TCHOBANIAN

Այս գիրքը ձոնում եմ իմ փոքրիկ պահապան հրեշտակին՝ ԱՅՏԵՆԻՆ,

իմ պաշտելի քույրիկներին՝ ՊԵՐԻՀԱՆԻՆ, ՍՈՒԼԹԱՆԻՆ, ՍԵՎԻԼԻՆ,

ՋԱՀԻԴԵ ԱՆԱԻՆ,

բանաստեղծ իմ ընկերոջը՝ ՋԵՅՆԵԼԻՆ:

Շնորհակալություն ենք հայտնում Օրիորդ Պերիհան ԲԱՐԿԻՆԻՆ, Օրիորդ Սելին ՍԵՆ-Գալին, Օրիորդ Ֆաբիեն ԲՐԻՖՈՅԻՆ և Գամզե ԱՅԳՅՈՒՆԻՆ՝ խմբագրման և սրբագրման մեծարժեք աշխատանքների համար:

Նախաբան

«Եթե մարդիկ, անգամ չիմանալով այդ մասին, պետք է կրկին հայտնվեն մի օր, ամեն բան կարող է պատահել նրանցից յուրաքանչյուրի հետ, և նրանք կարող են գնալ տարամետ ճանապարհներով: Նշանակված օրը նրանք անխուսափելիորեն դարձյալ կհավաքվեն կարմիր շրջանի մեջ»:

Ռամա Կրիշնա

Երբ հեղինակն ինձ խնդրեց առաջաբան գրել «Ճշմարտությունը մարդու մեջ է» գրքի այս նոր հրատարակության համար, այդ առաջարկը ես ընդունեցի ուրախությամբ, և նույնիսկ ես կասեի հիացմունքով:

Ուրախությամբ, որովհետև մեր հարաբերությունը, որը սկզբում միայն այն էր, որ պետք է լիներ հրատարակչի և հեղինակի միջև, մի քանի ամսում փոխակերպվել էր անկեղծ բարեկամության: Հիացմունքով, որովհետև այս գրքի շնորհիվ ես բախտ ունեցա շփվել Թուրքիայի ալեվիների հետ, որոնց այլ կերպ ինձ չէր հաջողվի մերձենալ:

Եվ սակայն… Հայրս՝ Խոսրովը, ծնունդով լինելով Պալուցի (Խարբերդ), 1915 թվականի ջարդերից մազապուրծ փախած, երկու տարեկան հասակում, իմ տատիկի հետ, անշուշտ, կունենար ալեվի հարևաններ: Հարևաններ, որոնց մոտ որոշ հայեր պատսպարվել էին, ոմանք էլ դավանափոխվել՝ Երիտթուրքերի իթթիհադիստական վարչակարգի իրագործած ցեղասպանությունից խույս տալու համար: Այս տարածաշրջանի ալեվիների և հայերի ճակատագրերն հետայսու կապված էին թե՛ կյանքում, թե՛ մահվան մեջ, քանի որ 1937-38թթ. Դերսիմում նրանք ենթարկվեցին նոր կոտորածների՝

այս անգամ Քեմալի վարչակարգի կողմից: Այս երկու տարիները՝ «քաղաքակրթության այս առաքելությունը» (!), հենց Աթաթուրքի բառերով ասած, դժոխք կլինեն Դերսիմիսի բնակչության համար:

Էրվան Կերիվելի գիրքը մեզ օգնում է ավելի լավ ճանաչել ալեվիներին փիլիսոփայական, ինչպես նաև սոցիոլոգիական տեսակետից: Որքան եղավ իմ զարմանքը, երբ հայտնաբերեցի, որ Ստամբուլի դպրոցում իմ սովորած որոշ պոեմների հեղինակները ալեվի բանաստեղծներ էին. Պիր Սուլթան Աբդալ, Ֆյուզուլի, Յունուս Էմրե..., որոնց մեզ ներկայացրել էին որպես «օսմանյան բանաստեղծներ»: Պաշտոնական թուրքական պատմությունը, ազգայնամոլական կրթության հիմքի վրա, չի բավարարվում միայն երիտասարդ սերունդների հիշողությունից ջնջելով այն ամենը, ինչը կարող է լինել հայկական մշակույթի ժառանգություն, այլ նաև խեղաթյուրում է մյուս՝ թուրքական չհամարվող էթնիկական խմբերին՝ հույներին, քրդերին, ալեվիներին, ասորի-խալդերին, համշեն-ներին... Հեղինակը չի զլացել ֆրանսերեն թարգմանել այդ պոեմներից մի քանիսը, մի բան, որ այնքան էլ դյուրին չէր: Այսպիսով ընթերցողն ավելի լավ կըմբռնի ալեվիների խորապես մարդասիրական փիլիսոփայությունը: Մի քանի նկարներ, որ հեղինակը լուսանկարել է Թուրքիա կատարած իր բազմաթիվ այցելությունների ընթացքում, հարստացնում են գիրքը և մեզ տեղափոխում ալեվիների առեղծվածային աշխարհը:

Գրքի առաջին պաշտոնական շնորհահանդեսի ժամանակ, որը տեղի ունեցավ Նանտում, ԱԿՄ-ում (Alevi Kultur Merkezi), ես անչափ հուզվել էի ալեվիների ընկերակցության անդամների ջերմ ընդունելությունից: Մի քանի ժամում այդ մարդիկ, որոնց ես նախկինում երբևէ չէի հանդիպել, դարձան իմ բարեկամները, կարծես մենք իրար ճանաչում էինք վաղուց ի վեր:

Այս գրքում Է. Կերիվելը մանրամասնորեն, հենակետերով ցույց է տալիս ալեվիների բնակեցումը Թուրքիայում (մոտավորապես 18 միլիոն՝ երկրի ամբողջ բնակչության մոտ մեկ քառորդը): Այն ներկայացնում է ներունակ քաղաքական

ուժ, որը ներկա պահին, չի օգտագործվում, որպեսզի կարողանայինք ձևակերպել օրինական պահանջներ:

Փիլիսոփայական մասում, էջ էջի ետևից մենք հայտնաբերում ենք նրանց մարդասիրական միտքը, նրանց վերաբերմունքը կանանց նկատմամբ և կանանց տեղը հասարակության մեջ, երիտասարդների կրթության կարևորությունը, հարգանքը նախնիների նկատմամբ... Հեղինակն անդրադառնում է նաև այնպիսի հարցերի, ինչպիսիք են ալեվիզմի և իսլամի, ալեվիզմի և շամանության միջև եղած կապերը, ալեվիզմը՝ ընդհանրապես, գնոստիկները և սուֆիզմը... Ծեսերն ու արարողությունները բացատրված են ամենայն մանրամասներով:

Դիտարկելով այս գիրքը որպես մանկավարժական գործիք ապագա սերունդների համար՝ ալեվիների ընկերակցությունների պատասխանատու անձինք չեն սխալվել: Իր երրորդ հրատարակությամբ Էրվան Կերիվելի գիրքն արդեն գտնում է այն հաջողությունը, որին արժանի է՝ ներկայանալով Ֆրանսիայի բոլոր կողմերում, ինչպես նաև եվրոպական գրախանութներում:

Մեզ մնում է միայն քաջալերել նրան շարունակել իր ուսումնասիրությունները նոր գրքի առնչությամբ, որին սպասում ենք մեծ անհամբերությամբ:

Վարուժան Սիրապյան

Չոպանյան ինստիտուտի հիմնադիր տնօրեն

Եվրոպա և Արևելք հանդեսի տնօրեն

Երկու խոսք՝ որպես առաջաբան...

Թուրքիան բազմաթիվ դեմքեր ունի:

Մի երկիր, որի բնակչության մեծամասնությունը մահմեդական է: Անշո՛ւշտ:

Բայց նաև մի երկիր, որտեղ բնակչության քառորդ մասից ավելին կողմ է հանրապետությանը և աշխարհիկ ապրելաձևին, որը հավասար է համարում կնոջն ու տղամարդուն, որտեղ հասարակ գյուղացին շփոթվում է արվեստագետի հետ, որտեղ սազի[1] հնչյունների ներքո գովերգվում է մարդկային սերը. աստվածային պատկեր: «Աստված մարդու մեջ է, մարդը՝ Աստծո: Ես ինձ նայեցի, և Բարձրյալը հայտնվեց ինձ»: Թուրքիայի արևմուտքից մինչև արևելք, լինեն թուրքմեններ, թուրքեր, քրդեր կամ զազաներ, միլիոնավոր կանայք և տղամարդիկ մեզ ցույց են տալիս Թուրքիայի մեկ այլ դեմքը: Դրանք ալեվիներն են:

Ալեվիներն ամբողջովին առանձնացված ժողովուրդ չեն համարվում, այլ Թուրքիայի հանրապետության ներկայիս սահմաններում ապրող բազմաթիվ ժողովուրդներից սերված մի համայնք: Երկրի արևմտյան մասում՝ Էգեյան և Միջերկրական ծովերին դեմ հանդիման, կիսաքոչվոր, կիսանստակյաց թուրքմեններն են, որոնք խոսում են թուրքերեն: Անատոլիայի կենտրոնական մասում՝ այսպես կոչված Քուրդստանում, քուրդերն են և զազաները, ովքեր խոսում են կուրմանքու քրդերեն և զազակիերեն, որը հին իրանական լեզու է: Թուրքիայում ներգաղթի և ներքին գյուղական արտագաղթի պատճառով նրանց մեծ մասը հետայսու բնակվում է թուրքական մեծ քաղաքներում՝

1 *Սազը* երկար կոթով լարային գործիք է:

Ստամբուլում, Անկարայում և Ադանայում: 15-ից 20 միլիոն ալեվիներ են բնակվում Թուրքիայում: Նրանք չունեն հոգևոր դաս, մզկիթ չեն հաճախում, միայն մեկ հեղինակություն են ընդունում՝ իրենց *Դեդին* կամ *Պիրին*, հայրապետներին, իմաստուններին, որոնք պետք է անցկացնեն արարողություններն ու ծիսակարգերը և համայնքում հաստատեն ներդաշնակություն:

Եթե համայնքը բազմաէթնիկական է, այն ուրեմն նաև բազմամշակութային է: Բազմաթիվ ճնշապատիժների հետևանքով, որոնց զոհերը եղան ալեվիները և շարունակում են լինել, նրանք բավականին վատ են բնորոշվում կոդավորված համակարգում: Գաղտնիությունն ալեվիզմի բաղկացուցիչ մասն է: Ալեվիին չեն հարցնում՝ ալեվի է նա, թե ոչ, այլ կոահում են, տեսնելով, որ նա ապրում է:

Այսօրվա ալեվիզմը զանազան չբացահայտված, կրոնական և փիլիսոփայական ազդեցությունների արդյունք է: Խոսքը սինկրետիզմի[2] կամ ավելի շուտ սինկրետիզմների պատմական հանրագումարի մասին է: Նախնիներից եկած կրակի և լույսի պաշտամունքներն են միախառնվել թուրք-մոնղոլական շամանիզմին, այլադավան մուսուլմանական դպրոցների սուֆիզմին[3] և իրանական շիիզմին[4]: Բնական տարրերի պաշտամունքը, ինչպես նաև գերագույն արարչի՝ Աստծո պաշտամունքը ծնունդ տվեցին մարդկային էակի պաշտամունքին: Ալեվիզմը դեիզմի տարատեսակն է:

Իմ առաջին հանդիպումը նրանց հետ եղավ 1990 թվականին, Նանտ քաղաքում: Այդ ժամանակաշրջանից ես հիշում եմ, թե ինչպիսի հետաքրքրասիրությամբ էի նրանց ունկնդրում, երբ ինձ պատմում էին իրենց մշակույթի մասին: Ես իմացա, որ Թուրքիայի մեծամասնություն կազմող սուննիթ մուսուլմաններն անսահման ատելությամբ

2 Սինկրետիզմ – տարբեր կրոնների, մշակույթների միաձուլում:
3 Սուֆիզմ – իսլամում մարգարեության քարոզումը:
4 Շիիզմ – Ղուրանի այլաբանական ընկալումը:

են լցված նրանց հանդեպ, քանզի նրանք «իսկական մուսուլման չեն», և որ նրանց գյուղերում չկան ո՛չ մզկիթներ, ո՛չ իմամներ, որ նրանց կանայք և աղջիկները սքողված չեն, և որ նրանք շատ չեն խմում ռակի:[5] Նրանց տանջում էր մի ողբերգական և արյունահեղ դեպք. 1978 թվականին[6] իրենց Կահրամանմարաշ գավառում, որտեղ բնակչության մեծամասնությունը քուրդ էր, սուննի գյուղացիները թուրք ֆաշիստական ծայրահեղ աջերի (տխրահռչակ Գորշ գայլերի) դրդմամբ կոտորեցին ալեվի գյուղացիներին, որոնց կասկածում էին «երեք Կ» հակակառավարական եռակազմ՝ կոմունիստական, քրդական և ղզլբաշների (Կարմիր գլուխներ)[7] կազմակերպությանը հարելու մեջ:

Մյուս կոտորածները տեղի ունեցան Մալաթիայում (1978), Կորումում (1980), Սիվասում (1993) և Ստամբուլում (1995):

Մեր նոր բարեկամների սոցիալական, ազգային և մշակութային ճնշումն ինձ թվում է մեկնման կետը եղավ արդարացված հետաքրքրության, որ աճում էր ալեվիզմի նկատմամբ:

Հետագայում, հանդիպումների քմահաճույքով ես ինքնուս տիրապետեցի թուրքերեն լեզվին, այդ պատճառով էլ զգացվում է Մալաթիայի[8] իմ սոսկալի առոգանությունը.

5 Ռակին ժողովրդի մեջ հանրամատչելիորեն անվանվող *առյուծի կաթը*՝ "aslan sütü", Թուրքիայի ազգային խմիչքն է, որը ստանում են խաղողից՝ ավելացնելով անիսոն. այն օգտագործում են ինչպես մաքուր վիճակում, այնպես էլ ջրով խառնած:
6 1978թ. դեկտեմբերի 24-ին և դրան հաջորդած օրերին Կահրամանմարաշ գավառը վերածվեց ալեվիների սպանության թատերաբեմի: Ըստ պաշտոնական տվյալների՝ զոհվել է 111 մարդ և 1000-ը ծանր վիրավորվել:
7 Ղզլբաշները (Կարմիր գլուխները) Օսմանյան կայսրության ընդդիմադիրներն են, սաֆաիդյան շիիզմի հետևորդները (1501 -1736թթ. Պարսկաստանում թագավորող արքայատոհմ): Նրանց ապստամբությունն արյան մեջ խեղդեց Սուլթան Սելիմ 1-ինը:
8 Մալաթիան թուրքական քաղաք է՝ նույնանուն գավառի

երկար տարիներ ես ապրել եմ քուրդ և զազա բարեկամներիս հետ: Ինձ բառացիորեն որդեգրել էր Բինգյոլի[9] քուրդ ալեվի մի ընտանիք, որի չորս դուստրերի համար ես դարձա *abi* (մեծ եղբայր) և ես հպարտ եմ դրա համար: Ես գնացի Թուրքիա՝ ալեվիներին հանդիպելու, նրանց որոշ քաղաքներում և բնակավայրերում, որտեղ մեծարվում են իրենց հոգևոր առաջնորդները, կենտրոնական Անատոլիայում՝ *Հաջի Բեկթաշում* և Անթալիայի մոտ գտնվող *Էլմալիում*՝ դարձյալ Քուրդիստանում:

Իմ հանդիպումները Ֆրանսիայում և Թուրքիայում ինձ դրդեցին խորացնել իմ գիտելիքները ալեվիզմի մասին, և տասը տարվա ընթացքում ես կարդացի և ուսումնասիրեցի այս թեմայով բազմաթիվ գրքեր և՛ թուրքերեն, և՛ ֆրանսերեն լեզուներով: Ստիպված ենք արձանագրել, որ ֆրանսերեն լեզվով այս թեման շոշափվել է միայն համալսարանական ուսումնասիրությունների շրջանակներում, և հասանելի աշխատություն չկա լայն հասարակության համար: Ուստի, նրանց մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը մեծ է երիտասարդ սերունդների՝ թուրք և քուրդ ալեվիների երեխաների մեջ, որոնք ծնվել են Ֆրանսիայում ներգաղթի հետևանքով: Ֆրանսիացիների հետաքրքրասիրությունն այս համայնքի նկատմամբ պահանջում է միայն սնուցում պատմական և սոցիոլոգիական լուսաբանմամբ, քանզի, ի վերջո, «արդյոք մարդկային էակը չէ՞ կարդացվելիք ամենամեծ գիրքը»:

Ծնվում են ալեվի, և քանի որ չես կարող դառնալ ալեվի, ուրեմն, ես այլ հավակնություն չեմ կարող ունենալ, բացի «հոգով ալեվի դառնալուց»: Որպես ինքնուս աշխատավոր, *Նանտի Ալեվիների Մշակութային կենտրոնի* (AKM-Nantes) անդամ՝ իմ միակ նպատակն է նպաստել, որ այստեղ լավագույնս ճանաչվի այդ մշակույթը:

«Ճշմարտությունը մարդու մեջ է. Թուրքիայի ալեվիները» ներառում է գրքի առաջին մասը, որը կազմում է այդ համայնքի, նրա հավատալիքների ու ծեսերի նկարագրությունը: Գրքի երկրորդ մասում ընթերցողը կկարողանա գտնել այդ սինկրետիզմի բազմաթիվ սկզբնաղբյուրները պատմության միջով՝ անտիկ աշխարհից մինչև 16-րդ դարը: Տեքստը հարստացված է թուրքերեն մեծաթիվ մեջբերումներով, որոնք ուղղված են երկլեզվյա ընթերցողներին և թարգմանված են իմ ջանքերով:

Էրվան Կերիվել

պրեֆեկտուրան: Մալաթիայի բնակչությունը հիմնականում քրդերն են:

9 Բինգյոլը թուրքական քաղաք է՝ նույնանուն գավառի պրեֆեկտուրան: Այստեղ բնակչության մեծամասնությունը քրդերն են:

1.

Ալեվիզմի բնակչությունը և աշխարհագրությունը

Ալեվիական բնակչության նկարագիրը կազմելը բարդ նախաձեռնություն է, որովհետև այն բախվում է երկու հիմական դժվարության. «ալեվիական հարցը» Թուրքիայում մեծ կարևորություն ունեցող քաղաքական խնդիր է և, ըստ ոմանց ընկալունակության, թուրքական հասարակության մեջ ալեվիզմի կշիռը նվազեցնելու կամ չափազանցնելու ձգտումները դժվարացնում են անկողմնակալ մոտեցումները:

Ավելին, արտաքսումը և հալածանքները, որոնց զոհն են դարձել այդ բնակիչները, նրանց երկար ժամանակ տարել են դեպի իրենց հավատների քողարկում: Թուրքիայի Հանրապետությունը (Turkiye Cumhuriyeti), որը սահմանադրությամբ աշխարհիկ պետություն է, իր քաղաքացիներից անձը հաստատող փաստաթուղթ է պահանջում (*Nüfüs Cüzdani*), որտեղ պետք է նշված լինի անձի կրոնական պատկանելիությունը: 2006 թվականից ի վեր անձը հաստատող փաստաթղթում թույլատրվում է դատարկ թողնել կրոնին վերաբերող սյունակը, բայց արգելված է նշել *ալեվի* բառը: Թույլատրվում են միայն *իսլամ* (սուննի մահմեդական), *ուղղափառ* (ուղղափառ քրիստոնյա), *էրմենի քրիստյան* (հայ քրիստոնյա), *սուրյանի* (Սիրիայի քրիստոնյա), *կելդանի* (քաղդեական քրիստոնյա), *նաստուրի* (նեստորական քրիստոնյա), *դոնմե* (սաբեյան հրեաներ): Ուրեմն Թուրքիայի բնակչության հիմական փոքրամասնությունը ճանաչում չունի: Իսկ ավելի վատն այն է, որ դեռ կան բազմաթիվ ալեվիներ, որոնց անձը

հաստատող փաստաթղթում նշված է *«իսլամ»*:

Վերջապես, 1950-ական թվականներից ի վեր տեղի ունեցող տնտեսական փոխակերպումները, գյուղացիների զանգվածային արտագաղթը, զինվորական տարբեր հեղաշրջումներից առաջացած քաղաքական ցնցումները (1960,1971 և 1980), դրանց հետևող ներքին և արտաքին վերաբնակեցումները խորապես փոխեցին ալեվիզմի «աշխարհագրությունը»:

Քանի՞ միլիոն

Թուրքիայի բնակչությունը ներկայումս 74 մլն է, և մոտավորապես 4,5 մլն Թուրքիայից ներգաղթյալներ ապրում են Եվրոպական Համայնքում:

Թուրքական *Միլլիյեթ* օրաթերթի 2007 թվականի մի հարցաթերթիկ հավաստում էր, որ Թուրքիայում կան հազիվ 5 մլն ալեվիներ, բայց հարցաթերթիկը կազմվել էր 48.000 մարդկանց հետ արված հարցման հիման վրա, որոնց հարցրել էին, թե որ համայնքին են պատկանում:

Երկրորդ թիվը առաջ քաշեց MGK-ը (Անվտանգության Ազգային Գերագույն Խորհուրդ), ըստ որի բնակչության 11 մլն հարցվածների 15% -ը ալեվիներ են:

Ըստ թուրք համալսարանական ժողովրդագիրների վիճակագրության՝ այս երկու արժեվորումներն էլ առարկելի են. նրանց կարծիքով այդ թիվն է 15-20 մլն, որը կազմում է բնակչության մոտ 20-25%-ը: Սա արդեն ստուգանմուշ է այս ասպարեզում: Բազմաթիվ ալեվիներ շարունակում են ծածկամտություն (*takiye*) ցուցաբերել՝ վախենալով հալածանքներից: Ուստի, քիչ հավանական է, որ համայնքի որևէ անդամ բարձրաձայն հայտարարի իր պատկանելիությունը, եթե, իհարկե, խոսքը մեծ մետրոպոլների և թաղամասերի մասին չէ, որտեղ բնակչության ճնշող մեծամասնությունն ալեվիներ են:

Ինչպես ճշգրտորեն ասել է Ռազիհե Գունդուզը. *«Իսկ ալեվիներ՞ը: Եվրոպական երկրներում է, որ ալեվիները կարողացել են ասել, թե ովքեր են իրենք եղել»:*[10]

Այս առումով համայնքի մոտ մեկ միլիոն անդամներ Եվրոպայում են, որից 600.000-ը՝ Գերմանիայում, 200.000-ը՝ Ֆրանսիայում, 140.000-ը՝ Բելգիայում և Հոլանդիայում, 50.000-ը՝ Սկանդինավյան երկրներում:[11]

Ինչ վերաբերում է գյուղացիների զանգվածային արտագաղթին, որը հասավ նաև ալեվիական համայնքներին, այն պետք է դիտարկվի երկու մակարդակներում՝ տնտեսական և քաղաքական: Թուրքական կապիտալիստական տնտեսության փոխա-կերպումը առաջացրեց աղքատացած գյուղական բնակչության շարժը դեպի մեծ քաղաքներ՝ ի խույզ կյանքի ու աշխատանքի ավելի լավ պայմանների: Այն առանձնապես ազդեց Կենտրոնական Անատոլիայի համայնքների վրա: Քրդական շրջաններում ապրող համայնքները ամենաշատը տուժեցին պատերազմի պատճառով, որ Թուրքիայի իշխանությունները մղում էին քրդերի և նրանց զինված դիմադրության շարժումների դեմ 1984-2000թթ.-ին: Ստամբուլը, Անկարան, Ադանան դարձան Թուրքիայի քրդական գավառներում ապրող բազմաթիվ ալեվիների ապաստարան: Օրինակ՝ Ստամբուլը, որի 13 միլիոն բնակչությունից 3 միլիոնն այժմ ալեվի են, Անկարայի 4 միլիոն բնակչությունից՝ 1,3 միլիոնն ալեվի են, իսկ Ադանայի 1,5 միլիոնից՝ մոտ 400.000-ը:[12]

---

10 Ռազիհե Գունդուզ, *Թուրքական արտագաղթը Ֆրանշ-Կոնտե*, Գիտաժողով, 2 մարտի 2010թ., Ֆրանշ-Կոնտեյի բաց համալսարան, Բըզանսոն:

11 Տվյալները տրամադրել է Ֆրանսիայի Ալեվիների Դաշնային Միությունը (FUAF-Fédération Union des Alévis de France):

12 Թուրքիայի Ալեվի-Բեկթաշի Միության (ABF –Federation Alevi Bektachi) տվյալները:

Բացի մեծ քաղաքներից, համայնքն արմատավորված է աշխարհագրական հիմնական չորս գոտիներում. Առաջին գոտին ընդգրկում է թուրքաբնակ Սիվաս, Տոկատ, Ամասիա և Չորում գավառները: Երկրորդ գոտին ընդգրկում է զազաներով բնակեցված Տունջելի և Էրզինկան գավառները: Երրորդ գոտին ընդգրկում է քրդերով բնակեցված Բինգյոլ, Էլազիղ, Էրզուրում, Մալաթիա, ԿահրամանՄարաշ և Ադիյաման գավառները: Վերջապես, չորրորդ գոտին, որն ավելի ցրված է, ընդգրկում է Մանիջա, Քյութահիա, Բուրսա, Մերսին, Ադանա, Բալիկեսիր, Սանակկալե, Անթալիա, Մուղլա, Այդին, Դենիզլի, Իզմիր գավառները, որտեղ ապրում են թուրքմենական ծագմամբ ալեվիները:

Թվերը, որոնք հաճախ ուռճացված են, գյուղական (ալեվիների գյուղերի թիվը) և բնակչության համամասնությունների ցուցիչներն են: Դրանք պետք է մեծ զգուշավորությամբ հրապարակվեն, որովհետև դրանք ժողովրդագրական վիճակագրության բացահայտողները չեն: Այսպես, Տունջելիի գավառը, որտեղ ենթադրում են ալեվիների բնակչության համամասնության 80%-ը, կազմված է 401 գյուղերից, որոնք ունեն ընդամենը 94.000 բնակիչ: Սիվասի գավառն իր հերթին բաղկացած է 530 ալեվիական գյուղերից, որոնք ունեն 755.000 բնակիչ: Տունջելիի գավառում 80% համամասնության մեջ կա 75.200 ալեվի բնակիչ, Սիվասի համար՝ 30% համամասնության մեջ 226.500 ալեվի: Նույն կերպ, եթե վերցնենք այնպիսի գավառ, ինչպիսին Անթալիան է, որտեղ համամասնությունը ստորադասվում է միջին ազգային համամասնությանը (15%), բաղկացած է 30 գավառից, բայց այնուամենայնիվ կա 296.700 ալեվի, համարյա այնքան, որքան Տունջելի և Սիվաս գավառները միասին վերցրած: Սա ապացուցում է, որ ալեվիական բնակչության համամասնական մեծամասնությունը համեմատական չէ բնակչության խտությանը, գյուղն այլևս ալեվիների բնակության գլխավոր վայրը չէ, նույնիսկ եթե նրանց հարաբերությունը հոգևոր և զգացական տեսակետից դեռևս տարբերակված չէ: Հետևյալ աղյուսակը թույլ է տալիս քարտեզով զուգահեռաբար ուսումնասիրել Թուրքիայի ալեվիական բնակչության աշխարհագրական արմատավորման լուրջ պատկերը: Խոսքը վերաբերում է մեծ մետրոպոլների և համայնքի բնակեցման շրջանների մի նմուշօրինակ ցուցակին.

Գավառ	Գյուղերի թիվը	Բնակչության համամասնությունները	Ալեվի բնակիչների թիվը	Գոտու մեծամասնական բնակչությունը
Բինգյոլ	146	15%	38 200	քուրդ
Տունջելի	401	80%	75 200	զազա
Էրզինջան	120	20%	45 000	զազա
Էլազիղ	61	15%	82 800	քուրդ
Մալաթիա	105	30%	256 000	քուրդ
Կահրաման Մարաշ	160	15%	150 000	քուրդ
Ադիյաման	83	20%	118 000	քուրդ
Սիվաս	530	30%	226 500	թուրք
Չորում	211	45%	240 000	թուրք
Յոզգաթ	81	10%	68 300	թուրք
Անկարա	37	20%	1 300 000	թուրք
Ադանա	39	30%	600 000	թուրք
Հաթայ	76	50%	700 000	արաբ
Անթալիա	30	10%	296 700	թուրք
Իզմիր	33	15%	505 000	թուրք
Բալըքեսիր	53	10%	115 000	թուրք
Մերսին	37	35%	584 500	թուրք
Տոքաթ	241	20%	165 600	թուրք
Ստամբուլ	-	25%	3 250 000	թուրք

Տես հաջորդ էջի քարտեզը



Ալեվիական բնակչությունը և աշխարհագրությունը

Գյուղեր (Քյոյլեր) և սերունդներ (Օջակլար)

Մինչև 20-րդ դարի կեսը համայնքների ավանդական տարածքը եղել է գյուղական տարածությունը և գյուղը (թուրքերեն *քյոյ*): Մշակույթը և ծեսերն այնտեղ պաշտպանված են եղել ճնշումներից և բռնի միաձուլման փորձերից: Գտնվելով բարձրավանդակների և լեռների վրա՝ ալեվիական գյուղերը գոյատևում էին գյուղատնտեսության, անասնապահության և պարենաբույսերի մշակման շնորհիվ: Այդ «մշակութային անկախության» գինը ահռելի աղքատությունն էր և պետական ներդրումների բացակայությունը ենթակառուցվածքներում (ճանապարհներ, հիվանդանոցներ, դպրոցներ և այլն): Ավելին, արտաքսումը, որին ենթարկվեցին ալեվիները, երկար ժամանակ նրանց զրկեց սոցիալական առաջխաղացումից, մասնավորապես պետական ծառայությունից: Այսօր համայնքի մեկ քառորդը շարունակում է ապրել այդ գյուղերում: Բնակչությունն այնտեղ նվազող է և ծերացող: Բայց և այնպես, գյուղը շարունակում է նվիրվածություն ցուցաբերել իր արմատական մշակույթին, և ալեվիները կանոնավոր այցելություններ են անում իրենց քյոյերը (գյուղերը) և որոշ ժամանակ անցկացնում այնտեղ: Նմանատիպ գյուղը հեշտ է ճանաչվում մզկիթի ակնհայտ բացակայության պատճառով: Նրանք, ովքեր ճանապարհորդել են Թուրքիայի գյուղական տարածքներում, նկատել են, որ սուննի մահմեդական գյուղերը, որքան էլ փոքր լինեն, բոլորն անխտիր մզկիթ ունեն: Այն բացակայում է ալեվիների մոտ, և նույնիսկ երբ թուրքական կառավարությունը այնտեղ հարկադրաբար կառուցել է նման կրոնական շինություններ, ալեվիները լքել են գյուղը կամ դրանք օգտագործել որպես անասնակերի պահեստ: Որոշ շրջաններում ձուլման փորձերը թուր-

քական պետությանը ստիպել են ամրապնդել սուննի մահմեդականների դիրքերն այդ գյուղերում, ուստի դրանց կոչում էին *«մելեզ»* (խառը կամ խառնված), սակայն այնտեղ հստակ կարելի է տարբերել համայնքների բաժանվածությունը:

Թուրքիայում այսօր գոյություն ունեն ալեվիների մոտավորապես 3500 համասեռ գյուղեր՝ ցրված գրեթե բոլոր գավառներով: Այդ գյուղերի մեծամասնությունը գտնվում է բնակեցման 4 հիմնական գոտիներում: Ահա դրանց աղյուսակը.

1-ին գոտի

Գավառներ՝ Սիվաս, Տոկատ, Ամասիա, Չորում, Անկարա, Յոզգատ, Նեվշեհիր, Կայսերի. 1196 գյուղ.

Սիվաս - (Սիվաս, Իմռանլի, Ակինջիլար, Գյոլովա, Սուշեհռի, Դիվրիղի, Յիլդիզելի, Հաֆիկ, Կանգալ, Սարիկիշլա, Ալտինյայլա, Քյույլերի հիզար, Գեմեռեկ, Գյուրուն, Ուլաշ, Զառա). 530 գյուղ:

Տոկատ - (Տոկատ, Ալմուշ, Արտովա, Բաշչիֆտլիկ, Էրբաա, Նիկշար, Պազառ, Ռեզադիյե, Սուլուսառայ, Թուռհալ, Յեշիլյուռթ). 180 գյուղ:

Ամասիա – (Ամասիա, Մերզիֆոն, Գյույնյուսեկ, Համամյուզյու, Սուլուռվա, Գյումյուշհաջիքյոյ). 111 գյուղ:

Չորում - (Չորում, Ալաջա, Մեջիթյոզյու, Սունգուռլու, Օրտակյոյ, Իսկիլիպ, Բոգազկալե, Ուղուրլուդաղ, Լաչին, Դոդուրգա, Կարգի, Բայաթ). 210 գյուղ:

Անկարա- (Չուբուկ, Կալեջիկ, Բեյպազարի, Գյոլբաշի, Ալտինդաղ, Հայմանա). 37 գյուղ:

Յոզգատ - (Յոզգատ, Սորգուն, Ակդաղմադենի, Չեկերեկ, Այդինջիկ, Չայիրալան, Սեֆաաթլի, Կադիշեհրի, Յերկյոյ). 84 գյուղ:

Նեվշեհիր - (Հաջի Բեկթաշ). 9 գյուղ:

Կայսերի - (Կայսերի, Սարիզ, Փինարբաշի, Սարիոդլան, Թոմարզա, Դեվելի, Ֆելահիյե, Յահյալը). 35 գյուղ:

Սիվաս գավառի ալեվիների բնակեցումը



Չորում գավառի ալեվիների բնակեցումը



2-րդ գոտի

Տունջելի և Էրզինջան գավառները. 557 գյուղ.

Տունջելի - (Տունջելի, Չեմիշգեզեկ, Մազգիրտ, Պերտեկ, Պյուլումյուր, Օվաջիկ, Նազիմիյե, Հոզատ). 436 գյուղ

Էրզինջան – (Էրզինջան, Բաշկյոյ, Կյուչյուկ վե Բյույուկ Օտլուկբելի, Իլիչ, Տերջան). 121 գյուղ

3-րդ գոտի

Բինգյոլ, Մարաշ, Մուշ, Մալաթիա, Էրզուրում, Էլազիղ, Գազիանտեպ, Ադիյաման. 722 գյուղ.

Բինգյոլ- (Բինգյոլ, Յայլա Դերե, Կարլըովա, Յեդի Սու, Կիղի, Ադակլը). 146 գյուղ

Կահրամանմարաշ – (Մարաշ, Պազարջըկ, Էլբիստան, Գյոկսուն, Աֆսին, Նուրիակ, Չագլայանջերիտ, Էկինյոզյու, Թյուրկողլու). 150 գյուղ

Մուշ – (Մուշ և Վարտո). 38 գյուղ

Մալաթիա – (Հեկիմհան, Արգուվան, Արաբկիր, Պյոտյուրգե, Դարենդերե, Կուլունջակ, Յեշիլյուրտ, Յազըհան, Ակչադաղ, Դոգանշեհիր). 86 գյուղ

Էրզուրում – (Սենկայա, Աշկալե, Չատ, Հինիս, Թեկման, Կարայազի, Կյոպրյուկյոյ, Օլուր, Պաշինլեր, Հորասան). 112 գյուղ

Էլազիղ – (Էլազիղ, Ագըն, Բաշկիլ, Կարակոչան, Կեբան, Կովանջըլար). 71 գյուղ

Գազիանտեպ – (Յավուզելի, Արաբան, Նուրդագի, Նիզիպ, Իսլահիյե, Օգուզելի, Սեհինբեշ). 36 գյուղ

Ադիյաման – (Ադըյաման, Բեսնի, Գյոլբաշը, Չելիկհան, Կահթա). 83 գյուղ

Բինգյոլ գավառի ալեվիների բնակեցումը



ԿահրամանՄարաշ գավառի ալեվիների բնակեցումը



4-րդ գոտի

Մանիսա, Քութահյա, Բուրսա, Մերսին, Ադանա, Բալիկեսիր, Չանակկալե, Անթալիա, Մուղլա, Այդին, Դենիզլի , Իզմիր- 323 գյուղ.

Մանիսա - (Մանիսա, Սալիհի, Թուրգութլու, Ակհիսար, Կուլա, Սարուհանլի, Սոմա, Դեմիրիջի, Ալեշեհիր, Սարըգյոլ). 42 գյուղ

Կյուտահյա – (Կյուտահյա, Ալտինտաշ, Դումլուպընար, Տավշանլը, Դոմանիչ, Էմետ, Հիսարջըկ, Գեդիզ). 34 գյուղ

Բուրսա – (Մուսթաֆաքեմալփաշա, Ինեգյոլ, Օսմանգազի, Գեմլիկ, Օրհանելի,

Խելեշ, Յենիշեհիր, Նիլյուֆեր, Իզնիկ, Գուրսու, Յըլդըրըմ, Օրհանգազի, Բյույուկորհան). 29 գյուղ

Մերսին – (Իչել, Մութ, Թարսուս, Էրդեմլի, Սիլիֆկե, Բոզյազի, Անամուր). 37 գյուղ

Ադանա – (Ջեյհան, Թուֆանբեյլի, Յուրեհիր, Յումուրտալըկ, Կարատաշ, Սեյհան, Ֆեքե, Կոզան, Պոզանտի, Կարահիսալի, Իմամոգլու). 39 գյուղ

Բալըկեսիր – (Բալըկեսիր, Էդրեմիտ, Բիղադիչ, Բուրհանիյե, Ղյոնեն, Մանիաս, Քեպսուտ, Սինդիրի, Սուսուրլուկ, Դուրսունբեյ, Սավաշտեպե, Բալյա, Իվրինդի, Բանդըրմա). 53 գյուղ

Չանաքկալե – (Չանաքկալե). 24 գյուղ

Անտալիա – (Անտալիա, Ֆինիկե, Էլմալը, Ալանիա, Քեմեր, Քորկուտելի, Քումլուջա, Մանավգաթ, Սերիկ). 30 գյուղ

Մուղլա – (Օրտաջա, Ֆեթհիյե, Ուլա, Միլաս, Քյոյջեիզ, Բոդրում). 19 գյուղ

Այդըն – (Այդըն, Ղերմենջիկ, Չինե, Ինջիրլիովա, Սյոկե, Բոզդոդան, Քարաջասու, Կույուջակ, Նազիլի). 28 գյուղ

Դենիզլի – (Դենիզլի, Սարայխյոյ, Հոնազ, Աջիպայամ, Չիվրիլ). 13 գյուղ

Իզմիր – (Խինիխ, Բերգամա, Քեմալփաշա, Քարշըյակա, Ուրլա, Չիլի, Մենեմեն, Թորբալի, Դիքիլի, Նարլըդերե, Քոնաք, Բայընդըր, Բորնովա). 33 գյուղ

Կապը գյուղի հետ այնքան ուժեղ է, որ հոգևոր տարածք է համարվում ալեվի *Դեդեի՝* համայնքի ղեկավարի նստավայրը, և նմանապես «հոգևոր ազգակցության» վայրը՝ *Օջակը:* Վերջինս աշխարհագրական և պատմական կենտրոն է, որին կապված են ալեվիները: Այն սկզբնական *Դեդեի* սերնդային նստավայրն է, որին կապված է տվյալ համայնքը, և որին նա շարունակում է հետևել՝ դասավանդումներին և հրահանգներին՝ չնայած երբեմն աշխարհագրական հեռավորությանը:

Յուրաքանչյուր ալեվի առաջին հերթին ճանաչվում է իր կամ իր ընտանիքի ծագումնաբանական գյուղով, որովետև այն հոգևոր ձևով կապված է Օջակին, այսինքն՝ Դեդեի մի սերնդին:

Թուրք համալսարանական Ալի Յամանը, որն իր թեզը գրել է ալեվիների ազգակցության վերաբերյալ, ասում է. *«Սոցիալապես կարգուկանոնը, որը բխում է Օջակի պատկանելիությունից, առաջնային կարևորություն ունի: Օջակները կրում են կրոնական սրբերի անուններ, որոնք ըստ ավանդության Մուհամմեդ մարգարեի*

սերունդներն են Իմամ Ալիի գծով: Ժամանակի ընթացքում Օջակները սահմանակարգվել են այդ սուրբ դերվիշների սերունդներից, որոնք կոչվել են Օջակզադե, մի բան, որ թույլ է տվել սահմանափակել Դեդե հասկացությունը Օջակզադե ընտանիքների անդամների պատկերացումներում:[13]

Դեդեների այս տոհմերը կա՛մ կապված են Նեվշեհիրի մոտ գտնվող *Հաջի Բեկթաշի* կենտրոնական մենաստանի հետ, կա՛մ համարվում են անկախ:

Հետևյալ ցուցակը ներկայացնում է Թուրքիայի ալեվիների ամենակարևոր *Օջակներին* (դեռ շատ ուրիշներն էլ գոյություն ունեն) և դրանց հետ կապվող որոշ գյուղերի բնակեցման գոտիները:

Օջակ Կուրեյշան (Թունջելի, Պյուլյումյուր, Նազիմիյե, Էրզինջան, Մազգիրտ, Վարտո, Բինգյոլ, Քարլիովա, Կիգի, Մալթիա, Էլազիղ, Մարաշ, Օվաջիկ)

Օջակ Բաբա Մանսուր (Թունջելի, Մազղիրտ, Էրզինջան, Պյուլյումյուր, Սիվաս)

Օջակ Պիր Սուլթան (Սիվաս, Պյուլյումյուր, Թունջելի, Չորում)

Օջակ Ագու Իչեն (Էլազիղ, Մալաթիա, Հոզաթ, Թունջելի, Էրզինջան, Սիվաս, Ադիյաման)

Օջակ Սարի Սալթուկ (Հոզաթ, Օվաջիկ)

Օջակ Յուրյան Հըզըր (Թունջելի, Էլազիղ, Հոզաթ, Էրզինջան, Էրզուրում, Ադիյաման, Մարաշ)

Օջակ Դերվիշ Ջեմալ (Օվաջիկ, Հոզաթ, Էրզինջան, Պյուլյումյուր, Թերջան)

Օջակ Սեյյիդ Սեըֆի Սաբուն (Էլազիղ, Նազիմիյե, Մազղիրտ, Բինգյոլ)

Օջակ Սուլթան Սինեմիլ (Պազարջըկ, Էլբիստան, Մարաշ, Էլազիղ, Էրզինջան, Մալաթիա, Արգուվան, Ադյաման)

Օջակ Շեյի Ահմետ (Մազղիրտ, Տերջան, Էլազիղ)

Օջակ Հըդըր Աբդալ (Էրզինջան, Մալաթիա, Սիվաս, Էլազիղ)

Օջակ Ալի Աբբաս (Թունջելի, Էրզինջան, Օվաջըկ, Էլազիղ)

Օջակ Իմամ Ռիզա (Պերտեկ, Էլազիղ, Սիվաս, Մալաթիա)

Օջակ Շահ Իբրահիմ Վելի (Մալաթիա, Արգուվան)

Օջակ Շեյի Հասան (Մալաթիա, Արաբկիր, Թունջելի, Էրզինջան)

Օջակ Սեյյիդ Բաբա (Սիվաս, Դիվիրի)

Օջակ Ալի Բաբա (Սիվաս, Դիվիրի, Սամսուն)

Օջակ Կարա Պիրբաղ (Սիվաս, Դիվիրի)

Օջակ Պիրի Բաբա (Ամասյա, Մերզիֆոն)

Օջակ Սեյյիդ Կալենդեր Վելի (Անկարա)

Օջակ Հաջի Ալի Թուրաբի (Չանկրիի, Անկարա, Քալեջիկ, Չուբուկ, Կըրըկկալե, Բուրսա, Ինեգյոլ, Էսկիշեհիր)

Օջակ Մեհմետ Աբդալ (Չանկրիի, Անկարա, Չուբուկ)

Օջակ Հաջի Մուրատ Վելի (Չանկրիի, Անկարա, Չուբուկ)

Օջակ Ալի Սեյդի (Չորում, Ալաջա)

Օջակ Մեհմետ Դեդե (Չորում, Դոդուրգա)

Օջակ Ջեմալ Աբդալ (Մզղիրտ, Թունջելի, Էրզինջան, Ղյումյուշշհանե)

Օջալ Իմամ Մուսա Կազիմ (Էլազիղ, Էրզուրում, Գազիանտեպ)

Օջակ Կոզա Լեշկեր (Էրզինջան)

Օջակ Բատտալ Գազի (Էսկիշեհիր, Ամասիա, Մերզիֆոն)

Օջակ Վելի Բաբա (Իսպարտա)

Օջակ Համզա Բաբա (Իզմիր)

Օջակ Հասան Դեդե (Կըրըկկալե)

13 Ali Yaman, *Kizilbash Alevi Dedes*, 2006.

Օջակ Սարի Իսմաիլ Սուլթան (Քյութահյա)
Օջակ Իմամ Զեյնել Աբիդին (Մալաթիա, Արգուվան)
Օջակ Գարիպ Մուսա (Սիվաս, Դիվիրի)
Օջակ Կոզա Հայդար (Սիվաս, Դիվիրի)
Օջակ Քեջեջի Բաբա (Տոկաթ, Էրբա)
Օջակ Կուլ Հիմմեթ (Տոկաթ, Ալմուշ)
Օջակ Արզուման (Մերսին, Տարսուս, Յոզգատ)

Թուրք, քուրդ և զազա ալեվիները գտնվում են այդ Օջակներում: *Յանյատըրի* (Ադանա) և *Էմիրբեյլիի* Օջակները կապվում են Տահտաջի ալեվիներին, իսկ *Քյոսե Սյուլեյմանի* (Բալիքեսիր) Օջակները Չեպնիի ալեվիներին, այսինքն՝ ծագումով թուրքմեն ալեվիներին:

Էթնիկական և լեզվական խճանկար

Թուրքիայի ալեվիները սերում են Անատոլիայից. ժողովուրդների մի խճանկար, որի պատմական բնակեցումը շատ թե քիչ հին է: Դարերի ընթացքում բնակչությունների խաչասերումը հանգել է այժմյան ուրվապատկերին:

Դեռ ավելին, ստեղծվելով որպես նորընծա քաղաքացիական պետություն (1930-ական թթ.), շատ դժվար է ստույգ ճանաչել մարդկանց մեծամասնության ընտանեկան և աշխարհագրական ծագումը: Թուրքիայի ճշմարտացի էթնիկական խճանկարը ստանալու համար կան երկյուղելու խոչնդոտներ. դրանք առաջին հերթին լեզվական տարածքներն են և ավանդական կյանքի ձևերը: Օսմանյան Կայսրության անկումը և Թուրքիայի երիտասարդ Հանրապետության առաջին քառասային քայլերը ուղեկցվել են բնակչության աննախադեպ ցնցումներով: Այսպես՝ 1915 թվականին 1,5 միլիոն հայերի ծրագրված եղեռնը, Հունաստանի և Թուրքիայի բնակիչների զանգվածային

փոխանակությունը՝ 1923 թվականի Լոզանի պայմանագրի հետևանքը (1,3 մլն հույն վտարվեց Թուրքիայից, 385.000 թուրք վտարվեց Հունաստանից), և քրդերի ճնշումը 1925-1938 թվականներին արմատապես փոխեցին ալեվիներով բնակեցված գոտիների էթնիկական կառուցվածքը: Քուրդ և զազա ալեվիները տեսան իրենց հարևան հայ քրիստոնյա գյուղերի անհետացումը, որոնց հետ նրանք գերազանց հարաբերություններ ունեին: Դրանք փոխարինվեցին սուննիթ թուրքերի նորաբնակ բնակեցումներով՝ 1934թ. ընդունված «Պարտադիր գաղութաբնակեցման մասին օրենքի» հիմքով, որը լրացրել էր 1932թ. ընդունված «Քրդերի վտարման և ցրման մասին օրենքը», որը պարտադրում էր քրդերի զանգվածային վտարում դեպի Կենտրոնական Անատոլիա: 1938 թվականին Դերսիմ գավառի գլխին փուլ եկած ճնշամիջոցները 40.000 զոհերի և տասնյակ հազարավոր վտարանդիների պատճառ դարձան: Այսօր ալեվիները պատկանում են բազմաթիվ լեզվական խմբերի, որոնք համապատասխանում են իրենց էթնիկական ինքնությանը:

Նրանց մեծամասնության, այսինքն մոտ 60%-ի մայրենի լեզուն թուրքերենն է Կենտրոնական Անատոլիայի 1-ին գոտու նախապես թվարկված գավառներում՝ այն է՝ Սիվաս, Թոկատ, Ամասիա, Չորում, Անկարա, Յոզգաթ, Նեվշեհիր, Կայսերի: Դրանք 14-րդ դարում հաստատված թուրքմենական նստակյաց ցեղերի սերունդներն են:

Այս խմբին հարկ է ավելացնել նաև Տահտաջիի և Չեպնիի կիսաքոչվոր ալեվիական թուրքմենների 10%-ը, որոնք ապրում են գլխավորապես Թուրքիայի արևմտյան հատվածում: Վերջիններս նույնպես թրքախոս են, չնայած նրանց մեջ կան որոշակի տարբերություններ՝ մասնավորապես պաշտամունքին վերաբերող արարողությունների իրենց կիրառման

շրջանակում: Այսպես, Չեպնիներն իրենց համայնքային ղեկավարին *Դեդե*, *Բաբա* կամ *Պիր* չեն կոչում, ինչպես մյուս ալեվիները, այլ *Չյուլեպեն*: Նրանք իրար չեն կոչում *Ջանլար* (Հոգիներ), ինչպես առհասարակ ընդունված է ալեվիական համայնքում, այլ՝ *Էրնիշլեր*: Վերջապես, նրանք համայնքային ժողովը բոլորի պես *Չեմ* չեն անվանում, այլ՝ *Յուրյուլյու*:[14] Նրանք հիմնականում բնակեցված են 4-րդ գոտու գավառներում՝ Մանիսա, Կյութահյա, Բուրսա, Մեռսին, Ադանա, Բալիկեսիր, Չանակկալե, Անթալիա, Մյուղլա, Այդին, Դենիզլի, Իզմիր: Թուրքիայի ալեվիների 20%-ը քուրդ են, ովքեր խոսում են կուրմանսու լեզվով: Վերջիններս բնակվում են Բինգյոլ, Մարաշ, Մուշ, Մալաթիա, Էրզրում, Էլազիղ , Գազիանտեպ, Ադիյաման գավառներում, որոնք մենք անվանել ենք բնակեցման 3-րդ գոտի: Նրանք քրդական ցեղերի և կլանների սերունդներն են, որոնք այս տարածքներում հաստատվել են Ք.ա. 1-ին դարից ի վեր և որոնք հայտնի էին Մեդ (*Մեդլեր*) անունով:

Վերջապես, ալեվիների 10%-ը (2-րդ գոտի, որն ընդգրկում է Տունջելի և Երզինջան գավառները) զազաներ են, ովքեր խոսում են պարսկական հին լեզվով, որը տարբերվում է քրդերենից: Նրանք պարսկական հին ժողովրդի՝ Դաիլամիտեի (*Դիմլի*) սերունդներն են, որոնք Դերսիմի լեռներում հաստատվել են Ք.ծ. հետո 8-րդ դարում՝ արաբների նվաճումից հետո:

Զազաները միակն են, որ իրենց մայրենի լեզուն օգտագործում են իրենց համայնքային արարողությունների ժամանակ, ի հակադրություն մյուս ալեվիների, ովքեր անփոփոխ գործածում են թուրքերենը: Հարկ է նաև նշել, որ այս գոտում գոյություն են ունեցել հայ ալեվիական գյուղեր և քրիստոնյա/ալեվիների[15] խառնածին գյուղեր:

14 Efdal Sevinçli, *Özel/Gizli bir dil: çepni dili*, Journal of Yasar University, 2009.

15 Raymond Kevorkian, Paul Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du génocide*, Arhis, Paris, 1992.

Հաթայ գավառի նուսայրիսները (ավելի քան 700.000 մարդ) արաբախոս են, որոնք կապված են Սիրիայի ալաուիտների հետ: Նրանց հավատքը շատ մոտ է ալեվիների հավատքին, և նրանք հաճախ են միավորվել վերջիններիս հետ: Թուրքիայի Հանրապետության սահմաններից դուրս հարկ է նշել ևս 3 խումբ, որոնք կապված են ալեվիզմի հետ:

Ալիանիների համայնքը Բուլղարիայում՝ 53.000 մարդ, ովքեր ապրում են Դելիորման (հյուսիս-արևելք) և Ռոդոպների (հարավ) շրջաններում:

Շաբակների համայնքը Իրաքում՝ 60.000 մարդ, Մոսյուլի քրդական գավառում:

Ահլ-է-Հաքքերի համայնքը Իրանում՝ 1 միլիոն, Կերմանշահի գավառում և երկրի արևմուտքում: Այս պատկերն ամբողջական չէր լինի, եթե չնշվեր տնտեսական և սոցիալական արտագաղթը դեպի Արևմտյան Եվրոպա: Այսպես, տասնյակ հազարավոր երիտասարդ ալեվիներ են ծնվել Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Բելգիայում, Մեծ Բրիտանիայում, Հոլանդիայում և ընդունել տվյալ երկրի քաղաքացիություն: Եթե ծնողների մեծ մասը նախընտրել է պահպանել իրենց թուրք ազգությունը, այս վերջին տարիներին քաղաքացիության ընդունման հստակ միտում է զգացվում, որը տանում է դեպի վերջնական բնակեցում Եվրոպական Ընկերակցությունում:


COMPOSITION ETHNIQUE DES
POPULATIONS ALEVIES EN TURQUIE
Osmanlı alevis
Alevis tahtacı/yörük (turkmènes)
Alevis turcs
Alevis kurdes
Alevis zazas
Çepni
Tahtacı
Ankara
Tarsus
Turcs
Zazas
Kurdes
Gaziantep
Adana
Mersin
Antalya
Tahtacı
Çepni
Çepni
Tahtacı
Tahtacı
Tarsus
Tahtacı
Tahtacı
Tahtacı

դեպի Մեքքա:

Այս հինգ հիմնասյուներից ոչ մեկին չեն հետևում ալեվիները, և սա կրկին գալիս է ասելու, որ նրանք մուսուլման չեն:

Գաղափարախոսություն (Şehadet-Շեհադեթ)

Գաղափարախոսությունը յուրաքանչյուր մուսուլմանի համար Աստծո եզակիությունը հաստատելու և Մուհամմեդին իրենց ավետաբեր, մարգարե ճանաչելու համար է: ("Achhadou an lâ ilaha illallah, washadou ana muhammadun rasûlullâhi".) «Ես վկայում եմ, որ Աստծուց բացի չկա ուրիշ աստվածություն, և որ Մուհամմեդը նրա ավետաբերն է»:

Մուսուլմանների համար Աստված (*Allah-Ալլահ*) միակն է, և նրա ավետաբեր Մուհամմեդը Աստծո խոսքը վերագրանցել է Ղուրանում (Kur'an): Ղուրանում ասվում է, որ «Աստծուց դուրս այլ Աստված չկա», իսկ անհավատները նրանք են, ովքեր ասում են. «Աստված երրորդն է երեքից, մինչդեռ չկա ուրիշ Աստված բացի միակ Աստծուց»: Իսլամին բնորոշ այս հասկացությունը մահմեդականների կողմից քրիստոնյաներին ուղղված գլխավոր հանդիմանությունն է. Երրորդություն, Աստված գոյություն ունի երեք էակների մեջ:

Ալեվիզմը հիմված է «երեքի» *(Üçler- Յուշլեր)* հավատի վրա՝ Հակկ-Ալլահ (Աստվածություն), Մուհամմեդ (Մարգարեություն), Ալի (Սրբություն):[18] Ալեվիների գաղափարախոսությունն է *"Eshhedu enla ilahe Illallah, eshhedu enne Muhammed-un Rasulallah, Eshhedu enne Alyy-un Waliyulla"* «Ես վկայում եմ, որ Աստծուց բացի այլ աստված չկա, որ Մուհամմեդը նրա ավետաբերն է, վկայում եմ, որ Ալին Աստծո ներկայացուցիչն է»: Աստված՝ միակը, շատ հաճախ նշվում է որպես «*Հակկ-Ալլահ-Մուհամեդ-Ալի*», որը մուսուլմանների համար դիտվում է որպես մեծ հերետիկոսություն:

Մարգարեությունը փակված լինելով՝ Սրբությունը (*Ալի*) շարունակում է ներկա լինել ժամանակի մեջ: Ալին Աստծո սուրբն է՝ նրա ընկերը:

Ճշմարիտը (*Hakk*)՝ Աստված՝ աննյութական աստվածությունը, ներկա է աշխարհի նյութականության մեջ, ո՛չ երկնքում և ո՛չ էլ դրախտում: Աստված փնտրելն աշխարհից դուրս դատարկ բան է, քանզի նա մարդու մեջ կատարելապես աստվածության դրսևորում է: Ալին խոսող Ղուրան է (*Kur'an'i Natik*)՝ աստվածային գեղեցկություն, որի արտացոլանքը մարդկային գեղեցկությունն է: Ահա թե ինչու ալեվիները համարում են, որ «կարդալու ամենամեծ գիրքը մարդկային էակն է» (Okunacak en büyük Kitap insandir):

Իսլամական աղոթքը (Նամազ)

Իսլամական աղոթքը՝ իսլամի հինգ հենասյուներից երկրորդը, ամենօրյա պարտականություն է յուրաքանչյուր մուսուլմանի համար, ով պարտավորվում է անել հինգ աղոթք: Աղոթել կարելի է ամենուր, թեև տղամարդկանց ավելի շատ խորհուրդ է տրվում հինգ կանոնական աղոթքներն անել խմբով՝ մզկիթում: Աղոթքն անում են շրջված դեպի *Qibla*-ն (աղոթքի ուղղությունը), որը Մեքքայի *Kaaba*[19] -ն է: Դա աստվածային կամքին ենթարկվելու

18 Իմամ Ալի (600-661), իսլամի չորրորդ խալիֆը և առաջին իմամը շիիթների համար: Նա եղել է Մուհամմեդի հովանավորյալը, զարմիկը, հոգևոր եղբայրը, աշակերտը և փեսան՝ նրա դուստր Ֆաթիմայի հետ ամուսնանալուց հետո:

19 *Kaaba* – Կաաբան մի մեծ սև խորանարդ է «Սուրբ Մզկիթի» խորքում, Մեքքայում: Դատարկ Կաաբան խորհրդանշում է, որ այնտեղ չի կարող լինել պաշտամունքի առարկա հավատացյալի համար: Այն խորհրդանշում է մուսուլմանների միասնությունը, ովքեր պաշտում են միակ Աստծուն և ներկայացնում է այն վայրը, դեպի ուր

գործողություն է:

Համաձայն ալեվիզմի՝ Աստծուն չեն ենթարկվում վախից: Աստծո և մարդկային էակների միջև միակ կապը Սերն է: *Qibla*-ն և *Kaaba*-ն նյութականացված են մարդկային էակի և նրա սրտի կողմից. «Սերը մեր կրոնն է, մեր *Kaaba*-ն՝ մարդկային էակը» (*Sevgi bizim dinimizdir, bizim Kabemiz insandir*): Չարի գաղափարը գալիս է ոչ թե Աստծուց, այլ աստվածային երևույթի՝ մարդկային էակի մեջ սիրո բացակայությունից: Այդ իմաստով մարդկային էակը սրբացված է և խոնարհվել կարելի է միայն մարդկային դեմքի առջև: Մարդկային էակին՝ երկրի վրա աստվածային երևույթին, լավագույնը մատուցելով են մարդիկ մոտենում Աստծուն: Ուրիշների նկատմամբ սիրով և հարգանքով լցված, մաքրվելով իր իսկ բացասական բնազդներից, ալեվին քայլում է դեպի «կատարելություն» (*Insan-i Kamil*): Մարդկային էակի դեղատոմսը լավություն անելն է, սակայն նա չպետք է այն անի հաշվարկով՝ դրախտում իր տեղն ունենալու համար, քանի որ դրախտն արդեն երկրի վրա է՝ այս աշխարհում մարդու կողմից իր շուրջն արված ամեն լավ արարքի մեջ:

Այսպիսով, ալեվիզմն անտեսում է ինչպես իսլամի հինգ ամենօրյա աղոթքները, այնպես էլ մզկիթը՝ որպես աղոթքի վայր: Բացի այն փաստից, որ դա Աստծո հետ հաղորդակցվելու համար ճիշտ վայր չէ, հիշատակվում է նաև, որ Ալին սպանվել է մզկիթում: Ալեվիները խոնարհվում են միայն իրենց ծիսական հավաքների ժամանակ, որ անվանում են *Այն-ի-ջեմ-Ayn-i-cem*: Այդ համայնական հավաքների ժամանակ խոնարհումը կատարվում է ոչ թե հատակին, այլ մարդկային էակին՝ ճակատը հատակին, ձախ ձեռքն աջ ձեռքի տակ, համբուրելով ցուցամատը երեք անգամ (Աղոթք Ժողովրդին), կամ էլ կանգնած, գլուխը

ուղղորդվում է աղոթքը:

խոնարհած և ձեռքը սրտին (Աստծո և 12 իմամների[20] հանդեպ սիրո աղոթք): Նա, ով խոնարհվում է վախից կամ բարերարության սպասումով, համարվում է անհավատ (*քաֆիր-kafir*), քանի որ խոնարհման նպատակը կարող է լինել միայն Աստծուն, այսինքն՝ ճշմարտությանն ու սիրուն հասնելը:

Ռամադանի պահքը (Ռամազան)

Ռամազանի պահքը Ալլահի մասին խորհրդածության և պաշտամունքի պահն է: Այն անձնական և խորը հավատի համար պարտադիր գործողություն է, որի միջոցով մուսուլմանները փնտրում են գիտակցություն, որը ծնվում է Ալլահի հետ նրանց մերձեցումից: Դրա նպատակը ներսում հոգին մաքրելն ու ամեն տեսակ վատից ազատելն է: Այն նաև թույլ է տալիս մուսուլմաններին իրականացնել ինքնատիրապետում, սեփական վերահսկողություն, զոհաբերություն ու կարեկցանք նրանց նկատմամբ, ովքեր պակաս հաջողակ են՝ այսպիսով քաջալերելով մեծահոգության և գթասրտության դրսևորումները:

Ալեվիզմը համարում է, որ կատարելության մշտական որոնումը Ճշմարիտի՝ Աստծո միակ իսկական պաշտամունքն է: Այսպես, մշտական պայքարը վատ մղումների Նեֆսի *(Nefs)* դեմ կատարելության *Ինսան-ի Քամիլ (Insan-i Kamil)* կարգավիճակին հասնելու ճանապարհն է: Ռամադանի պահքի պահպանումն ալեվիները համարում են կեղծավորություն, և ահա թե ինչու նրանք չեն պահում այն:

20 Տասներկու իմամները (*On iki Imamlar*)՝ անսխալականները արտահայտել են ճշմարտությունը Մուհամմեդից հետո՝ Ալի, Հասան, Հուսեին, Զեյնել Աբիդին, Մուհամեդ Բակիր, Ճաֆերի Սադիկ, Մուսա Կազիմ, Ալի Ռիզա, Մուհամեդ Տակի, Ալի Նակի, Հասան Ասկերի, Մուհամեդ Մեհդի:

Փոխարենը նրանք պահում եմ Մուհարեմի (*Muharrem*) պասը, ինչպես շիիթները, միայն մեկ տարբերությամբ, որ նրանց համար դա պարտականություն չէ: Նա, ով իր համար այդ պահքը կարևոր է համարում, պահում է: Կարևորն այն է, որ զգան Կերբալայի[21] ճակատամարտի նահատակների, Իմամ Հուսեինի տառապանքները սրտով, բանականությամբ, մտածելով, զգալով, ապրելով և հավատալով, ինչպես նրանք: Ընդդիմանալով կեղեքիչներին՝ լինել հալածվածների կողքին և ապրել պատվով՝ ուշադրություն դարձնելով սեփական ձեռքերին (չգողանալ), լեզվին (չխաբել, չանիծել) և երիկամներին (չդավաճանել կողակցին) (*Eline, diline, beline, sahip olmak*):

Պասն ընթանում է երկու անգամ՝ 3 օր, որի ընթացքում հիշատակում են «Տասնչորս Անարատ Անմեղների» (*14 Masum-u-Paklar-14 Մասում-յու-Պակլար*) մահը, Իմամների՝ փոքր տարիքում սպանված տասնչորս երեխաներին և 12 օր, որը և «Մուհարեմի Պասն» է (*Muharrem Orucu-Մուհարեմ Օրյուջյու*): Պասի ընթացքում խստորեն հետևում են, որ ջուր չխմեն (պասն ընդհատելու ժամանակ թույլ է տրվում ընդունել հեղուկներ, բացի «մաքուր» ջրից), չուտեն միս, չկտրեն մազերը, մորուքը և այլն, չփոխեն հագուստները, սեռական հարաբերություններ չունենան, չմասնակցեն տոներին (հարսանիք), չօգտագործեն ոգելից խմիչքներ, չկտրեն ծառեր, ճյուղեր կամ ծաղիկներ, չսպանեն միջատներ, չշնչեն լավ բուրմունքներ և ոչ էլ զարդարվեն ու իրենց նայեն հայելու մեջ, չերգեն կամ նվագեն:

Muharrem-Մուհարեմ ամսից բացի ալեվիները կարող են պահել Հիզիրի պասը, որը տևում է 3 օր:

21 Կերբալայի ճակատամարտը տեղի է ունեցել 680թ. հոկտեմբերի 10-ին (Մուհարեմ ամսի 10-ին), Իրաքում: Ճակատամարտում օմեյադ խալիֆ Յազիդ I-ի հզոր բանակի դեմ պայքարում էր Իմամ Հուսեինի պարտիզանների բանակը, որի թիվը կրճատվեց մինչև 72 մարտիկ:

Ողորմություն (Zêkat-Զեկատ)

Մուսուլմանը պարտավոր է ամեն տարի հաշվարկել ընդհանուր գումարը և դրանից տալ համայնքի ամենաաղքատ մարդկանց: *Zêkat*-ի նպատակն է հավատացյալին մաքրագործել իր հնարավոր, իր իսկ բարիքների համար փսասակար գայթակղություններից, չափավորել ժլատությունը և ցանկասիրությունը, հոգալ ծայրահեղ աղքատների կարիքները:

Ալեվիզմը դատապարտում է անգործությունը, իսկ որևէ տեսակի հարստություն կարող է հանդուրժել միայն որպես աշխատանքի արդյունք: «Ամենամեծ խոհեմությունը աշխատելն է» (*En büyük keramet çalişmaktir*): Փոխադարձ օգնությունն ու ծայրահեղ աղքատին նվերներ տալը մշտական պարտականություններ են: Ահա ինչու ալեվիները կապված են *Müsahiplik- Մյուսահիպլիկի* սկզբունքով:

Յուրաքանչյուր ալեվի պետք է ընտրի *Մյուսահիպլիկ -Müsahip*, մի «եղբայր անդինից», մեկ այլ ընտանիքից, ինչպես իրենն է, և որն իր համար ընդմիշտ հենարան կլինի, ինչպես բարոյական, այնպես էլ տնտեսական իմաստով: Երկուսն էլ պետք է խոսեն նույն լեզվով, լինեն նույն տարիքի և ունենան նույն հավատքը: Երկու մյուսահիպլիկները պարտավոր են ընտանեկան փոխադարձ օգնություն ցուցաբերել իրենց ողջ կյանքի ընթացքում:

Այդ հասարակական փոխօգնության շարքից բացի ալեվիները պարտավոր են «լոկմա պատառիկ» լոկմա (*lokma*) տալ իրենց համայնքի ամենաչքավոր անօգնականներին: Ավանդույթի համաձայն՝ ամեն շաբաթ, հինգշաբթի երեկոյան պատրաստում են լոկման և վառվող մոմի լույսի տակ տալիս են հարևանին կամ կարիքավորին:

Ուխտագնացություն դեպի Մեքքա (Hac)

Իսլամում ուխտագնացությունը դեպի Մեքքա պարտականություն է յուրաքանչյուր պատասխանատու անձի համար, ով ունի ֆինանսական և ֆիզիկական հնարավորություն: Դրա իմաստը մեղքերին թողություն տալն է:

Ալեվիզմն այլևս ոչ մի կարևորություն չի տալիս ուխտագնացությանը, անգամ եթե նշվում է, որ սուրբ և խորհրդավոր Հաջի Բեկթաշ Վելին[22] ուխտագնացի տիտղոս ունի: Նրա դամբարանը (*Dergah-դերգահ*), որը և նրա գերեզմանն (*Türbe-Թյուրբե*) է, գտնվում է Թուրքիայում, Նեվսեհիրի մոտ, իր իսկ անունը կրող քաղաքում և համարվում է ալեվիների ուխտագնացության գլխավոր վայրը: Այդ վայրից բացի նրանք հարգանք են մատուցում սուրբ մարդկանց՝ Աբդալ Մուսա Սուլթանի, Գարիպ Դեդի, Կարաքա Ահմետ Սուլթանի, Սահկուլու Սուլթանի գերեզմանները պատսպարող դամբարաններում կամ էլ հատուկ վայրերում, որ կոչվում են *զիյարեթ Ziyaret*, ինչպես Փիր Սուլթան Աբդալի, Բաբա Մանսուրի, Գարիպ Մուսայի, Սուլթան Սինեմիլի... Ալեվիները հավասարապես խորհրդավոր կերպով երկրպագում են բնության այնպիսի տարրերը, ինչպիսիք են սարերը, քարերը և սուրբ ծառերը (*Dilek Agaçlari- Դիլեք Աղաչլարը*): Թեև դրանք ըստ էության ուխտագնացության վայրեր չեն, սակայն վայրեր են, որտեղ հավատացյալները գալիս են արտահայտելու իրենց ցանկությունները:

22 Հաջի Բեկթաշ Վելի (1209-1271) – ծնունդով Խորասանից (իրանա-աֆղանական սահման), գալիս է քարոզելու իր սուֆի փիլիսոփայությունը Կենտրոնական Անատոլիայի թուրքմեն ցեղերին և Բեկտաշիի սուրբ առաջնորդի հետ եղբայրություն է հիմնում, որը երբեմն շփոթում են ալեվիզմի հետ:

Սովորաբար ասում են, որ իսլամի հինգ սյուների մասին ալեվիներն ունեն այն կարծիքը, որ ողորմությունը և ուխտագնացությունը հարուստների համար են, պասն ու աղոթքը՝ կեղծ բարեպաշտների, և մնում է միայն գաղափարախոսությունը: Պակաս գռեհիկ չեն այնպիսի հավաստիացումները, որոնք կարող են միայն մուսուլմանական համարվել՝ «Իմ Կաաբան մարդկային էակն է» (*benim kâbem insandir*), «Ինչ էլ փնտրես, փնտրիր այն քո մեջ, այն ո՛չ Մեքքայում է, ո՛չ Երուսաղեմում, ո՛չ էլ ուխտագնացության մեջ» (*her ne arar isen kendinde ara. Kudüs`te, Mekke`de, Hac`da değildir*), կամ էլ «Սերը մեր կրոնն է. մենք ոչ մի ուրիշ կրոն չենք ընդունում » (*Sevgi bizim dinimizdir, baska dine inanmayiz*) :

Որպես հավատ՝ ալեվիզմի կրած ազդեցություններից մեկն իսլամն է, սակայն այն իսլամի մաս չի կազմում: Բայց ինչպե՞ս կարող էր լինել այլ կերպ: Դարերի ընթացքում մարդկային պատմությունը կրել է կրոնական իրողության ազդեցությունը: Անատոլիայում սուլթանների ու արքայազների ուղղափառ և գիտական իսլամը երբեք չի կարողացել վստահություն ներշնչել աղքատների ու գյուղացիների շրջանում. այն ստիպված եղավ դառնալ թուրքմեն և քուրդ քոչվորների կողմից ընդունած նախորդ դավանանքների ու կրոնների մի մասը: Ահա թե ինչու դավանափոխության գործը վստահվել էր դերվիշներին[23] (ում ալեվիները *Abdal* են կոչում) և թուրք–իրանական սուֆիզմի[24] միաբանություններին:

Գլխավոր ազդեցությունը եղել է բեկթաշիի (*bektaşiyye*)

23 Դերվիշ-մարդ, որն անցնում է ճգնավոր սուֆիական (“Tariqa”) ճանապարհով՝ պահանջելով ծայրահեղ աղքատություն և դաժանություն:

24 Սուֆիզմը հոգևոր, խորհրդավոր և ճգնավորական իսլամական շարժում է և այլոց համար անըմբռնելի ուսմունք, որն ի հայտ է եկել Ք.ծ. հետո, VIII դարում:

միաբանության ազդեցությունը, որի սուրբ առաջնորդը 13-րդ դարում եղել է Հաջի Բեկթաշ Վելին և Բալիմ Սուլթանը՝ կազմակերպիչը 14-րդ դարում: Որոշ հատկանիշներ այնքան նույնն էին թվում, որ երկար ժամանակ ալեվի և բեկթաշ երկու անվանումները շփոթում էին: Այսպես՝ Թիերի Զարքոնը[25] ալեվիզմն ընդունում է որպես «*տոհմային բեկթաշիզմ*»[]՝, բայց Իոեն Մելիքովը կասկածանքով մոտեցավ այդ տեսությանը, չնայած, որ այն պաշտպանել էր նախկինում. «*Մինչ այժմ ես մտածում էի (և գրել եմ), որ Բեկթաշիի և ալեվիների միջև շերտավորվածությունը հատկապես սոցիալական կարգի էր: Այժմ հարցը դրվում է այլ կերպ. բեկթաշիները այնպես, ինչպես ալեվիները պատկանում են ժողովրդական դասակարգին (...) Նրանք պահպանել են հավատքի միևնույն հիմքը, բայց նրանց տարբերակում է աշխարհագրական միջավայրը, որտեղ նրանք զարգացել են՝ Թրակիան մի մասի համար, Անատոլիան՝ արևելքում մյուս մասի համար*»[26]: Եվ ավելացնում է. «*Ես գիտեի, որ ալեվիների շրջանում կային քրդական ազդեցություններ: Բայց այս փաստերն անկասկած ավելի կարևոր են, և ես չուզեցի ընդունել դա* » [27]:

Իրականում ալեվի եզրույթը նոր է, քանի որ այսօր այդ բառով անվանված կանայք և տղամարդիկ երկար ժամանակ կոչվել են *Կըզըլբաշ* (*Kızılbaş*), այսինքն՝ «Կարմիր գլուխներ», որը գալիս է օսմանական սուլթաններ Բեյազիտ II–ի և Սելիմ I–ի դեմ 16-րդ դարում ժողովրդական ապստամբության անունից: Հաջորդ դարերի ընթացքում եզրույթը տարածում գտնելով, տեղական իշխանական մարմինների կողմից գործածվել է բացասական իմաստով՝ անվանելու համար աղքատ գյուղացիների և քրդական

25 Thierry Zarcone, *Poètesses soufies de la confrérie bektachie*, Signatura 2010

26 Նույն տեղը:

27 Նույն տեղը:

ազգային փոքրամասնության ապստամբության բոլոր շարժումները: «*Կըզըլբաշ* եզրույթը դարձել է ապստամբ և հերետիկոս բառերի հոմանիշը[28] » :

Սակայն մեր կարծիքով այսօր այստեղ է գտնվում ալեվիզմի սահմանման բանալին: Կրոնական և մշակութային ազդեցությունների հարստությունն ու բազմազանությունն է թույլ տալիս, որ մեկն իրեն հռչակի «շիիթ», իսկ մյուսը՝ «աթեիստ»: Լիբանանի հարավում ինչոր ժամանակ ապրելով և շփվելով տասներկուերորդական շիիթների[29] հետ՝ ես մեծ դժվարությամբ գտա նմանություններ ալեվիների ապրելակերպի հետ և որպես աթեիստ դժվարացա ժխտել նրանց մշակույթի որոշ կողմերի կրոնական հատկանիշները:

Սոցիոլոգ Էլիզ Մասիքարն իր հոդվածում[30] տեղադրել է 1997 թ. հունվարից մինչև 1998թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում Ստամբուլում՝ Շահկուլուի *Tekke*-ում (դերվիշների մենաստանում) կատարած հարցման արդյունքները, որտեղ ալեվի այցելուներին հարցրել են, թե ինչպես կսահմանեին ալեվիզմը: Այցելուների 43%-ը կարծում էր, թե խոսքը «դավանող խմբի» (*mezhep*) մասին է, 16,9%-ը՝ «ապրելակերպի» (*yaşam biçimi*), 16,1%-ը՝ մշակույթի (*kültür*) և միայն 10,5 %-ն էր կարծում, որ դա կրոն (*din*) է և 10,4 %-ը՝ «կրոնական եղբայրություն» (*tarikat*) :

Մեկ այլ հրապարակման մեջ[31], թուրք համալսարանական Հական Յուճելը նշում է, որ վերջերս քաղաքային միջավայրում կատարված հարցումը ցույց

28 Նույն տեղը:

29 Տասներկուերորդական շիիթներ – շիիզմի ճյուղ, որը մեծարում է 12 իմամներին: Իզմայելական շիիթները մեծարում են միայն առաջին յոթ իմամներին, իսկ զայդիտականները՝ առաջին հինգին:

30 Elise Massicard, *La communauté, un universel sociologique ?*, Labyrinthe 21, 2005.

31 Hakan Yücel, *Le mouvement alévie*, Actes du Colloque Nantes-Galatasaray, Signes, Discours et Société, 2010,

է տվել, որ հարցվողների 34,5%-ն իրեն հայտարարում է «ալեվի», 32%-ը «ալեվի-մուսուլման», 12,1%-ը «մուսուլման» և 14,6 %-ը «աթեիստ»: Հենց այդ նույն հարցումը ցույց է տվել, որ իսլամ դավանողների շրջանում ալեվիզմս ըմբռնում են տարիքավոր և անգրագետ մարդիկ:

Բացի սահմանումից, որի նպատակն էր անձնական զգացումների միավորումը, մենք կարծում ենք, որ նախնառաջ ալեվիզմը երդման *Իկրար* (*Ikrar*) իրողությունն է: Ծնվում են ալեվի, սակայն պետք է երդվեն՝ դա հաստատելու համար: «Լինենք մեկը, լինենք ուժեղ, լինենք կենդանի» (*Bir olalım, iri olalım, diri olalım*) խոստում է, որ յուրաքանչյուրը պարտավոր է տալ իր համայնքին: Եվ նա, ով կոչ է անում լինել և մնալ ալեվի Թուրքիայում, կոչ է անում պայքարել մուսուլմանական մեծամասնության և կենտրոնական քաղաքական իշխանության բռնի կերպով ձուլման փորձերի դեմ: Այն ինչ նախկինում եղավ Օսմանյան սուլթանների, հետագայում Ֆաշիստական զինվորների հետ, նույնն է այսօր իսլամիստների մոտ :

13-րդ դարի *Baba՝is*-ների, 14-րդ դարի *Կիզիլբաշների*, 1937թ. *Dersim*-ի ապստամբությունների, 1995թ. Ստամբուլի *Գյազիոսմանփաշա Gaziosmanpaşa* թաղամասում բնակիչների ապստամբությունների արդյունքում ճնշման ու անօրինականության դեմ դիմադրությունը մնում է ալեվիզմի ամենաուժեղ խորհրդանիշը:

Ի վերջո, դա Անատոլիայում թուրքմեն և քուրդ աղքատ գյուղացիության պայքարի մշակույթն է, որը մերժել է բռնի կերպով ձուլումս իսլամին և ղեկավարների ավտորիտար քաղաքականությունները:

3.

Համայնքային ծիսակարգերն ու սովորույթները ալեվիզմում

Ալեվիների ծիսակարգերն ու սովորույթները երկար ժամանակ առեղծված են եղել անիրազեկ մարդկանց համար: Քանի որ դատապարտված են եղել իրենց հավատքը գաղտնի պահել, որպեսզի խուսափեն կրոնական ճնշումից, նրանք ստեղծել են բազմաթիվ ցնորապատկերներ, որոնք դժբախտաբար դեռևս դժվարին կյանք ունեն մահմեդական սուննիների մոտ:

Նրանց համայնքային արարողակարգը, մասնավորապես *Այնի Ջեմը (Ayn-i Cem)*, մատնացույց է արվում որպես «սանձարձակ ծես». կանայք և տղամարդիկ հավաքվում են այնտեղ, մոմերն հանգցնելուց հետո հաղորդվում են մթության մեջ, պարում են և խմում… որը և ալեվիներին արժանացնում է անարգիչ *հանգած մոմ - մյում սոնդյու («mum söndü»)* կոչմանը: Իսլամական 5 աղոթքները չպահպանելու պատճառով մահմեդական սուննիները նրանց համարում են «*զինդիկ-zindik* » («անհավատ»):

Առաջինը, որ անմիջապես աչքի է զարնում, կանանց նկատմամբ խտրականության բացակայությունն է: Նրանք չեն կրում ո՛չ քող, ո՛չ չադրա, ո՛չ էլ համայնքում երկրորդական են համարվում: Ալեվիզմի գլխավոր գաղափարը «հոգիները սիրելն է» (*cac cana olmak*), որն իր մեջ ներառում է կին–տղամարդ հավասարությունը: Որպեսզի ցույց տան, որ ոչ մի տարբերություն չեն դնում սեռերի միջև, նրանք միմյանց անվանում են « հոգիներ » (*canlar - ջանլար*):

Նույն ձևով համայնքում խիստ արգելվում են բռնի ամուսնությունն ու բազմակնությունը: Դրանք

«իրավունքներից զրկող» հանցագործություններ են համարվում ըստ Բուրյուկի (*Buyruk*)[32]: Ըստ տարածաշրջանների դրանք կարող են տարբեր լինել, բայց միշտ վերագրվում են կա՛մ Շիիզմի 6-րդ իմամ Ջաֆեր Սադիկին (702–765թթ.), կա՛մ Ադրբեջանում Սաֆեվիե եղբայրության հիմադիր Սաֆի ալ-Դին Արդաբիլիին (1252–1334թթ.), որը «Կարմիր գլուխներ» (*Kızılbaşlık* - *Կիզըլբաշլըկ*)[33] շարժման կազմակերպիչն էր :

Երկրորդ առաջնային կողմը համայնքի հանդեպ հավատարմության փաստն է: «Գոյություն ունենալու համար պետք է մի խոստում տալ» (*varolmak için verilmiş bir söz*): Յուրաքանչյուր ալեվի երդվում է իր համայնքի առջև՝ խոստանալով մնալ նրան հավատարիմ, լինել և մնալ նրա անդամներից մեկը: Նա, ով խախտում է երդումը, վտարվում է համայնքից:

Ալեվիներիծեսերնուսովորույթներըշատենզարմացրել եվրոպական ազգաբաններին, ովքեր ճանապարհորդել են դեպի Անատոլիա 19-րդ դարի վեջին և 20-րդ դարի սկզբին: Ոմանք նույնիսկ փորձել են այնտեղ փնտրել քրիստոնյա նախնիների ծեսերը: Ահա թե ինչ է ասում այդ մասին 1904 թ. ֆրանսիացի աշխարհագրագետ և ազգաբան Ֆեռնան Գրենարը[34]. «*Փոքր Ասիայում կա մի կարևոր կրոնական աղանդ, որի անդամները տարածված են Էրզրումից մինչև Այդին և կոչվում են Կըզըլբաշներ-Kyzyl-Bâch, իսկ իրենք իրենց ալեվի են կոչում (...): Մուսուլմանները նրանց չեն ընդունում որպես եղբայր, ատում են նրանց, չնայած նրանց մասին ունեն միայն տարտամ և հեքիաթային տեղեկություններ: Նրանց իրենցից հեռու են պահում, հնարավորինս հեռացնում են վարչական պաշտոններից և եթե, ընդհանուր առմամբ, վատ չեն վերաբերվում նրանց, քանի որ վերջիններս հեզ ու անվստահ են, այդուհանդերձ նրանց մեծ մասին մատնել են թշվառության (...): Կըզըլբաշները գիշերվա ընթացքում նշում են մի կրոնական արարողություն, որի հիմքում փոքր ինչ ձևափոխված քրիստոնեական պատարագն է: Ես ներկա չեմ եղել նման պատարագի և այդ մասին խոսում եմ միայն կըզըլբաշների վկայությունների հիման վրա: Պատարագ մատուցող քահանան երաժշտական գործիքի նվագակցությամբ երգում է աղոթքներ Ալիի, Հիսուսի, Մովսեսի և Դավիթի պատվին (...): Արարողության ժամանակ մասնակիցները բոլորի ներկայությամբ*

խոստովանում են իրենց մեղքերը առաջին քրիստոնյաների նման: Քահանան նրանց ենթարկում է, եթե տեղին է, տարբեր պատիժների, շատ հաճախ տուգանքների՝ դրամական կամ բնամթերքների ձևով: Այնուհետև հանգցնում են լույսերը և հանձնվում լացին՝ որպես զղջում գործած սխալների համար: (...) Ամուսնալուծությունն ընդունված չէ, և դա ևս վկայում է աղանդի քրիստոնեական ծագման մասին: Կըզըլբաշների հոգևորական դասը կազմված է գրեթե այնպես, ինչպես քրիստոնեական դասը: Նրանք ունեն քահանաներ, եպիսկոպոսներ և աստիճանակարգի վերևում՝ հայրապետներ, որոնք թվով երկուսն են և համարվում են Ալիի հետնորդներն ու օժտված են աստվածային բնույթի ուժով: Նրանք Աստծո խոսքի մեկնաբաններն են: Յուրաքանչյուր լավ կըզըլբաշ պետք է հավատա այն ամենին, ինչ նրանց հավաստիացնում են, և անի այն, ինչ նրանց կարգադրում են: Այստեղ է քրիստոնեական ընկալումը, որը մուսուլմանները չեն ընդունում»:

Ազգաբանը, հավաստելով տարաձայնություններն իսլամի հետ այդ ժամանակաշրջանում, մնում է

32 Բույրուկը գրքույկ է, որն իր մեջ ներառում է ալեվիզմի ծեսերի և սովորությունների կոդավորումը:

33 Տես գլուխ 11:

34 Fernand Grenard, *Une secte religieuse d'Asie Mineure, les Kyzil-Bachs*, Journal Asiatique 10-3, 1904.

եվրոպական դասական դրույթների սահմաններում, ըստ որոնց մուսուլմանական տարածքը, եթե մուսուլմանական չէ, պետք է լինի քրիստոնեական: Ալեվիզմի մասին այդ ժամանակ գիտական ուսումնասիրություններ չկային, և այդ մշակույթի բազմաթիվ ազդեցություններ դեռ ընդունված չէին: Այս գրքի երկրորդ մասում այդ ամենը մանրամասն մեկնաբանվում է, և ընթերցողը կկարողանա հավաստիանալ, որ դրանք ամբողջովին տարբեր են քրիստոնեականից:

Ալեվիզմին հաղորդակցվելու ծեսերը

Չնայած այս խնդրի վերաբերյալ խիստ կանոններ չկան, շատ հաճախ արու զավակներին անվանակոչելիս ալեվիները վկայակոչում են շիիզմի իմամներին կամ նրանց հետ կապված անձանց անունները: Այսպես՝ Ալի, Հասան, Հյուսեին, Զեյնել, Ռիզա, Մյուսա, Կազիմ անունները շատ հաճախ են տրվում երեխաներին: Որոշ անուններ շատ խորհրդանշական են, ինչպես Կամբեր կամ Կամեր (Ալիի ախոռապենտն ու ծառան), Հեյդար (առյուծ – Ալիի մականուններից մեկը՝ Աստծո Առյուծ), Սալման (նվիրված Սելման Պարսիկին՝ Մուհամմեդ մարգարեի առաջին ոչ արաբ ուղեկցին), Բեկթաշ (Հաջի Բեկթաշի պատվին) կամ էլ Մեհմետ Ալի (Մուհամեդ և Ալի):

Ըստ ավանդույթի, ծնվելուց անմիջապես հետո Դեդեն նորածնի ականջին երեք անգամ պիտի շշնջա ծնողների ընտրած անունը:

Համայնք մուտք գործելու առաջին փուլերը պատկանում են մանկությանը և դրանք են *Սյուններթ (Կիվերլիկ-Sünnet) Kiverlik*-ը (Թլպատմանը հաջորդող հովանավորչություն) և *Կեմերբեստլիկ-Kemerbestlik*-ը (Գոտնորում):

Թլպատումը՝ *սյուններթը (Sünnet)*, որը կատարվում է 4-ից 12 տարեկանում, չունի կրոնական համայնք մուտք գործելու այն արժեքը, որն ունի իսլամի կամ հուդաիզմի մեջ: Դա ոչ էլ քրիստոնեական կնունքն է, որը ցմահ կապում է համայնքին: Թլպատման իրական շարժառիթը երեխայի հովանավորչությունն է՝ *կիվերլիկը (Kiverlik)*, նրա ապագայի փոխադարձ կապի ապահովումը իր կենսաբանական ընտանիքի և համայնքի մեկ այլ՝ ամենամոտ բարեկամներից մեկը համարվող ընտանիքի միջև: Երեխային հովանավորը պարտավոր է նրան օգնել ամբողջ կյանքի ընթացքում: Երկու ընտանիքների այդ «միությունը» պարտադրում է նաև, որ չլինի ամուսնություն հակառակ սեռի երեխաների միջև: Չափահաս դարձած երեխան ոչ մի դեպքում չի կարող խնդրել հովանավորի աղջկա ձեռքը՝ *կիվրե (kivre)*:

Համայնքի մեջ մուտքը նաև մեկ այլ ծեսի՝ Գոտնորման (*Kemerbestlik*) միջոցով է կատարվում 7-ից 16 տարեկանում: Երեխային ծնողները ներկայացնում են Դեդեին և նրա օգնականին՝ *Ռեհբեռին* (Rehber), Ուղեկցորդին: Նրան հագցնում են առանցքաձիքի վերնաշապիկ՝ խորհրդանշական գոտիով և նրան նախաճաշ՝ լոկմա (*lokma*) են մատուցում: Այսպիսով, երեխան պաշտոնապես կապվում է իր ծնողների հոգևոր տոհմի *Օջակի* (*Ocak*) սահմանած համայնքին և դառնում է «Անարատ և Անմեղ» *Մասում վե Պակ (Masum ve Pak)* ալեվի աշակերտ: Նրան հանձնում են դաստիարակին, որին անվանում են *Մյուռեբբի (Mürebbi)*, ով պարտավոր է ուղեկցել նրան համայնքում առաջին քայլերից մինչև «Երդումը»-*Իկրալիկ (Ikralik)*:

Այդ երդումը կյանքում չափազանց կարևոր փուլ է համարվում: Այն պաշտոնապես հաստատում է ալեվիի կարգավիճակը, և դա հանձնառություն է՝ մասնակցելու խմբակային կյանքին և համայքի հավերժականացմանը: «*Bir olalim, iri olalim, diri olalim*» (Լինենք մեկ, լինենք ուժեղ, լինենք կենդանի). սա է արտասանվող երդումը: Այդ պահից սկսած ալեվին համարվում է պատասխանատու իր

բոլոր արարքների համար ամբողջ համայնքի առջև (*Dar'a çeklimek* –*Դար'ա չեկիլմեկ*):

Համայնքի անդամ իր երդումը հաստատում է *Müsahiplik*-ի (Եղբայրություն Անդինից) միջոցով, որը պարտադիր պարտականություն է. իր ընտանիքից դուրս ընտրել մի եղբայր և այսպիսով կնքել փոխադարձ օգնության պայմանագիր ամբողջ կյանքի համար: Դեղէ այսպես է արտասանում երդման պահանջները. «Մի՛ զիջեք ձեր ցանկություններին, մի՛ շեղվեք ձեր ճանապարհից, կիսե՛ք ձեր բարիքներն ու կյանքերը, արգելված ոչինչ մի՛ արեք, կիսե՛ք ձեր ուրախությունն ու դժբախտությունը, եղե՛ք ճանապարհի ուղեկիցներ»:

(Nefsinize uymayın, yolunuzdan azmayın, malı mala canı cana katın, çiğ lokma yemeyin, halinize haldaş yolunuza yoldaş olun).

Ճիշտ այնպես, ինչպես *Kiverliki*-ի դեպքում (Հովանավորչություն), *müsahip*-ը չի կարող խնդրել «անդինից եղբոր» աղջկա ձեռքը:

Այդ հասարակական և կամավոր եղբայրությունը կարող է դրսևորվել երկու տղամարդկանց կամ էլ երկու ամուսնական զույգի միջև: Դա նաև պայման է, որպեսզի կարողանաս ներկա գտնվել *Այն-ի Չեմի (Ayn-i Cem)* համայնքային արարողությանը:

«Müsahiplik-ը՝ *կեղծ ազգակցության հիմնումը, համարվում է ալեվիների հասարակական համակարգի ամենակարևոր տարրերից մեկը: Այն թույլ է տալիս մասնակցել կրոնական բոլոր արարողություններին և ձևավորում է ամուսնական զույգերի միջև այնպիսի սերտ կապ, ինչպիսին նույն ծնողների երեխաների միջև կապն է, քանի որ müsahip-ի երեխաների միջև ամուսնությունն արգելված է, չնայած զարմիկների ամուսնությունը թույլատրվում է: Դա միակ կանոնն է, որ անփոփոխ է ու պահպանվել է: Սովորաբար Müsahiplik-ը կարող է կատարվել միայն Ikrarlik-ի (Երդման) արարողությունից հետո»*[35]:

Ամուսնությունն ու ազգակցությունը համարվում են պարտականություններ համայնքի առջև, քանի որ դրանք հավերժացնում և «ապրեցնում» են համայնքը: Բոնի, այսինքն՝ ապագա ամուսիններից մեկի համաձայնության բացակայությամբ ամուսնություններն արգելվում են: Երիտասարդները պետք է սկզբնական շրջանում հայտնեն այդ միության ցանկությունը՝ ազատ և մինչև վերջ վստահ: Միայն դրանից հետո է, որ ընտանիքները հանդիպում են պաշտոնապես հարսնացուի ձեռքը խնդրելու (*kiz isteme*) և ապագա միությունը կնքելու համար՝ այլևս խոսքից չհրաժարվելով (*söz kesme*): Բազմակնությունը, ամուսնալուծությունը, դավաճանությունը կամ ամուսնությունը մուսուլման սուննիների հետ համարվում են ալեվիական համայնքի անկման շարժառիթներ և արգելվում են կտրականապես:

Դեղեն ապագա ամուսիններին հարցնում է, թե արդյոք ազատ ընտրություն են կատարել իրենց կողակցի հարցում, այնուհետև կնքում է ամուսնությունը հետևյալ խոսքերով. «Ինձ հետ և վկաների ու հրավիրվածների ներկայությամբ, ձեր սեփական համաձայնությամբ և հետևելով մեր ճանապարհին ու հավատքին, հայտարարում եմ ձեզ միացած մեկդ մյուսիդ: Թող որ Ճշմարիտ-Մուհամեդ-Ալին, Հաջի Բեկթաշ Վելին ճշմարիտ կատարյալներն և այստեղ հավաքված բոլոր հոգիները լինեն վկաներն այն խոսքի, որ դուք տվել եք ձեր ամուսնության համար: Թող որ այս ամուսնությունը լինի բարերար և լավ նախանշան հանդիսանա երկու կողմերի համար: Թող որ Ամենաբարձրյալ Աստված ձեզ երջանկացնի և չթողնի վշտի մեջ»:

35 Marzena Godzinska, *Ալեվի և Բեկթաշի կրոնական փոքրամասնությունների ծեսերը- The religious relations in the Sunni majority environment in secular Turkey*, Journal of Asian and Pacific Studies, 4/ 2007.

(Bende tanıkların ve konukların huzurunda, kendi razılığınız ile inanç ve yolumuz üzere sizi birbirinize eş olarak ilan ediyorum. Hak-Muhammed-Ali, Hünkar Bektaş Veli,gerçek erenler ve burada bulunan tüm canlar evlilik için verdiğiniz söze tanık olsun. Kıyılan bu nikah, her iki taraf için hayırlı, uğurlu olsun. Yüce Tanrı sizleri mutlu eylesin, darda bırakmasın.)

Համայնքի անդամ դառնալու այդ ծեսերն ալեվիական հասարակական կառույցի հիմքն են հանդիսանում, որը թույլ է տալիս հետևել հոգևորական և հասարակական կոդավորումներին՝ ամփոփված այս արտահայտության մեջ. «Ձեռք-ձեռքի տված, ձեռքը պարզած ճշմարիտին (*El ele, el Hakk*՝a)»:

Մեծարանք ճանապարհի ուղենիշերի նկատմամբ

Ալեվիական հավատքի հիմքը դեպի կատարելություն տանող ճանապարհն է, որն անցնում է խորհրդանշական 4 դուռ և 40 շեմ (*dört kapı, kırk makam*): Դեղեն համայնքի առջև ճանապարհի նկատմամբ մեծարանքի երաշխավորն է. նա հոգևոր ուղեկցորդի դեր է կատարում, կրթում է, խորհուրդ տալիս և ուղեկցում *Գյորգյու (Görgü)*, նա հասարակական վճիռ է կայացնում ժողովի առջև, և եթե կարիքը կա, դատապարտում է սխալները *(Դյուշկյունլյուկ) (Düşkünlük)*: Նա երդվյալին հորդորում է հետևյալ ապրելակերպը. «Գիտցի՛ր, որ ճանպարհը մեկն է: Ընդունի՛ր քո ուղեկցորդին որպես հայր, գիտակցի՛ր, որ քո Դեղեն իմաստության ժառանգորդն է: Մի՛ խաբիր, մի՛ կեր արգելվածը, մի՛ չարախոսիր, մի՛ տարածիր բամբասանքներ ուրիշների թիկունքի հետևում, վերահսկի՛ր ցանկություններդ, եղի՛ր ձեռքերիդ, լեզվիդ ու երիկամներիդ տերը: Մի՛ տրվիր ատելությանն ու գոռոզությանը:

Մի՛ նախանձիր ոչ ոքի, մի՛ եղիր հիշաչար ու համառ:

Թաքցրո՛ւ տեսածդ, մի՛ բացահայտիր այն: Մի՛ վերցրու այն, ինչ ինքդ չես թողել, մի՛ պարզիր ձեռքդ դեպի այն, ինչին չես կարող հասնել: Մի՛ ասա որևէ բառ, որը վեր է քո գիտելիքից: Քաղի՛ր դասեր, նայի՛ր զգվածությամբ, խոսի՛ր սիրալիր: Եղի՛ր արժանավոր փոքրերի համար, հարգիր և ծառայիր մեծերին: Ընդունի՛ր որպես լույս տասներկու իմամների և Տասնչորս Անարատ Անմեղներին: Գտի՛ր ճշմարիտն ամեն ինչի և քո մեջ: Հասի՛ր լուսավորվածների գաղտնիքներին: Գտի՛ր ճշմարիտ իմաստունը Ալիի մեջ, օժանդակությունը՝ Մուհամեդի: Պահպանիր քո անձը այդ ճանապարհին»:

(Yolunu bir bil. Rehberini peder bil. Mürşidini, pirin varisi bil. Yalan söyleme. Haram yeme, gıybet etme, arkadan dedi-kodu yapma. Şehvetperest olma. Eline, diline, beline sahip ol. Kin ve kibir tutma. Kimseye haset, garaz, inat etme. Gördüğünü ört görmediğini söyleme. Elinle koymadığını alma. Elinin ermediği yere el uzatma. Sözünün geçmediği yere söz söyleme. İbretle bak, hilm ile söyle. Küçüğüne izzet, büyüğüne hürmet ve hizmet eyle. Oniki İmamı, Ondört Masum'u bir nur bil. Hakkı her yerde ve kendi özünde hazır bil. Erenlerin sırlarına eriş. Muhammed Mustafa'yı, rehber Ali-el-Murteza'yı gerçek mürşid bil. Özünü bu yolda böylece tut).

Առաջին դուռը՝ օրենքի դուռը, *Շերիաթը* (*Şeriat*), համապատասխանում է մարդկային էակի ճակատագրին՝ անադան դողմակին (*anadan doğmak*), գիտակցելով համայնքային կյանքի կանոնները, ջանալով չտրվել սեփական մղումներին, միշտ պատրաստ լավություն անելու համար: Հոգին այստեղ միավորվում է բնական տարրի՝ օդի հետ:

Երկրորդ դուռը՝ ճանապարհի դուռը, *Տարիկաթը* (*Tarikat*), երդումից հետո լիարժեք մուտքն է համայնք, բառացիորեն հարգելով համայնքի ծեսերն ու սովորույթները: Հոգին միավորվում է բնական տարրի՝ կրակի հետ:

Երրորդ դուռը՝ գիտելիքի դուռը *Մարիֆեթը* (*Marifet*), իմաստության ձեռքբերումն է, սեփական մղումների

վերահսկումը (նեֆսինի բիլմեկ) (*nefsini bilmek*). հոգին դառնում է մաքուր, ինչպես բնական տարրը՝ ջուրը:

Վերջին դուռը՝ ճշմարտությունը *Հակիկատը* (*Hakikat*) ճշմարիտի (Աստծո) հայտնաբերումն է ինքն իր մեջ, երբ հասնում ես կատարյալ մարդ դառնալու փուլին: Հոգին նորից վերածվում է բնական տարրի՝ հողի, որի միջոցով Աստված կերտել է առաջին մարդկային էակին:

Երբ ալեվին հանձնվում է իր մղումներին և այսպիսով հեռանում ճանապարհից, նա կատարում է հանցանքներ կամ իրավախախտումներ, որոնք դատապարտվում են Դեղեի և համայնքի կողմից. նա իրեն դնում է այլասերման վիճակի մեջ՝ *դյուշկյունլյուկ* (*düşkünlük*):

Հանցանքներն են՝

- խաբելը, թաքցնելը, դռան հետևից լսելը
- անմեղ մարդուն ծեծելը
- գողանալը, հայհոյելը, բամբասելը, զրպարտելը, անհանգստացնելը, կաշառելը
- տարածքներ հափշտակելը, ուրիշի բարիքը կամայականորեն փսասելը, հարևանի ծառերն ու տնկածները կտրելը
- հարևանի տունը կամ բերքն այրելը
- դավաճանությունն ու բազմակնությունը
- վաշխառությունը, գումարով խաղեր խաղալը, ուրիշի աշխատանքի արդյունքը վերցնելը
- կնոջից բաժանվելը, ուրիշ կնոջ հետ փախչելը
- կամավոր կերպով մարդ սպանելը
- կույս աղջկան կամ ամուսնացած կնոջը փախցնելը

Արգելքներն են՝

- բազմակնությունը
- ամուսնացած կնոջից բաժանվելը
- դավաճանությունը

- գողությունը
- սպանությունը
- Դեղեի առջև ստելը
- Ճանապարհի գաղտնիքների հրապարակումը
- սեփական կամ կողակցի արարքներն իր վրա վերցնելուց հրաժարվելը
- սուննի մուսուլմանների հետ ամուսնությունը
- *Kivre*–ի կամ *Müsahip*-ի երեխաների հետ ամուսնությունը
- կարիքի մեջ գտնվող ընկերոջն օգնելու մերժումը
- մաքրվելու և մեղքերի թողության արարողություններին մասնակցելու մերժումը

Իրավունքից զրկող ամենից հաճախ հանդիպող դեպքերն են՝ արգելված ամուսնությունը, դավաճանությունը և երդման վերանայումը: Եթե մեղավորը հրաժարվում է պատասխան տալ իր արարքների համար և ուղղվել, համայնքը ընդունում է նրա վտարման վճիռը, այլևս նրան խոսք չի ուղղում, հեռացնում է գյուղից կամ բնակության վայրից:

Այլ ծիսական տարրեր

Համայնքում մատուցվող կերակուրը՝ *lokma լոկման* (պատառիկը) շատ մեծ տեղ է զբաղեցնում ալեվիների մոտ: Այնմիջանամրապնդումէկյանքիյուրաքանչյուրկարևոր պահին: Ընդհանրապես ընտանիքը դիմում է ծիսական զոհաբերության (*Kurban*) առանձնահատուկ առիթի դեպքում՝ ընտանեկան (նշանադրություն, ամուսնություն, ծնունդ, մահ) կամ էլ ծիսական (ուխտագնացություն դեպի սուրբ վայր, պահք, համայնքի անդամ դառնալու արարողություն) իրադարձության դեպքում: Զոհաբերվող կենդանին գրեթե միշտ խոյն (koç-ղոչ) է, բայց նմանապես կարելի է զոհաբերել գառ, այծ, ցուլ կամ աքլոր:

Այնուհետև կերակուր է պատրաստվում և մատուցվում համայնքին: Դա խորհրդանշում է նվիրաբերող ընտանիքի սոցիալական կարգավիճակի բաժանումը և հաստատումը:

Այսպիսով, կերակուրները մատուցվում են համայնքային տարբեր հավաքների՝ *Ayn-i Cem-Այնի Ջեմի*՝ սխալի արդարացման, *Müsahip –Մյուսահիփի*՝ ընտրության, *Աբդալ մյուզա Բիրլիկ* (Abdal musa Birlik)՝ միավորման ժողովի ժամանակ:

Լոկման (Lokma) պատառիկը նմանապես տրվում է իրականացած ցանկության՝ (adak) *ադակի* առթիվ, հանգուցյալի մահվան քառասուներորդ օրը՝ *դար'դան ինդիրմէ (dar'dan indirme)*[36], և Մուհարեմի և Հիզիրի պասերի ժամանակ և Նովրուզի տոնի առթիվ (մարտի 21):

Ալեվիները նաև կանոնավոր կերպով ուխտագնացություններ են կատարում դեպի տարբեր սուրբ վայրեր՝ *զիյառեթ (ziyaret)*, սուրբ տղամարդկանց ու կանանց գերեզմանները՝ *թյուրբե (turbe)* և մահարձանները՝ *յաթիր (yatir)*: Այդ ուխտագնացությունները հարմար առիթ են ցանկություններ հայտնելու համար. դրանք սրբերի միջոցով աստվածայինի և մարդկայինի միջև միջնորդության դեր են կատարում:

Ամենահայտնիներն են Հաջի Բեկթաշի գերեզմանը Նեվշեհիրի մոտ և Աբդալ Մուսա Սուլթանինը՝ Անթալիայի մոտ:

Մեծ թվով գերեզմաններ կան ամբողջ Անատոլիայում, ինչպես օրինակ՝ *Էլիֆ Անայինը* Փազարջիկի մոտ *Կահրամանմարաշ* գավառում (*Kahramanmaraş*), Բյուկլյու Բաբայի (*Büklü Baba*) գերեզմանը Էրզինջանի (Erzincan) մոտ, *Կըզըլբելի (Kizilbel)* գերեզմանը *Թունջելիի* (Tunceli) մոտ, Dermenli Dede-ինը՝ *Գազիայնթափի* (Gaziantep) մոտ...

36 Ալեվիի մահը համարվում է վերադարձ առ Աստված՝ *Հակկա յուրյումեկ (Hakka yürümek)*: Հանգուցյալի թաղման երրորդ և քառասուներորդ օրը նրա ընտանիքը հիշատակի ճաշ է բաժանում:

Այնտեղ գալիս են հայտնելու իրենց ցանկությունները հիվանդ հարազատի ապաքինման, պտղատվության, ծրագրերի հաջողության համար: Սովորույթ է նաև ցանկությունների ծառին կտորի մի մաս կապելը, տեղի աղբյուրից ջուր խմելը կամ էլ այդ վայրի հողից կերակուրին խառնելը:

«Ավանդաբար սուրբն է ապաքինման համար կանչվող բժիշկներին և գաղտնիքների տիրապետող հեքիմներին փոխարինող կամ նրանցից գերադասվող վերջին անձնավորությունը: Բնակչությունը նրա նկատմամբ խորը մեծարանք է տածում, և դարերի ընթացքում հաստատված նրա ամուր հեղինակությունը երբեմն դուրս է գալիս տարածաշրջանի սահմաններից: (...) Գալիս են հայտնելու իրենց ցանկությունները նրա գերեզմանի մոտ, կարող են նրան ոչխար զոհաբերել, նվիրաբերումներ անել, մոմեր վառել, լցնել դատարկ սափորներ՝ հաջորդ այցելուների համար »[37]:

Եվ վերջապես, ալեվիները *Այնի Ջեմի (Ayn-i Cem)* համայնական արարողությունների ժամանակ պարում են սուրբ պարը՝ *Սեմահ դյոնմեկ (Semah dönmek)*: Այդ պարը մի իսկական ծիսակատարություն է. «Սեմահը պաշտամունքի առարկա է, դա ո՛չ ֆոլկլորական ներկայացում է, ո՛չ էլ պարի մեկ այլ տեսակ»:

(*Semah ibadettir, ne folklor gösterisidir, ne ayrı bir oyundur*).

Ծիսակատարությունների ընթացքում պահպանված այդ պարը պարում են հավաքված կանայք և տղամարդիկ՝ պտտվելով անտեսանելի շրջանի շուրջը, բաց ափերը պարզած դեպի երկինք և այնուհետև ձեռքերը տանում են դեպի իրենց սրտերը: Երաժշտության և երգերի ռիթմով

37 Michèle Nicolas, sous la direction de Gilles Veinstein, *Pèlerinage aux gisants d'Anatolie, Les Ottomans et la mort, permanences et mutations*, Brill New-York, 1996.

շարժումները սկզբում դանդաղ են, բայց հետո արագանում են: Յուրաքանչյուր շրջանի ալեվիական բնակչությունն ունի իր սեփական *սեմահի* պարը, և հաշվարկված է այդ պարի մոտ 100 տարբերակ: Ամենից շատ կատարված պարերն են «Քառասունների սեմահը» *(Kirklar Semahi)*՝ կապված Մուհամմեդի երկնային համբարձման հետ Քառասունների[38] խնջույքի ժամանակ, կամ «Կռունկների սեմահը» *(Turna Semahi)*՝ կապված տարվա եղանակների և նրա թռչունների թռիչքի հետ:[39]

38 Տես գլուխ 9
39 Նույն տեղը:

4.

Այնի Ջեմի (*Ayn-I Cem*) համայնքային ծիսակարգը

Ալևիզմի ամենակարևոր արարողակարգը Այնի Ջեմի (Ayn-I Cem) համայնքային ծիսակարգն է: Մինչև վերջերս (շուրջ 20-25 տարի), այն ժամանակահատվածում, երբ համայնքի անդամների մեծ մասը ապրում էր գյուղական վայրերում, Ջեմի ժողովները տեղի էին ունենում գաղտնի, միշտ գիշերվա ժամերին և մեծ մասամբ ձմռանը: Անատոլիայի խիստ ձմեռը և դրանից բխող հաղորդակցության խնդիրները անվտանգություն էին ապահովում պատժի վախով շրջապատված միջավայրում: Հինգշաբթի գիշերը՝ լույս ուրբաթ, մոմերը վառված էին:

Այսօր, զանգվածային գյուղական արտագաղթով և Թուրքիայի մեծ քաղաքներում ալեվիների ուժեղ համամասնությամբ, ստեղծվել են հատուկ վայրեր՝ *Ջեմի տուն* (Cem evi) անունով, և ծիսակարգի օրը հարմարեցվել է մասնագիտական կյանքի հարկադրանքներին: Այսուհանդերձ, հազվադեպ չեն այն ժողովները, որոնք գումարվում են շաբաթ կամ կիրակի օրերին:

Գոյություն ունեն բազմաթիվ հատուկ ծիսակարգեր, ինչպիսիք են՝ *Musahiplik Cemi*-ն (Երկնային կյանքի եղբայրության օրինականացում), *Koldan Kompa Cemi*-ն՝ (հատուկ ժողով՝գործած մեղքերի համայնքային դատապարտման համար), *Irsad Cemi*-ն (երիտասարդների դաստիարակության և Երկնային Ուղու դասերի մասին) կամ *Dar'dan indirme Cemi* (համայնքի անդամի մահվան քառասուներորդ օրը):

Ամենակարևոր Cem-ը՝ *Միության Ջեմը,* (Birlik Cemi), կազմակերպվում է ձմռան ընթացքում (հունվարին կամ փետրվարին), և նրա նպատակն է հաշվի առնել այն վայրերը, որոնք համայնքում խնդիրների են հանդիպել անցած տարվա ընթացքում: Անցյալում, այնտեղ կարգավորում էին ջրի ռեսուրսների հատկացումը արոտավայրեր գնալու ժամանակ, դրամական գումարները՝ օգտագործված որպես Dede-ի (*Hakkullah*) միջոցներ և օգնություն կարիքավորներին: Այսօր այնտեղ հիմնականում քննարկվում են համայնքի անդամների գործած սխալներն ու մեղքերը, ինչպես նաև մերձակայքի հակամարտությունները...

Դեդէն և տասներկու ծառայությունները (*Oniki Hizmetler*)

Դեդէն արարողակարգի գլխավոր կերպարն է: Համայնքին (*Muhabbet*) ուղղված իր ելույթի միջոցով նա հաստատում է իր սերնդակիցների (*Օջակ - Ocak*) ուսուցանումն ու ավանդույթները: Ահա թե ինչու տարբերություններ կարող են լինել արարողակարգի կատարման մեջ: Նա հավաստում է կարգադրությունների (*Buyruk*) իմացության իր հոգևոր և հասարակական հեղինակությունը, Ճանապարհի հենակետերը (*Erkan*) և իր սերումը Մուհամմեդ մարգարեի ու Իմամ Ալիի ընտանիքի ժառանգներից (*Ehli Beyt*): Մի բարդ աստիճանակարգ կա համայնքի իմաստունների միջև, և նրանք կարող են կրել Մուռսիդի (*Mürsid*) տիտղոսներից (ամենակարևոր տիտղոսը)՝ *Պիր* կամ *Ռեհբեր*:

«Ըստ Բույրուկի գրքույկների, որոնք ներառում են ալեվիների հավատքի հիմնական սկզբունքները և միշտ կենդանի սովորույթները, Դեդէ պետք է ունենա ներքոհիշյալ բնութագրերը՝ լինել մարգարեի սերունդ, գործել որպես դաստիարակ և համայնքի համար բարոյական ուղեկից, լինել ուսյալ և օրինակ ծառայել սեփական բնավորությամբ և կենսակերպով, բառացիորեն հետևել ալեվիների սկզբունքներին և ավանդույթներին: Նրա գործառույթներն են առաջնորդել և լուսաբանել համայնքը սոցիալապես և կրոնական ձևով, ղեկավարել եկեղեցական ծեսերը, պատժել մեղավորներին և ծառայել որպես հաշտարար վեճերի ժամանակ, վարել արարողակարգերը, ինչպիսիք են ամուսնություններն ու հուղարկավորությունները":[40]

Այս կերպ է, որ Դեդէ կազմակերպում է միությունում հարգված անդամների խորհուրդ, նախքան *Ջեմի* արարողությունը: Այս խորհուրդը (*Görgü*) լսում է մեկը մյուսի հանդեպ ունեցած հնարավոր մեղադրանքները, ճշտում է ներքին խնդիրները և վերականգնում անհրաժեշտ ներդաշնակությունը, նախքան *Ջեմի* վարման արարողության բացումը, քանի որ հրամայական է, որ արարողակարգը տեղի ունենա սրտերի և հոգիների միությունում և ոչ թե բաժանման մեջ:

Այդ ժամանակ Դեդէ ստանում է *Մուռշիդ* կամ *Պիր* տիտղոսը, Տասներկու Ծառայություններից առաջինի գործառույթը, որը ներառում է արարողակարգը: Նրա խնդիրն է փոխանցել իր գիտելիքը և ցույց տալ մասնակիցներին Ճանապարհը՝ Կատարյալի (*Insan-i-Kamil*) կարգավիճակին հասնելու համար: Որոշակիորեն նա իր ճառը հաստատում է համայնքում և արտասանում է սաղմոսներ (*gülbank*) և աղոթքներ (*dua*): Նա իրեն մասնակից է ընտրում *Ռեհբերին* (ուղեկցորդին)՝ երկրորդ ծառայողին իր պարտականությունների մեջ, և նշում է տասը այլ անձանց, ովքեր կկատարեն հետևյալ գործառույթները՝

- *Պեյիկջի*, ով տեղեկացնում է մասնակիցներին և նրանց դիմավորում
- *Մեյդանջի*, ով տեղավորում է մասնակիցներին
- *Կապիջի*, ով հսկում է դուռը անկոչներից

40 Ali Yaman, *Kizilbash Alevi Dedes*, 2006.

- *Գյոզջյու*, ով հետևում է կարգուկանոնին և մասնակիցների ճիշտ պահվածքին
- *Չերաղջու*, ով վառում է ճրագները
- *Սյուպյուրգեջի*, ով ապահովում է տեղի մաքրությունը
- *Սոֆրաջի*, ով զբաղվում է ընթրիքի պատրաստությամբ
- *Սաքաջը*, ով ջուր է բաժանում
- *Սեմահջի*, ով առաջնորդում է Սեմահի ծիսական պարը
- *Օզանը*, ով սազ է նվագում և երգում:

Ռեհբերը ղեկավարում է Մյուռշիդի մուտքը և ընդունելությունը ժողովում: Մինչ նրան խոսքը տալը, նա աղաղակում է ունկնդիրների վրա:[41] «Նա (Աստվա՛ծ): Լուսավորյալնե՛ր: Մեր ժողովները Քառասունների ժողովն է, մեր առաքելությունը Սուրբ Հյուսեինի նշանի տակ է, մեր հենարաններն են Ճշմարիտը, Մուհամմեդը, Ալին, մեր ժամապահը, մեր պահապանը Հիզիր ավետաբերն է: Թո՛ղ որ այս օգնությունը բարեբեր լինի, Լուսավորյալնե՛ր»: /

(Hü erenler ! Cemlerimiz Kırklar cemi, görevimiz Hazret-i Hüseyin'nin yeri, yardımcımız Hak, Muhammed, Ali; gözcümüz, bekçimiz Hızır Nebi ola. Hayır himmet erenler !)

Հետո արարողակարգը սկսելու համար Դեղն արտաբերում է հետևյալ խոսքերը.[42]

«Ալլահ, Ալլահ... թո՛ղ փառաբանվի քո հավատքը, թո՛ղ Ճշմարիտ-Մուհամեդ-Ալին գա քեզ օգնության, թո՛ղ Ճշմարիտ-Մուհամեդ-Ալին քեզ չհեռացնի այն ամենից, ինչ արդար է, թո՛ղ քո արդարությունը լինի Սուրբ Ալիին արդարությունը, պաշտպանի՛ր քեզ անարդարությունից, եղի՛ր արդարի կողքը, թո՛ղ Ճշմարիտի Լուսավորյալները չմոլորվեն, չհեղինակազրկվեն, մի՛ հեռացրու քեզ Երեքների, Հինգերի, Տասներկու Իմամների և Քառասունների շարքերից ու աչքերից: Հավատքի մեջ գտի՛ր նրանց բարեխոսությունը, որը քոնն է: Լեզուն գալիս է մեզնից, շունչը գալիս է Սուրբ սուլթան Հասի Բեկթաշից: Նա (Աստված) երևում է այդ ճշմարտությունների մեջ»:

(Allah, Allah... Hizmetin kutlu olsun, yardımcın Hak-Muhammed-Ali olsun. Hak-Muhammed-Ali seni doğruluktan ayırmasın. Adaletin Hazret-i Ali'nin adaleti olsun. Haksızı görüp gözetmeyesin. Doğrudan yana olasın. Hak'ka erenler şaşırıp düşürmesin. Üçlerin, Beşlerin, Oniki İmamlarin, Kırkların katarından didarından ayırmasın. Üzerine aldığın hizmetten şefaat bulasın. Dil bizden, nefes Hünkar Hacı Bektaş Veli'den ola. Gerçekler demine Hü !)

Հետո այս աղոթքը՝[43]

«Ալլահ, Ալլահ... թո՛ղ որ այս երեկոն ուրախ լինի, թո՛ղ որ բարիքները ցանկալի լինեն այստեղ, թո՛ղ որ չարիքները հեռանան այստեղից: Թո՛ղ որ անհավատները վերանան: Թո՛ղ որ մեծահոգի և թշվառ մարդիկ բարեկեցիկ լինեն: Թո՛ղ որ մեզ օգնության գա Ճշմարիտ-Մուհամեդ-Ալին: Թո՛ղ որ մեր ժողովը լինի Քառասուն հոգու ժողով: Թո՛ղ մեր պաշտամունքները ընդունվեն Մուհամեդ-Ալիի վանքի համաձայնությամբ: Թո՛ղ Ճշմարտության Լուսավորյալները մեզ թույլ չտան հեռանալ Մարգարեի Ընտանիքի Ճանապարհից: Թո՛ղ Երեքների, Հինգերի, Յոթերի, Տասներկու Իմամների, Տասնչորս Անարատ Անմեղների, Տասնյոթ Ուղեկիցների և Քառասունների բարեբեր օգնությունը ձեզ վրա լինի և ձեզ հայացք ուղղի: Թո՛ղ մենք զգուշացված և թաքնված լինենք Սատանայի չարություններից և անհավատների նողկանքից: Թո՛ղ քո բարերարությունը սպեղանի լինի մեր տառապանքներին, հավատք մեր սրտերին, բուժում մեր հիվանդություններին:

41 Mehmet Yaman, *Alevilikte cem,* Can Yayinlari, 2003
42 Mehmet Yaman, *Alevilikte cem,* Can Yayinlari, 2003

43 Նույն տեղը

Բոլոր նրանք, ովքեր ասում են Ալլահ, Ալլահ, դու Ճշմարիտ-Մուհամեդ-Ալի, բարձրացրո՛ւ ուխտերը, որ նրանք են ստեղծել, և նրանց սրտերի ցանկությունները: Հնարավորություն տուր բոլոր մարդկային էակներին լինել խաղաղության մեջ և ապրել եղբայրության մեջ: Օգնություն մի՛ խնդրեք անհավատներից կամ գովելի մարդկանցից: Պաշտպանված եղեք տեսանելի և անտեսանելի չարիքներից: Մեր աշխատանքը անարդյունք մի՛ համարիր, և եթե սխալներ գործենք, ների՛ր դրանք»:

« Allah, Allah... Akşamlar hayrola, hayırlar fethola, şerler defola. Münkirler mât ola. Hanedan-ı fukara mamur ola. Hak-Muhammed-Ali yardımcımız ola. Cemimiz Kırklar cemi ola. İbaretlerimiz Muhammed-Ali Dergahı'nda kabul-ü makbul ola. Hak erenler bizleri Ehl-i Beyt'in yolundan ayırmaya. Üçlerin, Beşlerin, Yedilerin, Oniki İmamların, Ondört Masum-i Pâk'larin, Onyedi Kemerbestlerin, Kırkların hayır himmeti üzerinizde hazır ve nazır ola. Şeytanın şerrinden, münkirin mekrinden saklaya, bekleye. Dertlerimize deran, gönüllerimize iman, hastalarımıza şifa ihsan eyleye. Şu anda Allah Allah diyen canların Hak-Muhammed-Ali dilde dileklerini, gönülde muratlarını vere. Bütün insanların barış içinde, kardeşce yaşamalarını nasip eyleye. Namerde değil, merde bile muhtaç eylemeye. Görünür görünmez kazalardan, belalardan esirgeye. Emeklerimizi boşa çıkarmaya. Günahlarımız var ise bağışlaya. »

Ներկա գտնվողներին ներկայացնելով այն անձանց, ովքեր պաշտոն են զբաղեցնելու Տասներկու Ծառայություններում, Դեդէն բոլորին դիմում է ճառով, որի ընթացքում բացատրում է 4 Դռների և 40 Շեմերի ուսմունքների դասավանդման ուղին:

Ահավասիկ դասավանդման մեկ բնորոշ օրինակ, որ ես լսել եմ.

- Երեքն են՝ Ճշմարիտը, Մուհամմեդը, Ալին:

- Հինգն են՝ Մուհամմեդը, Ալին, Ֆաթիման, Հասանը, Հուսեյնը:

- Յոթն են՝ Ճշմարիտի սիրահարերը, Հաթային (Շահ Իզմայիլ), Նեսիմին, Ֆուզուլին, Կուլ Հիմմետը, Վիրանին, Յեմինին և Պիր Սուլթան Աբդալը:[44]

- Տասներկուսն են Իմամները՝ Ալին, Հասանը, Հուսեյնը, Զեյնել Աբիդին, Մուհամմեդ Բակիրը, Կաֆերի Սադիկը, Մուսա Կազիմը, Ալի Ռիզան, Մուհամմեդ Տակին, Ալի Նակին, Հասան Ասկերին, Մուհամմեդ Մեհդին:

- Քառասունն են ժողովում հավաքված Սրբերը, որոնք ուղեկցում են մարդկանց ժամանակի միջով:

- Բայց Երեքն են նաև արյունը, հոգին և մարմինը:

- Հինգն են չորս բնական տարրերը (օդ, կրակ, ջուր և հող) և մարդկային էակը, որը կազմված է Երեքից (արյուն, հոգի և մարմին):

- Յոթն են չորս բնական տարրերը և աշխարհի երեք բաղկացուցիչները՝ տղամարդը, կինը և երեխան:

- Երեքը, Հինգը և Յոթը Ճշմարիտի ապացույցն են, այսինքն՝ մարդկության:

- Տասներկուսն ու Քառասունը այս ուսմունքի կրողներն են և պետք է ուղղորդեն մարդուն դեպի ճիշտ կրոնը՝ մարդկային սերը:

Օզանը և Սուրբ երգերը

Երաժիշտը և երգիչը, ով զբաղեցնում է *Օզանի* պաշտոնը (նրան անվանում են նաև *Զակիր*), արարողակարգում ունի առաջնային դեր: Իր սազով նվագակցելով, նա փոխանցում է սուրբերգերը, որոնց տեքստերի մեծամասնությունը վերցված են ալեվի մեծ պոետներից: Դրանք կանոնակարգվում են այսպես՝

- Nefes (շունչ)՝ երգված առանց գործիքի

- Deyis՝ բանաստեղծություն երգված և սազով նվագակցված

44 Ալեվիզմի Յոթ մեծագույն բանաստեղծները: Տե՛ս գլուխ 10:

- Mersiye՝ օրիներգ՝ նվիրված նահատակ Իմամ Հուսեյնին
- Miraclama՝ օրիներգ Մուհամեդի վերելքի մասին՝ Քառասունի խնջույքում
- Duvaz-Imam՝ տասներկու Իմամներին հասցեագրված ներբող
- Devriye՝ օրիներգ մարգարեության և սրբազանության վերաբերյալ

Օզանը ժողովին մշտապես խնդրում է վերսկսել երգերը՝ «սիրո հետ» (ask ile):

Ահա մեկ օրինակ Nefes-ից. «Ալին ինձ հայտնվեց», որը շատ տարածված է ալեվիների մոտ և գրվել է Հիլմի Դեդի կողմից.

Հայելին պահեցի դեմքիս առջև, Ալին ինձ հայտնվեց,
Ես նայեցի ինքս ինձ, Ալին ինձ հայտնվեց,
Հայր Ադամի և Եվայի մեջ, Աստծո անունների և հատկությունների մեջ, Տիեզերքի շրջանի մեջ, Ալին ինձ հայտնվեց,
Դա Նույն է՝ Աստծո կողմից փրկված, դա Աստծո ընկեր Աբրահամն է, դա Աստծո ձայնն է Սինայի լեռան վրա, Ալին ինձ հայտնվեց,
Նա Հիսուսն է՝ Աստծո միտքը, նա Երկու Աշխարհների Թագավորն է, նա հավատացյալների օգնությունն է, Ալին ինձ հայտնվեց,
Ալին է սկիզբը, Ալին է վերջը, Ալին է թաքնվածը, Ալին է ակնհայտը,
Ալին է գեղեցիկը, Ալին է մաքուրը, Ալին ինձ հայտնվեց,
Ալին է հոգին, Ալին է սիրեկանը, Ալին է կրոնը, Ալին է հավատքը
Ալին է բարեգութը, Ալին է գթասիրտը, Ալին ինձ հայտնվեց,
Հիլմին մի թշվառ մուրացկան է, ես տեսնում եմ նրան, ես կանչում եմ նրան.
Ուր էլ ուղղվում է իմ հայացքը, Ալին ինձ հայտնվեց:

Երգի մեկ այլ օրինակ. ներբող՝ նահատակ Իմամ Հուսեյնին՝ մի *mersiye*.

Թափվում են խոնավ արցունքները հավատացյալների,
Ա՜հ, քո ցավերը Իմամ Հուսեյն,
Քո արյունն է հոսում Կերբալայի անապատում,
Ա՜հ, քո ցավերը Իմամ Հուսեյն,
Իմամների վսեմ Բազեն ընկավ որպես նահատակ,
Ա՜հ, քո ցավերը Իմամ Հուսեյն,
Մարգարեի Ընտանիքի ձայնը հառնեց Մարտի դաշտից,
Ա՜հ, քո ցավերը Իմամ Հուսեյն
Արքայությունը Սերունդների բաց է հարգարժան նահատակի համար, Վերջին Դատաստանի Հրեշտակները շաղ են տվել արցունքները արյան,
Բոլոր Յոթանասուներկու քաջերը նահատակ դարձան,
Ա՜հ, քո ցավերը Իմամ Հուսեյն,
Միայն Իմամ Զեյնելը ողջ մնաց՝ Ալիի տոհմից, երջանիկ, որ ծվեն-ծվեն չեն արել, սերունդը Մարգարեի Ընտանիքի,
Հարյուր քսանչորս հազար մարգարեներ սգի մեջ են,
Ա՜հ, քո ցավերը Իմամ Հուսեյն,
Անիծյալ լինի Յեզիդի սերունդը՝ ատելությամբ լի թշնամին, որի դեմքը ծածկված է արյամբ,
Դու թիրախ ես ընտրել Իմամների սերունդը,
Ա՜հ, քո ցավերը Իմամ Հուսեյն,
Այդ փոքրոգին այստեղ է, որը ճզմում է սիրտս ցավից,
Մարգարեի Ընտանիքի լույսն այստեղ է՝ Կերբալայում,
Եթե ես արյուն եմ լալիս տասներկու ամիս շարունակ,
իմ պատճառներն ունեմ,
Ա՜հ, քո ցավերը Իմամ Հուսեյն:

Մոմեր և սուրբ պարեր

Չերագչին կոչված է մոմերը վառելու համար՝ հավերժացող ճշմարտությունների խորհրդանիշ: Դեղն արտասանում է հետևյալ աղոթքը՝

«Ալլահ... Ալլահ...
Թո՛ղ որ մեր ճրագները Խորասանից հասնեն մեզ ու լինեն մեր հավերժական ուղեկիցները:
Թո՛ղ որ մեր ճրագներն այրվեն ու սպառվեն Ճշմարիտ-Մուհամեդ-Ալիի սիրո համար:
Թո՛ղ որ մեր ճրագներն այրվեն ու սպառվեն մեր իմաստուն սուրբ սուլթան Հաշի Բեկթաշի համար:
Թո՛ղ որ մեր ճրագներն այրվեն ու սպառվեն նահատակների արքա Իմամ Հուսեյնի համար:
Թո՛ղ որ մեր ճրագներն այրվեն ու սպառվեն Կերբալայի նահատակների համար:
Թո՛ղ որ մեր ճրագներն այրվեն ու սպառվեն մեր Պիր սուլթանի և բոլոր նահատակների սիրո համար:
Թո՛ղ որ մեր ճրագներն այրվեն ու սպառվեն բոլոր հոգիների, բոլոր ուղեկիցների և բոլոր իմաստունների սիրո համար, որոնք եկել անցել են մեր օջախներով ու ժողովներով:
Թո՛ղ որ մեր ճրագներն այրվեն հավերժ, թող որ լուսավորեն մեր Ճանապարհը, որ ամրապնդեն մեր միությունը և մեր իրականությունը: Նա (Աստված) ներկա է այդ ճշմարտության մեջ»:

Վերջապես, *Օզանը* հրավիրում է *Սեմահի* սուրբ պարին: Այն պարվում է երեք փուլով, որը համապատասխանում է բարձրացմանը՝ ուժգին զմայլանքի մեջ (*agirlama, yürüme, hizlasma*): Համայնքի ժողովն աջակցում է պարողներին, որոնք պտտվում են երևակայական շրջանի շուրջը հետևելով մեղեդու և երգի ռիթմին: Խոսքերը հիմված են բացականչությունների վրա, որոնք ուղղվում են պարողներին՝ տեմպը նշելու համար (*Hudey, dost, yürü...*):

Գոյություն ունեն Սեմահի բազմաթիվ տարբերակներ՝ Ալի նյուռ սեմահը, Կըրատ սեմահը, Թյուռնա սեմահը, Կըրկլյար սեմահը, Գոնյուլլեր սեմահը, Յա հըզըր սեմահը, Ալաչյամ սեմահը, Նյովրյուզ սեմահը, Չապրազ սեմահը, Չյորլու սեմահը, Դեմ գելդի սեմահը, Լադիկ սեմահը, Չարկ սեմահը, Յաթիր սեմահը, Մուհամմեդ Ալի սեմահը, Ջեբրաիլ սեմահը, Չոբան բաբա սեմահը, Շիրան սեմահը, Էրզինքյան սեմահը, Հյուբյար սեմահը, Սարըկիզ սեմահը, Հաջի Բեկթաշ սեմահը:

Ալիի Լույսի Սեմահը ուղեկցվում է այս բառերով՝
«Ալին է լույսը, Ալին լույս է
Մուհամմեդն է լույսը, Մուհամմեդը լույս է
Երբ Ալին պատերազմ է գնում
Մայր Ֆաթիման հայտարարում է Լույսը:
Երբ Ալին վերադառնում է պատերազմից
Մայր Ֆաթիման դուրս է գալիս և երերում
Ես Հաթայ եմ մի շեղվիր Ճանապարհից
Թող նա պահպանված լինի Ճանապարհը լքելուց
Ա՜խ հոգիս, հոգիս, ա՜խ վարդս, վարդս
Դու նման ես իմ ընկերոջ մարմնի մասերին
Դու նման ես Ճամփեքին, որոնցով քայլում է իմ արքան
Եթե դու սիրում ես հոգին, որ գալիս է Մուհամմեդ Ալիից
Կռունկս դու գնում ես դեպ Ալին, տուր ինձ մի իսկական կապ
Կռունկս դու գնում ես դեպ Ալին, կռունկս դու գնում ես դեպի Առյուծը Աստծո ... Նա
Հույսդ դնում ես Հասանի և Հուսեյնի օգնության վրա, տուր ինձ մի իսկական կապ
Կռունկս դու գնում ես դեպ Ալին, կռունկս դու գնում ես դեպի Առյուծը Աստծո ... Նա»:

Այնի Ջեմի արարողությունը եզրափակվում է մասնակիցներին խմիչք (*sakka*) և պատառիկ (*lokma*) բաժանելով:

5.

Ալեվիզմը և չորս բնական տարրերը

Նիհալ Բայրամը ճշգրտությամբ ամփոփում է, որ «ալեվիների հավատքը հիմվում է չորս բնական տարրերի՝ կրակի, հողի, օդի, ջրի և բնության տարրերի՝ սիրո վրա»:

Բնության հետ ներդաշնակության մշտական որոնումը, հարգանքը ծառերի, բույսերի, լեռների, գետերի, ինչպես նաև կենդանիների հանդեպ սուրբ պարտականություն է:

Անատոլիան՝ այդքան ժողովուրդների և քաղաքակրթությունների օրրանը, եղել է բնության հետ կապված բազմաթիվ հիմնադիր առասպելների հանդիպման վայրը: Ըստ էության, ալեվիզմի կապը բնությանը հետ նստակյաց և քոչվոր ժողովուրդների պաշտամունքների միաձուլման արդյունքն է:

Երբ հայտնվեցին քոչվոր թուրքմենները 11-րդ դարում, Անատոլիան արդեն հազարավոր տարիներ էր, ինչ բնակեցված էր, որտեղ իրար էին հաջորդել մեծ քաղաքակրթություններ՝ Հաթթի, Հիթթիթ, Միտանի, Ուրարտու, Հայաստան, Մեդ, Պարսկաստան, Սարմաթ, Սագարթ, Հունաստան, Հռոմ և Բյուզանդիա:

Անատոլիական առաջին քաղաքակրթությունների հիմնարար առասպելներն ամբողջովին կապված են բնության հետ՝ *Արիննա* արևի աստվածուհին և պտղաբերության աստված *Թելիբինյուն*՝ հիթթիթների մոտ, *Կիբել* բնության աստվածուհին՝ փռյուգիացիների մոտ:

Կիբելի լեգենդը (որ հույներն ու հռոմեացիները փոխառել են *Սիբել* անունով) տեղեկացնում է լեռան վրա լքված երեխայի մասին, որին մեծացրել են առյուծները: Շնորհված լինելով համընդհանուր բժշկության ձիրքով՝ նա պաշտպանում է երեխաներին և վայրի կենդանիներին:

Զրադաշտությունը

Դուրս մղելով բազմաստված կրոններին, զրադաշտությունը համարվում է առաջին կրոնը, որը տարածվում է մեկ աստծո և աշխարհի արարչի՝ *Ահուռա-Մազդայի* շուրջը: Ալեվիզմը այս հավատքից վերցրել է մի մեծ մաս, որը կապված է բնության հետ: Զրադաշտության մեջ *Ահուռա-Մազդան* արարիչ ուժն է աշխարհի և չորս բնական տարրերի՝ ջուր, հող, կրակ և օդ: Նա ստեղծել է նաև մարդուն, տալով նրան ազատ կամք, որպեսզի նա միշտ հնարավորություն ունենա ընտրություն կատարել լավի և վատի միջև: Զրադաշտության երեք պատվիրաններն են՝ «լավ միտք, լավ խոսք, լավ գործողություն», և միայն մեկ ճանապարհ կա՝ ուղղամտության ճանապարհը:

Կարևորագույն պատվիրանների մեջ են մտնում ջրի, հողի, օդի և կրակի մաքրության պահպանումը: Օդը, ջուրը և հողը աստվածային այն տարրերն են, որոնք գոյություն ունեն առանց մարդու միջամտության, մինչդեռ կրակը աստվածային տարր է, որի գոյության համար անհրաժեշտ է մարդու միջամտությունը: Զրադաշտականներն ամենից շատ երկրպագում են սուրբ կրակը, քանզի նա կապն է արարիչ Աստծո և մարդկանց միջև: Ոչ մի չարիք չպետք է կատարվի կենդանիների նկատմամբ և նրանց զոհաբերումը պետք է դիտվի որպես մարդկային ոճիր նրանց նկատմամբ:

Մարդկային հասարակության կազմակերպվածքում զրադաշտությունը փառաբանում է տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը, դատապարտում է ստրկությունը և ենթակայությունը, շեշտը դնում է բերքահավաքի կարևորության վրա և մերժում է անգործության, ուրիշի հաշվին ապրելու, ուրիշի ունեցվածքի գողության ամեն մի գաղափար: Նա դատապարտում է պաշտամունքի վայրերի երկրպագությունը և հաստատում է, որ Աստծո տունը ոչ այլ տեղ է, քան մարդու սրտում և մտքում:

Ինչպե±ս կարելի է այստեղ համապատասխանություն չտեսնել ալեվիների սկզբունքների հետ՝ վերագրված Հաջի Բեկթաշ Վելի ուսմունքին:

Կրթե՛ք մեր կանանց. մի ժողովուրդ, որ չի կրթում կանանց, չի կարող հզորանալ:

Մեր կարծիքով տղամարդկանց և կանանց միջև տարբերություն չկա:

Նրանք, ովքեր խուսափում են աշխատանքից, տեղ չունեն մեր մեջ:

Ամենամեծ իմաստությունն աշխատանքն է:

Մարդկային արարածի կատարելությունը հոգու գեղեցկությունն է:

Մի նախատեք ո՛չ մի ժողովրդի, ո՛չ մի մարդու:

Ճշմարիտն էլ ավելի տեսանելի է, քան արևը:

Զրադաշտության մեջ բարու և չարի գաղափարները ներկայացված են երկու մտքով՝ ծնունդով և հակադրությամբ, որն առկա է յուրաքանչյուր ապրող կենդանի էակի մեջ: Բարու և չարի մտքերը հավերժական պայքարի մեջ են, ինչպես ցերեկը և գիշերը, կյանքը և մահը: Եթե մարդկային էակը նվիրվի բարությանը, նա միայն բարություն կստանա, իսկ եթե տրվի չարությանը, չարը նրան կկլանի: Բարությունը լույս է, որ գալիս է քո խորքից, և այդ բարությունը հատուկ է մարդուն: Մարդու մեջ երկու միտում կա. մեկը նրան տանում է դեպի լավը, մյուսը՝ դեպի վատը: Միշտ պետք է ընտրել լավը, և դա կատարվում է հաստատուն դիալեկտիկայով: Բայց մարդն է ընտրողը, նա պարտականություն չունի, բայց պետք է ստանձնի իր պատասխանատվությունը:[45] Կրակը՝ աստվածային լույսը, խորհրդանշում է բարու հաղթանակը

45 Այս հասկացությունը կա ալեվիզմում, երբ յուրաքանչյուր ոք պետք է «իր վրա վերցնի իր արարքների հետևանքների պատասխանատվությունը (...) համայնքի առջև, եթե մեղավոր է ճանաչվում իր վատ գործերի կամ վատ խոսքերի համար»:

չարի նկատմամբ:

Այս պայքարի հիմքը Նովրուզն է, որն ալեվիների կողմից տոնվում է ամեն տարի մարտի 21-ին և որն ունի պարսկական ծագում: Չնայած որոշ ժամանակակից ալեվի հեղինակներ փորձել են նրան իրավազոր դարձնել մուսուլմանական հղումներով[46], այդ ամսաթիվը՝ գարնանային գիշերահավասարի օրը, երբ ցերեկն ու գիշերը հավասար են, ցույց է տալիս այդ պայքարը, որտեղից պետք է դուրս գա լույսը և ահա թե ինչու մեծ կրակներ են վառում, որպեսզի տոնեն չարի նկատմամբ բարու հաղթանակը:

Ահա մի լեգենդ, ճիշտ այնպես, ինչպես պատմել են քրդերը.

«Շատ ժամանակներ առաջ երկու մեծ գետերի՝ Տիգրիսի և Եփրատի միջև կար մի երկիր, որը կոչվում էր Միջագետք: Զագրոսի լեռնաշղթայի վերևում գտնվող մի փոքրիկ քաղաքում հսկայական քարե դղյակ կար՝ մեծ աշտարակներով և բարձր, մուգ պատերով:

Այդ դղյակում ապրում էր մի ասորի դաժան թագավոր՝ Դեհակ անունով: Նրա զորքերը ահաբեկում էին երկրի բոլոր մարդկանց: Նրա նախորդ բոլոր թագավորները բարի էին ու սիրալիր և խրախուսել էին ժողովրդին ոռոգել հողը և բերրի պահել իրենց դաշտերը: Ժամսիդ թագավորի գահակալության օրոք էր, երբ գործերը սկսեցին վատ ընթանալ: Նա իրեն դասել էր արևի աստծուց վեր և հետզհետե կորցրել էր իր ժողովրդի բարեհաճությունը: Մի չար ոգի՝ Ահրիման անունով, օգտագործեց այդ հնարավորությունը և ընտրեց Դեհակին՝ գահին տիրանալու համար: Այդ ժամանակ նա սպանեց Ժամսիդին:

Չար ոգին՝ ծպտված խոհարարի դիմակի տակ, Դեհակին սնում էր արյունով և կենդանիների մսով: Մի օր, երբ Դեհակը գովում էր իր մսե կերակուրները, նա շնորհակալություն հայտնեց և խնդրեց համբուրել արքայի ուսերը:

Այդ պահին լույսի մի մեծ պայթյուն եղավ, և երկու հսկայական սև օձեր հայտնվեցին արքայի ուսերին: Սարսափահար Դեհակն ամեն ինչ արեց՝ դրանցից ազատվելու համար: Ահրիմանը (չարը) դարձյալ կերպարանափոխվեց, և այս անգամ որպես բժիշկ, Դեհակին ասաց, որ նա երբեք չի կարողանա ազատվել օձերից, և երբ նրանք սովածանան, Դեհակը սոսկալի ցավ կզգա և կթեթևանա միայն այն ժամանակ, երբ օձերին կերակրեն ջահել տղաների ու աղջիկների ուղեղով:

Այդ սև օրվանից ի վեր դղյակի շրջակայքի քաղաքների և գյուղերի միջից երկու երեխա էին ընտրում: Նրանց ուղեղները պետք է դրված լինեին դղյակի դռների մոտ՝ մեծ, փայտե դույլի մեջ: Ուղեղները տրվում էին օձերին: Այս արարողությունը տեղի էր ունենում ամեն օր:

Այդ օրվանից սկսած արևը դադարեց շողալ: Պտուղները, ծառերը, ծաղիկները թառամեցին: Հսկայական ձմերուկները, որ աճում էին այնտեղ դարեր ի վեր, նեխեցին: Միրամարգերն ու կաքավները, որոնք սովորություն ունեին սիգաճեմել հսկա նռենիների շուրջը, չվել էին: Նույնիսկ արծիվներն էին հեռացել:

Այդ դղյակի մոտ ապրում էր մի դարբին: Անունը՝ Կավա: Նա և իր կինը ատում էին Դեհակին, քանի որ նա իրենց 17 երեխաներից 16-ին արդեն վերցրել էր: Մի օր դղյակից հրաման եկավ, որ Կավայի վերջին աղջիկը պետք է սպանվեր և նրա ուղեղը տարվեր դղյակի դռան մոտ, հենց հաջորդ օրը: Կավան մտածեց ամբողջ գիշեր, թե ինչպես փրկի իր վերջին աղջկան Դեհակի օձերից: Նրա մեջ մի

46 Ալեվիները տոնում են Նովրուզը, որովհետև դա այն օրն է, «երբ Մուհամմեդը դարձել է մարգարե, երբ ծնվել է Ալին, երբ իրար միացան Ալին ու Ֆաթիման, երբ հիմնվեց 40-ի ժողովը, երբ Հաջի Բեկթաշ Վելին հասավ Անատոլիա», ըստ Մեհմետ Էոկյոզե Ջանի, *Ben dostlarin Mihmaniyim, 1999.*

միտք հղացավ ....

Հաջորդ առավոտ նա նստեց իր ձին՝ դանդաղ քարշ տալով երկու փայտե դույլերով սայլ, դրանք տարավ դղյակ: Դղյակի դռները բացվեցին և երկու պահակներ վերցրին դույլերն ու տարան դղյակ: Ուղեղները տվեցին երկու հսկա քաղցած օձերին: Երբ Կավան վերադարձավ տուն, կնոջը գտավ ծնկաչոք արտասվելիս փայտե կրակի առջև: Նա նույնպես ծունկի եկավ և կամացուկ բարձրացրեց իր թավշյա մեծ վերարկուն: Վերարկուի տակ նրանց դուստրն էր: Իր հարազատ աղջկան զոհաբերելու փոխարեն, Կավան զոհաբերել էր մի ոչխար և ոչխարի ուղեղը դրել դույլի մեջ: Եվ ոչ ոք ոչինչ չէր նկատել: Շուտով բոլոր բնակիչները խոսեցին այդ իրադարձության մասին:

Նրանք բոլորն էլ նույնն արեցին: Այսպես, հարյուրավոր երեխաներ փրկվեցին: Նրանք ապաստանեցին Զագրոսի լեռներում, որտեղ ոչ ոք նրանց չէր կարողանա գտնել: Նրանք սովորեցին՝ ինչպես ապրել իրենց սեփական միջոցներով, ինչպես հեծնել վայրի ձի, ինչպես որսորդություն անել, ձուկ որսալ, երգել ու պարել: Կավան նրանց սովորեցրեց կռվել, որպեսզի մի օր այդ բռնակալի վերջը տան: Ժամանակ անցավ, և Կավայի զորքը պատրաստ էր գրոհել դղյակի վրա: Նրանք հաղթեցին Դեհակի մարդկանց, և Կավան կտրեց չար թագավորի գլուխը: Նա բարձրացավ լեռան գագաթը, մի մեծ կրակ վառեց, որպեսզի Միջագետքի բնակիչներին ասեր, որ նրանք ազատ էին: Ի պատասխան հարյուրավոր կրակներ վառվեցին՝ ուղերձը տարածելու համար: Բոցերը բարձրացան վեր՝ գիշերային երկինք և օդը մաքրեցին Դեհակի վատ հոտից ու չարագործություններից:

Խավարը վերացավ:

Ծաղիկները նորից սկսեցին բացվել: Ձմերուկները մեծացան, ինչպես լինում էին անցած դարերի ընթացքում: Արծիվները կրկին վերադարձան և սավառնում էին լեռան գագաթի վերևներում: Կրակները գնալով ավելի էին թեժանում և այրվում էին ավելի բարձրում: Ժողովուրդը երգում և պարում էր այդ կրակների շուրջը՝ թմբուկների երաժշտության ներքո:

Այժմ ժողովուրդը ազատ էր»:

Այս առասպելը, որը վերականգնում է զրադաշտականների բոլոր սկզբունքները, հանգում է Բարու հաղթանակին. այն անձնավորված է աշխատասեր մարդու՝ Կավայի կերպարում և խորհրդանշում է կրակ-լույս-աստվածային արևը: Բայց սա նաև ժողովրդի ընդվզման կոչն է բռնակալության դեմ՝ ազատության ներքո: Եվ հենց այս երկրորդ դիտարկումով է, որ պետք է հասկանալ Նովրուզի տոնի կարևորությունը ալևիների մոտ: «Երջանիկ է լույս կրողների միտքը խավարում» (թուրքերեն), – ասում է Հաջի Բեկթաշ Վելին:

Կրակը, Միթրա

«Կատարյալ» կարգավիճակի հասնելու համար (*Insan-i-Kamil*)՝ մարդկային էակը պետք է գնա «չորս դռների և քառասուն շեմերի» ճանապարհով: Դռներից յուրաքանչյուրի հետ զուգորդվում է բնության մի տարր, մի հոգևոր գործառույթ և մի աշխարհիկ գործառույթ:[47]

Առաջին դուռը, այսպես կոչված օրենքը, զուգորդվում է օդ տարրի հետ: Դա ծնվելու և հավատալու գործողությունն է:

Երկրորդ դուռը, այսպես կոչված ճանապարհը, զուգորդվում է *կրակ* տարրի հետ: Դա երդում տալու և վատ բնազդները վանելու, համայնքի և, ուրեմն, քեզ համար բարիք անելու գործողությունն է:

47 Hidir Yergezen, *Alevilikte devriye varolus Cemberi*, 2006.

Երրորդ դուռը, այսպես կոչված գործողությունը, զուգորդվում է *ջուր* տարրի հետ: Դա սեփական ես-ը կառավարելու, իրապես ինքն իրեն ճանաչելու և իմաստանալու գործողությունն է:

Չորրորդ դուռը, այսպես կոչված ճշմարտությունը, զուգորդվում է *հող* տարրի հետ: Դա ճշմարտությունը գտնելու գործողությունն է և, ուրեմն, ճշմարիտին՝ Աստծուն գտնելու գործողությունը:

Եթե այս չորս դռները զուգորդվում են ստրկացվելու փաստերի հետ (իրերի իրականության հետ), իմացության, ճշմարտությանը հասնելու և ճանաչելու հետ կարող ես հավաստել, որ իմացությունը մարդու ազատ կամքի դրսևորումներից է (խորանալ այդ ուղիով, երդում տալ) և զուգորդվում է կրակ տարրի հետ:

Կա՞ կրակի մեկ ուրիշ, ավելի լավ ներկայացում, քան մշտապես հալված աստղի՝ Արևի ներկայացումը: Իմ ալեվի բազմաթիվ բարեկամներ վկայեցին, որ ըստ իրենց ծնողների և տատիկ-պապիկների, իրենց ծագումական հավատքը, իրենց ծագումական աստվածը Արևն է եղել: Դերսիմի ալեվիները (շրջան, որը պատմականորեն ընդգրկում էր ներկայիս Սիվասը, Էրզինկանը, Բինգյոլը, Էլազիգը և Թունջելին) հավերժացնում են այդ պաշտամունքը, որ կարող ես կապել Միթրայի՝ զրադաշտությանը նախորդող պարսկական աստվածության պաշտամունքի հետ: Միթրան լույսի աստվածն է: Նա հենց նույն արևը չէ, այլ այն լույսը, որը ստիպում է խավարին անհետանալ: Նա կյանք և բարեկեցություն է շնորհում երկրին: Իր տաքությամբ այն բերրիացնում և բարենորոգում է հողը: Նա երկնքից ջուր է իջեցնում դեպի երկիր և բույսեր է աճեցնում: Նա միայն նյութական նվերներ չի ընծայում, այլ նաև հոգևոր նվերներ՝ հանգստություն, իմաստություն և երջանկություն: *«Ինչ վերաբերում է այդ պարսկական աստծո պաշտոնական դերին, նա ներկայացվել է նաև որպես երդման աստված: Պարսիկ թագավորները երդվում էին Միթրայով և նրան խնդրում էին իր լույսով լուսավորել ճշմարտությունը (Պլուտարքոս, Alex,30), այդ պատճառով նրան համարում էին օրվա աստղը, ճշմարտության վկան և պահապանը: Ըստ Ստրաբոնի (XV,3,13)՝ պարսիկները արևին Միթրա էին կոչում”:*[48]

Պարսիկ Աքեմենիդի[49] կայսրության օրոք է, որ Միթրայի պաշտամունքը և զրադաշտության տարրերը դարձան պետական կրոն և ազդեցություն թողեցին իրանցի ժողովուրդների վրա (որից սերել են Դերսիմի Զազաները): Հույն պատմաբան Հերոդոտոսը (Ք.ա. 484-420թթ.) բացատրում է, որ *«պարսիկները չունեն ո՛չ Աստծո պատկեր, ո՛չ տաճար, ո՛չ զոհասեղան, իսկ դրանց կիրարկումը խենթություն են համարում: Նրանք զոհաբերություններ են անում արևին և լուսնին, հողին, կրակին, ջրին և քամիներին»:* Այսպես, Միթրան դառնում է ժամանակի պահպանման և իրերի կարգուկանոնի Աստվածը, որոնց վրա մարդը չի կարող միջամտել (բնությունը) և Ահուռա-Մազդան՝ բարոյական Աստվածը, որը լուսավորում է իմաստության և ճշմարտության ճանապարհը:

Միայն մեկ Աստված՝ երկու տարբեր նշանակությամբ:

Այսպես են զազա ալեվիները տեսնում իրենց հավատքը: Նրանք այն կոչում են «ճշմարիտի ուղի», բայց նաև «մեր ուղի» կամ «Հիզիրի ուղի»: Աստված կոչվում է կա՛մ «ճշմարիտ», կա՛մ «Հիզիր»: Երկու տարբեր անվանումներ, որոնք սակայն ընդամենը մեկն են: Նրանք աղոթքներ են հղում նաև երեք այլ գոյակների՝ «Մուհամմեդի արև կամ լույս», «Մայր Ֆաթիմայի լուսին կամ լույս» և «Ալիի ներկայացում»:[50]

48 La Revue de Téhéran, *Le culte de Mithra en Iran et à Rome* (1), N 35 octobre 2008.

49 Պարսկական առաջին կայսրությունը (648-330 Ք.ա.):

50 Vengê Dêsimi, *Dersim Inanci'nda Hizir ve Hizir Orucu*, 2006.

Հիզիր

Հիզիրը նրանց համար ամենակարևոր Աստվածն է: Նրանից հովանավորություն են խնդրում ընդդեմ երկրային չարիքների (հիվանդություններ, երաշտներ, ջրհեղեղներ...):

«Պաշտպանի՛ր մեզ, Հիզի՛ր»: Այն, ինչի վրա ես չեմ կարող ազդել, ոչ էլ իմ՝ մարդկային ազատ կամքը, այն, ինչ մնում է անկառավարելի և անբացատրելի, պահանջում է Հիզիրի օգնությունը: Ամեն տարի ալեվիները մեծարում են Հիզիրին եռօրյա պասով (փետրվարի 13-14-15-ի շրջանում): Իսլամում Հիզիրը դարձավ չորս հավերժական կամ «ողջ» մարգարեներից մեկը՝ Իդրիսի (Ենոք), Իլյասի (Էլի) և Իսայի (Հիսուս) հետ: Նա կհասներ «կյանքի աղբյուրին» և կխմեր «անմահության ջուրը», և այսպես կուսուցաներ Աստծո գաղափարը՝ գերազանցելով մարդկային հասկացողությունը: Աստծո կամքով առճակատվելով Մուսայի (Մովսեսի) հետ, Հիզիրը վերջինիս ցույց է տալիս, որ բացահայտված օրենքից անդին գոյություն ունի ավելի խորը աստվածային իմաստություն: «Կրոնական մակարդակում նազբաղեցնում է նշանավորդիրք, նրանով, որ ներկայացնում է մարգարեության գաղտնի հատկանիշը, և իր վրա է վերցնում բացահայտել ճիշտ և թաքնված իմաստը: Կհեզրը իր ձեռքում է պահում երկրային իրադարձությունների իմաստի խորը գիտելիքը՝ ի հակադրություն Մովսեսին, որի հորիզոնը սահմանափակվում է օրենքով: Այսպիսով, Մովսեսը մարմնավորում է օրենքի բառացի կողմը, մինչդեռ Հիզիրը, ըստ երևույթին, պատկանում է բարձրագույն իրականության կարգին՝ գտնվելով սովորական տարբերակման չափանիշներից դուրս»:[51]

Միթրան՝ անբացատրելի բնության և ժամանակի Աստվածը, վերափոխվում է Հիզիրի՝ որպես Աստծու մտերիմ

51 La revue de Téhéran, *Khezr: du prophète au guide personnel vers la « Source de la Vie »*, N26 janvier 2005.

(ընկեր)՝ իրազեկ ճշմարիտի գաղտնիքներին: Ուստի մարդկային էակը դեպի նա է շրջվում հովանավորություն ձեռք բերելու և խնդիրները լուծելու համար, որոնցից նա չի մտածում շահ ունենալ: Իրանում շարունակում են սնունդ մատուցել «նա, ով լուծում է խնդիրները» անունով՝ նվիրված Կհեզր-Հիզիրին: Ալեվիների մոտ Հիզիրին ձոնված ամենամյա պասը ուղեկցվում է Լոկմա (Lokma) պատառիկի պատրաստմամբ, որը նվիրում են աղքատներին և կարիքավորներին, որպեսզի գրավեն նրանց ուշադրությունը՝ ստեղծված խնդիրները լուծելու համար: «Մարգարե և անձնական հրեշտակ, տերը բոլոր անտերերի և հոգևորության խորհրդանիշը՝ ազատված սոցիալական և տառացիաբանության կապանքներից, Կհեզրը գերազանցապես նախաձեռնողն է, որը թույլ է տալիս հասնել աստվածային բացահայտումների իսկական ոգուն» :[52]

Դերսիմի Ալեվիների մոտ Հիզիրի պաշտամունքը նշված չի եղել իսլամական փոխառություններում ինչպես ուրիշ ալեվիների մոտ, որտեղ այն զուգորդվում է մարդու Սուրատի հետ (*Al Insan*)՝ 7-11 տներ. «*Նրանք իրենց ուխտերն են կատարում և վախենում են այն օրից, երբ չարը կտարածվի ամենուրեք. և նրանք սնունդ են նվիրում, չնայած նրա սիրուն՝ աղքատի, որբի և բանտարկյալի նկատմամբ, ասելով՝ Ալլահի պատկերի համար է (նրա համաձայնության), որ մենք ձեզ սնում ենք: Մենք ձեզնից չենք ուզում ո՛չ փոխհատուցում, ո՛չ երախտագիտություն: Մենք վախենում ենք մեր Տիրոջից, սարսափելի ու աղետալի օրերից: Ուրեմն, Ալլահը նրանց կպաշտպանի չարից՝ այդ օրից, և նրանց կպարգևի շքեղություն և ուրախություն»:*

Ըստ ալեվիական ավանդության՝ այդ սուրբ տները գրված են եղել Ալիի և Ֆաթիմայի պատվին, որոնց երկու

52 Նույն տեղը:

տղաները՝ Հասանը և Հյուսեյնը, հիվանդ էին: Դեղորայք չգտնելով՝ նրանք որոշում են եռօրյա պաս պահել, որը նրանց էր նվիրված: Բայց երեկոյան պասը կոտրելու և ուտելու փոխարեն, նրանք բավարարվեցին ջրով. իրենց ճաշը առաջին օրը տվեցին մի աղքատի, երկրորդ օրը՝ մի որբի, երրորդ օրը՝ մի բանտարկյալի: Պասի վերջում Մուհամմեդն ասում է Ալիին, որ Ալլահը Հիզիրին ուղարկել է նրա մոտ՝ համբերությունը փորձելու համար:

Մեկ այլ աղբյուր պատմում է Նոյյան տապանով փրկվածների մասին, որոնք գթասրտության եռօրյա պաս պիտի պահեին, որովհետև ջրհեղեղի ժամանակ նրանք խնդրել էին Հիզիրին օգնության հասնել:

Այդուհանդերձ, բոլոր ալեվիների մոտ և, չնայած այն փաստին, որ սկզբնական առասպելը վերցվել է Իսլամից, դեպի Հիզիրն է և ոչ թե դեպի Ալլահը, որ թեքվում են, օժանդակություն և օգնություն խնդրում, ինչպես անցյալում Միթրային էին ոգեկոչում: Արևը, լուսինը և աստղերը, երկնային լույսի բոլոր ձևերը, ինչպես նաև լեռները, ծաղիկները, լճերը... աշխարհի մշտնջենականության, բնության և նրանց գաղտնիքների դրսևորումներն են, որ գիտեր Հիզիրը: Այդ լիճը կնքված է «Հիզիրի լիճ», իսկ ժայռը՝ «Հիզիրի ժայռ» կամ «Հիզիրի ոտք» անունով: Այդ ձևով էլ աղբյուրներն ու ջրվեժները սրբացան:

Ալեվիները գործածության մեջ են դնում Ալիի հաստատումը՝ հաղորդված Հաջի Բեկթաշ Վելի կողմից, իր Մակալաթում.[53] «ես երբեք չեմ պաշտի մի Աստծու, որին չեմ տեսել»:[54]

Կամ Պիր Սուլթան Աբդալին[55] շարունակելու համար՝

53 Մակալաթը միակ տեքստն է, որ իսկապես վերագրվում է Հաջի Բեկթաշ Վելիին:

54 Henri Corbin, *Temps cyclique et Gnose ismaelienne*, 1982, reprise par Ismail Kaygusuz, *Görmediğim Tanrıya tapmam, Alevilik ve Materyalizm*, Su Yayınları Istanbul, 2009.

55 Պիր Սուլթան Աբդալ – 16-րդ դարի ալեվի բանաստեղծ, որին կախաղան

«Ունի հազար ու մի անուն, նրանցից մեկը Հիզիր է
Որտեղ էլ որ նրան կանչես, նա այդտեղ ներկա է
Ալին է թագավորը, Մուհամմեդն է Վիզիրը
Արդյոք Ալին չէ՞, որ գրել է այդ պատվիրանները»:

« Binbir adı vardır, bir adı Hızır
Her nerde çağırırsan, orada hazır
Ali padişahtır, Muhammet vezir
Bu fermanı yazan Ali değil mi ? »

Մենք կարծում ենք, որ Հիզիրի պաշտամունքը, քանի որ այն կապված է բնական տարրերի հետ՝ կրակ, հող, օդ և ջուր, իր սկզբնաղբյուրը գտնում է իսլամի նախկին կրոնների մեջ, որոնք ծնվել են Միջագետքում և Պարսկաստանում և մերժվել են Անատոլիայում: Սրանք են ալեվիզմի կարևոր տարրերը: Ուրիշ տարրեր էլ են միանում այդ հավատքներին՝ աբրահամյան երեք մեծ կրոնների հայտնվելուն պես, փոխադարձաբար քննարկման առարկա դարձնելով իրենց գնոստիկական հոսանքներով գրած օրենքները՝ դեպի ճշմարտության որոնումները:

են բարձրացրել 1550թ. իր գաղափարների համար: Նա ալեվիզմի համար չափազանց կարևոր խորհրդանիշ է:

6.

Ալեվիզմը, գնոստիկները և սուֆիզմը

Ալեվիզմը ամենից առաջ մարդկային էակի մեջ աստվածային ճշմարտության որոնումն է, իսկ այնտեղ հասնելու ուղին մարդու սերն է, այսինքն՝ Աստծո սերը: «Տիեզերքը Ադամի մեջ է, իսկ Ադամը տիեզերքի ներսում»: (...) Այսպիսով, մարդու աստվածային բնության ճշմարտացիությունը հասկանալու, և ուրեմն ճշմարիտի ուսմունքը ստանալու համար, պետք է ընթանալ հարգանքի, խոնարհության և իմացության ճանապարհով: «Ադամի բնությունը (Ադամայնություն) երթն է առ բանականություն, պարկեշտություն և իմացություն»: (*Âdem'in Âdemliği ; akıl, hayâ ve ilim ileridir*).

Հուդաիզմը առաջացել է Ք.ա. 6-րդ դարում, քրիստոնեությունը՝ Ք. հ. 1-ին դարում: Հակադրվելով արևելյան հին կրոններին՝ սրանք մարդու (Ադամի) և Աստծու միջև մի հիմարար սկզբունք են հաստատում՝ մեղքի, սխալի, վստահության կորստի և Աստծո ու իր արարած էակի բաժանման սկզբունքը: Քանի որ մարդկային էակը չենթարկվեց Աստծուն Ադամի տեսքով, դատապարտվեց տգիտության. Կկարողանա՞ վերադարձնել իր արարչի գթասրտությունը միայն աստվածային օրենքի ճշգրիտ կատարմամբ, որը փոխանցվում է Մովսես և Հիսուս մարգարեներով:

Ո՞րն է այդ սխալը: Դա բարու և չարի ընտրության ծառից, այլ կերպ ասած, գիտելիքի ծառից, վայրի կենդանիներից ամենախորամանկի՝ օձի խորհրդով մի պտուղ ուտելն է... Ի վերջո, Ադամը (մարդկային էակը) իր արարչի (Աստծո) կողմից դատապարտվեց, քանզի ցանկացել էր հասնել իմացությանը (ճշմարտությանը) և ցանկացել էր բարձրանալ և Աստծո հետ իրեն դասել նույն շարքում:

Իսլամը, որը երևան եկավ Ք.հ. 6-րդ դարում, նորից վերցրեց Գրքի կրոնների այդ հիմնադիր առասպելը, սակայն բացառեց նախասկզբնական մեղքի գաղափարը: Այսպես, Ղուրանում Աստված ներում է Ադամին, բայց և այնպես նրան վտարում է և հրամայում է հետևել իր հրահանգներին երկրի վրա, այլապես նա հավիտենապես կկորցնի Աստծո ողորմածությունը:

Այդ ժամանակից ի վեր, մարդը պետք է հնազանդվի կրոնական օրենքներին և հոգևորականությանը, որոնք պահապաններն են Աստծո առաջ գթասրտությունը վերադարձնելու համար, որը կդատի նրանց գործողությունները՝ ելնելով կարգադրված օրենքների ճիշտ պահպանումից:

Հուդաիզմը և քրիստոնեությունը որոշակի վերանայումների կենթարկվեն նրանց կողմից, ովքեր չեն կարող սահմանափակվել կամայականորեն հաստատված հավատով և շուտով կամփոփվեն Գնոստիկ եզրույթի ներքո (Gnosis – հունարեն՝ իմացություն): Իսլամում սուֆիզմը կզարգացնի այն գաղափարը, որ կարելի է Աստծո ճանաչմանը հասնել այստեղ՝ չսպասելով ո՛չ նրա դատաստանին, ո՛չ էլ նրան դրախտում միանալու խոստմանը:

Գնոստիկները, Աստված և արարիչը

Գնոստիկները կասկածի տակ են դնում արարչագործության առասպելը Գիրք Ծննդոցում[56]: Նրանց համար, եթե Աստված ուղարկել էր այն էակին, որ ստեղծել էր իր պատկերով, և որովհետև այդ էակը իմացությանը հասու եղավ, նա վատ Աստված է: Գնոստիկներն ուրեմն տարբերակում են մտցնում ողջ տիեզերքի իսկական

56 Գիրք Ծննդոց – Հին Կտակարանի առաջին գիրքը:

Աստծո և գիտելիքի տիրակալի միջև, որը բարին է, և նրա ստեղծած արարածը, որ նրան կոչում են Արարիչ (Հին Կտակարանի Աստվածը), կպատժի Ադամին և կդառնա չարը: Ըստ նրանց՝ Աստված խնդրել է Արարչին շնչավորել իր միտքը, լույսը և շունչ տալ Ադամին: Այսպես է լույսն անցնում մարդկությանը: Նա գնոսը և կյանքը թաքցնում է արգելված պտղի մեջ և օձի կերպարանքով փրկիչ է ուղարկում՝ դրդելու Ադամին ու Եվային տիրանալ այդ գաղտնիքներին: Նախանձախնդիր Արարիչը նրանց վռնդում է դրախտից: Փորձում է նաև ոչնչացնել նրանց սերունդները (կատարյալները) ջրհեղեղի միջոցով, բայց Աստված փրկում է Նոյին (Nuh) և յուրայիններին, որոնցից առաջացել են սկզբնական 72 մարդկային ազգերը: Այդ ժամանակից ի վեր Արարիչն անդադար բնական աղետներ և հալածանքներ է ուղարկում կատարյալների դեմ: Պետք էր արթնացնել կատարյալներին՝ հիշեցնելով իրենց երկրային ծագումը (արմատները): Դրա համար Աստված փրկիչներ ու մարգարեներ ուղարկեց երկիր՝ իրենց հայտնությունը մարդկանց գաղտնաբար տարածելու համար:

Օձը, որը հուդայիզմում և քրիստոնեության մեջ ներկայացնում է սատանային, այստեղ դիտարկվում է որպես փրկիչ, Աստծու և Ադամի միջև միջնորդ՝ գիտելիքի տեսքով: Օպիիս կամ Նաչաս կոչվածը գիտելիքի Աստված-Ադամ-Օձ սուրբ երրորդության մաս է կազմում, և դրանով է, որ բացահայտում է թաքնված ճշմարտությունները: Դա այդ նույն երրորդությունն է, որ ալեվիների մոտ գտնում ենք Հակկ-Մուհամմեդ-Ալի ձևով (ճշմարիտը-Մուհամմեդ-Ալի, *bâtin*՝[57] աստվածային ուղերձի թաքնված իմաստը):

Ք.հ. 1-ին դարում, գնոստիկների խմբերը՝[58] «օձակուռ» կամ օձաքար» անուններով, տարածվում են Միջագետքում, Սիրիայում և Անատոլիայում: Նրանք մեղադրվում են որպես «սատանային երկրպագողներ»՝ հիմնադրված քրիստոնեական եկեղեցիների կողմից: Նրանց *Նաշասի* պաշտամունքը՝ գիտելիքի ծառի օձը, միախառնվում է ավելի հին՝ Նեհուստանի՝ Մովսեսին բուժող օձի հետ եբրայացիների մոտ: Այսօր այդ պաշտամունքի հետքերը դեռ կարելի է գտնել Դերսիմ ալեվիների մոտ, ինչպես պատմում է Սավաշ Շենգյուլը[59]. «Բոլորը պատրաստ էին և սպասում էին քահանային կամ բաբային, ինչպես ասում են մեզ մոտ: Նա ձեռքում պահել էր իր երեք գավազանները: Իրականում դրանք իրենը չեն, դրանք պատկանում են իր տոհմին: Դրանք դարերով փոխանցվել են սերնդեսերունդ, բայց ոչ ոք ստույգ ժամանակաշրջանը չգիտի: Քահանան այստեղ է, նա շարժվում է դեպի այն անձանց կողմը, ովքեր միայն իրեն են սպասում: Մի կողմում տասներկու տղամարդ կա, իսկ մյուս կողմում՝ տասներկու կին: Քահանան քայլում է գավազանները պարզելով յուրաքանչյուրի կողմը: Գավազաններն իրենք պետք է դիպչեն նրանց: Նրանք իրենք իրենց են դիպչելու մարդկանց, նրանք են, որ վճռում են, այլապես նրանք կգնան մեկ այլ ուղղությամբ: Նրանք մոգական և անձնական ուժ ունեն: Այդ գավազանները մեր լեզվով «ժար» են կոչվում: Այս ժարն՝ իր երեք գավազաններով, կոչվում է «ժար-ա-Մոր», որը նշանակում է օձի ժար: Այդ ժարը պատկանում է մի ընտանիքի, որը Լակրեմ է կոչվում. ունի Պոկսո մականունը: Այդ ժարը դարերով նրանց մոտ է, բայց, թե ստույգ որքա՞ն ժամանակ է, և թե ո՞վ է դա նրանց տվել, նրանք չէին կարողանում ճշգրիտ պատասխանել: Քանզի այդ ժարը մարդը չի հայտնագործել կամ ստեղծել, այլ ինքն է եկել մարդու մոտ, որպեսզի նրան առաջնորդի ճշմարտության ճանապարհով դեպի Հաքք, կարդալ՝ Էքր,

57 Bâtin – արաբերեն նշանակում է թաքնված, անըմբռնելի:

58 Բորբորիտներ, պերատներ, սեթականներ, վալենտինականներ՝ քրիստոնեական ծագումով, նասասեններ՝ հրեական ծագումով և բազիլիդիներ՝ զրադաշտական ծագումով:

59 Savas Sengul, *Une pratique religieuse du Dersim*, 2002.

որը մեզ մոտ Աստծո անունն է: Այդ ժարերը թվով յոթն էին: Նրանք երևի իջել էին մի ծառից, որը կոչում են «Վիալ-ա-սեննետ», և որը նշանակում է «դրախտի կեչի»: Այդ ծառը երկիր է ուղարկել յոթ ճյուղ: Ամենամեծ ու կարևոր ժարը «ժար-ա-Մոր»-ն է եղել:

Քուրդ պատմաբան Նուրի Դերսիմին դրա մասին նույնպես հիշատակում է.[60] *«Անցած տարի (պատմաբանը գրել է 1914թ.-ին) Բալաբան ցեղի առաջնորդն ինձ հրավիրել էր Գյուլ Ագա: Նա Հինզորի գյուղի սեփականատերն էր, բայց ինձ ուրիշ տեղ տարավ: Այդ վայրի անունը Կիստիմ էր: Դա մի մեծ գյուղ էր: Ամեն տարի հազարավոր քրդեր են գալիս երկրպագելու «ժար-ա-Մոր»-ի տներից մեկում: Մեծ սենյակի մեջտեղում կար մի մեծ ու հին գավազան, որը փաթաթված էր կանաչ գույնի կտորով: Այդ սուրբ գավազանը կախված էր մի փայտե այունից: Վեր ուղղված ծայրը օձի գլխի ձև ուներ: Սենյակում կարող էին տեղավորվել հազարից մինչև երկու հազար հոգի: Երկու խումբ կար այդ սենյակում. մեկը ոգեկոչում էր Աստծուն, իսկ մյուսը՝ իր լացուկոծով մեծ հնազանդություն էր ցույց տալիս «ժարին»: Մարդիկ աղոթում էին, հառաչանքներ արձակում և միաժամանակ լալիս: Նրանք բոլորը «ժար-ա-Մոր»-ի շուրջն էին հավաքված, և այնտեղ մի հավատացյալ կախած տեղից հանեց սուրբ գավազանը: Մի այլ մարդ մոտեցավ Բաբային. նա անդամալույծ էր: Նա սկսեց բղավել. "Ya Haqq" (Աստվա'ծ իմ): Հետո սենյակի կեսը ոտքի կանգնեց, իսկ մնացյալը՝ գետնատարած երկրպագեց»:*

Շուտով գնոստիկների այս առաջին խմբերից առաջանալու են հերետիկոսների առաջնակարգ աղանդավորական եկեղեցիները՝

Մարսիոնի ասորական եկեղեցին՝ (*Sinoplu Marcion*) Ք.հ. 2-ից 5-րդ դարեր: Ըստ Մարսիոնի՝ գոյություն ունի

60 Nurin Dersimi, *Kurdistan Tarihinde Dersim*, Doz Yayinlari, 2004.

երկու աստված. Բարի Աստված՝ աշխարհի և նյութականի արտաքինը, և արարիչը՝ աստված, որն աշխարհը ստեղծել է նյութականից: Արարիչը ստեղծել է զգայական աշխարհը և մարդկությունը: Նա Հին Կտակարանի աստվածն է, օրենքի ստեղծողը, մի խիստ Աստված՝ վրեժխնդիր և էությամբ չար: Բարի Աստվածը գերագույն Աստծո հակադրությունն է, առանց նյութական աստծո սահմանափակման: Օտար՝ աշխարհին, նյութականությանը, օրենքին, իր զանցառություններին և, ուրեմն, մեղքին. սա սիրո Աստվածն է: Նա խղճաց մարդկանց և որոշեց փրկել նրանց, այսինքն ազատել օրենքի լծից, որպեսզի նրանք կարողանան բարին արարել:

Էվկլիդներն Մեսալացիները – Ք. հ. 4-6-րդ դարեր, ծագումով Եդեսիայից:

Պավլիկյաններ - Ք.հ. 7-9-րդ դարեր (անունը ծագել է հայկական Պողոս անունից), ծագումով Մանանալիից (Էրզրում): Նրանց ուսմունքը նույնպես հիմնվում է Բարի Աստծո՝ անտեսանելի աշխարհի Հոր, և ստեղծող Արարչի ու տեսանելի աշխարհի տիրոջ հակադրության վրա: Նրանք մերժում են բոլոր զոհաբերությունները (մկրտություն, սուրբ արարողություն...) և ատում են խաչը՝ մահվան և չարչարանքի խորհրդանիշը, որ Արարիչը թագավորում է երկրի վրա: «Դատելով անօգուտ, ֆասակար և ալյասերված քահանաներին՝ նրանք առանց երկմտելու սպանում են նրանց»:[61]

Պավլիկյանները ծագումով մի հզոր երկրից են, որի մայրաքաղաքը Թեփրիկեն էր 835-872թթ.: Կազմակերպված լինելով գյուղական համայնքներից՝ նրանք զինվորներ են դառնում՝ իրենց ազատությունը Բյուզանդական կայսրությունից պաշտպանելու համար: Ինչպես նշում է Իրեն Մելիքովը[62], նախկին Պավլիկյանների

61 Raoul Vaneigem, *Les Heresies*, PUF, 1994.

62 Irene Melikoff, *Haci Bektach, un mythe et ses avatars*, տես մեջբ.

պետությունը համընկնում է ալեվիների ներկայիս բնակեցրած տարածաշրջանի հետ: Մելիթեն (Մալաթիա) արաբ Էմիրի հովանավորչությամբ Պավլիկյանները ապրում էին ներկայիս Սիվասի, Ամասիայի, Տոկատի, Երզնկայի, Մալաթիայի տարածքներում: «Ըստ էության, այստեղ հոգևորականության մասին խոսք չկա. ամբողջ հիերարխիան դատապարտված է և մերժված: Միայն «ճանապարհի ուղեկիցներ» (*synekdemoi*) կան և կառավարիչ կամ նոտար, որոնք ոչնչով չեն տարբերվում մյուսներից. ո՛չ իրենց հագուստով, ո՛չ էլ ապրելակերպով (նույիսկ ամուսնացած են): Փոխարենը մի մեծ տեղ պահված է դիդասկալների համար, որոնք ոգու գթասրտությամբ ներշնչվածներն են»:[63]

Երբ 861-863թթ.-ին իրենց ապստամբության ժամանակ պարտություն կրեցին, և երբ 872թ.-ին իրենց մայրաքաղաքը պաշարեցին բյուզանդացիները, նրանց մի փոքր մասը փախավ Թոնդրակ՝ Մանազկերտի մոտ, Թոնդրակյաններ անունով, և մինչև 1054թ. հալածվեց հայկական եկեղեցու կողմից:[64]

Սուֆիզմը իսլամում

Իսլամում Աստծո և Արարչի միջև երկակիություն չկա: Աստված մեկն է: Նա ստեղծեց Ադամին՝ իր արարածներից ամենարժանավորին և խնդրեց իր հրեշտակներին երկրպագել նրան: Բոլորը հնազանդվում են, բացի գոռոզ Իբլիսից: Աստված նրան վռնդում է դրախտից: Ղուրանում Իբլիսը՝ անկյալ հրեշտակը, դառնում է սատանա, դրդում է Ադամին սխալ գործել, քանզի նրան խոստանում է, որ

63 Bulletin de la Société Ernest-Renan, *Revue de l'histoire des religions*, tome1671, 1965.

64 Aram Mardirossian, *Le livre des canons armeniens de Yovhannes Awjneci, Eglise, droit et société en Arménie du 4e au 8e siècle*, Peeters Leuven, 2004.

արգելված ծառից պտուղ ուտելով, նա կդառնա հրեշտակ և կհասնի անմահության: Աստված ներում է Ադամին՝ մինչև երկիր ուղարկելը. այսպիսով չկա ոչ մի նախասկզբնական մեղք: Աստված Ադամին տվեց իր արարածներից ամենաներդաշնակի պատկերը և իր գիտելիքի մի մասը: Դրախտից դուրս գալով՝ մարդը հրահանգներ կստանա Աստծուց, երբ ցանկանա, մարգարեությունների պարբերաշրջանի միջով, որի մարգարեները կլինեն սուրհանդակներ և որ պարտավոր կլինեն ուղերձները փոխանցել գրվածքներով: Մուսուլմանական կրոնը ընդունում է հուդայիզմի և քրիստոնեության Սուրբ գրքերի միասնության աստվածային ծագումը, ինչպես նաև նրանց մարգարեներին: Տեքստերը բացատրում են, որ Ադամը սկիզբ դրեց մարգարեության գործառույթին, մինչդեռ այն փակեց վերջինը՝ Մուհամմեդը: Ղուրանը հայտնությամբ բացահայտված գրքերից վերջինն է, քանզի Մուհամմեդը վերջին մարգարեն է, և բոլոր բացահայտված գրվածքներից միայն Ղուրանի տեքստն է, որ անբասիր է մնում: Մյուս բացահայտված գրքերի տեքստերը կեղծված են եղել երկրի վրա, բայց պահպանվել են Երկնքում: Աստված Գաբրիել (Cebrail) հրեշտակին ուղարկեց, որ բացահայտի Ղուրանը Մուհամմեդին: Քանի որ այն վերաբերում է Աստծո խոսքին, յուրաքանչյուր մուսուլման պետք է նրան հնազանդվի բառացիորեն:

Սուֆիզմը (*Tasavvuf*), որը երևան է եկել 8-րդ դարում, առաջ քաշեց այն միտքը, թե Մուհամմեդը Ղուրանի հետ միաժամանակ ստացել էր թաքնված բացահայտումները (գիտելիքը), որը նա բաժանել էր միայն իր ուղեկիցներից մի քանիսի հետ: Այդ ուսմունքը հայտարարում է, որ ողջ իրականությունը կազմված է մի արտաքին երևացող տեսքից (zahir) և մի ներքին թաքնված տեսքից (*batin*): Ղուրանը նույնպես պետք է կարդացվի այդ հավասար տարբերակմամբ, որպեսզի հասկացվի թաքնված իմաստը,

որը միայն կարող է լինել Աստծո սիրո ապացույցը մարդկային էակի հանդեպ: Ղուրանի մեկնաբանությունը դառնում է բազմաթիվ սուֆիստական դպրոցների հիմքը, որոնք տարածվում են բոլոր երկրներում, որտեղ իսլամ են դավանում: Նա, ով հասնում է թաքնված մտքի գիտելիքին, ուրեմն հասնում է ճշմարիտին և դառնում է սուրբ:

Մուհամմեդի երեք ուղեկիցներն իրենց կենդանության օրոք հասել էին սրբազանության վիճակին.

Ուվայս ալ-Քարանի, Յեմենի առեղծվածը դարձավ մուսուլման, առանց Մուհամմեդի հետ երբևէ հանդիպելու:

Սալման ալ-Ֆարիսի կամ Սալման Անմեղ, Պարսկաստանի նախկին ստրուկը դարձավ Մուհամմեդի ուղեկիցներից մեկը:

Ալի իբն Աբու Թալիբ. միաժամանակ Մուհամմեդի հովանավորյալը, զարմիկը, հոգևոր եղբայրը, աշակերտը և փեսան, ով իր Ֆաթիմա դստեր ամուսինն էր: Չորրորդ խալիֆը՝ 656-661 թվականներին: Նա նաև առաջին իմամն է շիիթների և Հասանի ու Հյուսեյնի հոր համար:

Ալիին տալիս են դերերից ամենակարևորը, քանի որ նա անմիջապես օգնեց տառադարձել Ղուրանը հենց Մուհամմեդի բերանից (որը գրել չգիտեր), և նա այսպես իրազեկ է Աստծո ամբողջ բացահայտման մասին: Ավելին, նա լեգենդար իսլամի ռազմիկն է՝ իր *Զյուլֆյուկար-Zulfukar* երկսայր թրով: Նա մարմնավորում է մուսուլմանական հավատքի ձիավորին, և Մուհամմեդը բացականչում էր. «Դհուլկիֆարի նման թուր չկա, և Ալիի նման քաջ չկա»: Ի վերջո, իր խալիֆայության ընթացքում, նա վերականգնեց եկամուտների հավասար բաշխումը իսլամի ծառաների միջև: Նա դառնում է հավասարապաշտության և արդարադատության մի կերպար:

Նույնիսկ եթե այսօր նրանք կամավոր ցուցադրեն Զուլֆուկարը որպես ինքնության խորհրդանիշ, ալեվիները երկրպագում են Իմամ Ալիին՝ իր ճշմարիտ գիտելիքի և սոցիալական արդարության մտահոգության համար: Այն, ինչ նրանց համար նշանակություն ունի, դա խոսող Ղուրանն է (*Kuran's natik*), այսինքն՝ մարդկայնացված ճշմարտությունը: Ամեն ինչ մարդկանց սրտում գաղտնի է, քանզի ամեն ինչ մարդու մեջ է և աշխարհի մեջ: Ուրեմն մարդը սուրբ է և արժանի սիրո, քանզի Աստված խնդրեց իր հրեշտակներին երկրպագել մարդուն՝ նրան ստեղծելուց հետո: Ինչպես Իոեն Մելիքոֆն է նշում. «Ադամը Աստծո արտահայտությունն է: Աստված մարդուց դուրս չպետք է փնտրվի: Աստծո գահը մարդկային սիրտն է: Մարդու աստվածային էությունը դրսևորվում է մարդու դեմքին: Աստծո անունը գրված է այնտեղ, բայց այդ անունը Ալիի անունն է՝ Աստծո դրսևորումը մարդկայինի տեսքով»:[65]

Ահավասիկ մի ապացույց, որ մարդն աստվածային սիրով լեցուն մի սիրտ է. «Ալեվիների մեկ այլ ավանդույթ վերաբերում է սատանային-շեյթանին (*Seytan*), որը մերժեց Ադամին երկրպագել, որովհետև նա չէր հասկացել, որ Աստված թաքնված է Ադամի սրտում և, հետևաբար Ադամն ինքն Աստվածն էր: Իր սխալը զղջալով, նա կրկին մարմնավորեց Ջեբրայիլին՝ (Գաբրիելին) (*Cebrail*), Աստծո ամենամոտ բարեկամին»:[66]

Ահա թե ինչ է ամփոփում իր ուսմունքի մեջ Հաջի Բեկթաշ Վելին. «Մի՛ մոռացեք, որ ձեր թշնամին նույնպես մարդ է» (*Düşmanınızın bile insan olduğunu unutmayınız*), կամ բոլոր ժողովուրդների և ազգերի մեծարանքի ըմբռնման մեջ է, ինչպես Նոյի 72 նախասկզբնական սերունդների ճյուղերը. «Անհրաժեշտ է նույն աչքով նայել 72 ժողովուրդներին»:

Ղուրանի թաքնված իմաստը, Ալիին բացահայտված գիտելիքը, այսինքն՝ սրբությունը (*L'Imamat*) իմաստավորված է և փոխանցված տասներկու իմամներին, որոնք նրան հաջորդեցին իր մահից հետո: Իսլամի

65 Irene Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, op.cit.

66 Irène Melikoff, Le Gnosticisme…

երկատումը շիիթների և սուննիթների միջև գալիս է Մուհամմեդի ժառանգությունից: Նրա մահից հետո որոշ մահմեդականներ համարեցին, որ իր ընտանիքից ընտրված անձինք գիտելիքի լավագույն աղբյուրն են: Մի ավանդույթ պնդում է, որ Մուհամմեդը հայտարարել է. «Ես եմ գիտելիքի քաղաքը. Ալին նրա դուռն է: Նա, ով ուզում է դա իմանալ, ինչպես նաև իմաստությունը, թող ուրեմն անցնի դռնով»: Կամ նաև՝ «Նա, ումից սերում եմ ես, տերն է: Ալին նույնպես սերում է նրանից՝ տիրոջից: Աստվա՛ծ իմ, եղիցի նրա բարեկամը, ով միացել է նրան, և եղիցի նրա թշնամին, ով նրան որպես թշնամի է ընդունում»: Ուրեմն, Մուհամմեդի ժառանգությունը պետք է անցներ Ալիին, իր կին Ֆաթիմային և նրանց սերունդներին՝ իրենց Հասան և Հյուսեյն որդիներին: Սա է շիիթների դիրքորոշումը:

Սակայն 632թ. Մուհամմեդի մահից հետո, նրա ուղեկիցներն առաջին Խալիֆ նշանակեցին Աբու Բեկիրին (*Ebu Bekir*)՝ որպես համայնքի հավատացյալների քաղաքական և հոգևոր ժառանգորդ և առաջնորդ: 634-656թթ.-ին հետևում են երկրորդ և երրորդ Խալիֆները՝ Օմարը և Օթմանը, որոնք իսլամական էմիրությունը տարածում են Պաղեստինում, Եգիպտոսում, Միջագետքում, Պարսկաստանում և Հյուսիսային Աֆրիկայում: Երրորդ խալիֆը դժգոհություններ առաջացրեց, քանզի իր տոհմով սեփականացրեց Աֆրիկայից, Միջին Ասիայից և Պարսկաստանից բերված ավարի մի մասը, և նա որոշում ընդունեց մի պաշտոնական տեքստ ավելացնել Ղուրանում: Լինչահարվելով Մեդինա հրապարակում զայրացած մուսուլման ամբոխի կողմից՝ նա փոխարինվեց Ալիով, որը դարձավ չորրորդ Խալիֆը: Մուհամմեդի ժառանգության վերաբերյալ վիճաբանությունը նոր թափով է վերսկսվում և 661թ. հանգեցնում Ալիի սպանությանը (այդ պահին նա

մզկիթում աղոթում էր):[67] Շիիթներն այդ ժամանակ նրա որդի Հասանին ճանաչում են որպես Խալիֆաթի ժառանգորդ: Սակայն սուննիները Մուավիային (*Muaviye*) են ճանաչում Սիրիայի կառավարիչ՝ Օմմեյադ արքայատոհմի հիմնադիր: Հասանը համաձայնում է, բայց երկու պայման է դնում՝ իրեն հնազանդվել պատերազմելիս կամ խաղաղություն կնքելիս, և իր մահից հետո խալիֆայությունը հանձնել Մարգարեի սերունդներին: Հասանը մահանում է 670 թվականին: Ալիի երկրորդ որդին՝ Հյուսեյնը խզում է կապերը Օմմեյադ արքայատոհմի հետ, քանիզի Մուավիան 678 թվականին իր որդի Յազիդին (*Yezid*) է իշխանության գլուխ բարձրացնում: Հյուսեյնը հավատարիմ է մնում իր եղբայր Հասանին տված խոստմանը և 72 մարդկանցով, ինչպես նաև ամբողջ գերդաստանով (կանանցով և երեխաներով) հեռանում է: Յազիդը հզոր, 4000-անոց բանակ է ուղարկում նրա դեմ՝ Կերբալա: Հյուսեյնը, բոլոր տղամարդիկ և արու երեխաները սպանվում են ճակատամարտի ժամանակ, բացի հիվանդ և վրանում փակված իր որդի Զինե Ալ Բիդինից (Zeynel Abidin), որը դառնում է աստվածային գիտելիքի ավանդառուն և շարունակում է իմամների սերունդը:

Հյուսեյնի նահատակվելը Կերբալայի ճակատամարտում շիիզմի հիմնական գործերից մեկն է, հանուն արդարության մարտի ժամանակ քաջության չափանիշ, ասպետական մի իդեալ, որ սուֆիզմի որոշ հոսանքներ այնուհետև յուրացնելու են: Ըստ նրանց՝ Հյուսեյնը զոհվեց, որ հավատացյալներին փոխանցի աստվածային ճշմարիտ ուղերձը: Սրանք նաև այն հոսանքներն են, որոնք Աբու Մուսլիմին Օմեյադների հաղթող կդարձնեն 750թ.-ին՝ հռչակելով նրան Հյուսեյինի վրեժխնդիր հերոս: Կազմակերպվելով արհեստավորների միավորումներում կամ ռազմական ասպետությունների

67 Հենց այդ պատճառով է, որ ալեվիները մերժում են մզկիթը՝ որպես երկրպագության վայր:

խմբերում, նրանք փառաբանում են Ֆյություվետի (*Futuvvet*) պատվի, վեհանձնության և զոհաբերության իդեալը: Այս սուֆիստական խմբերի հետ շփվելով է, որ ասիական տափաստանների խորքերից եկած թուրքական ժողովուրդներն իրենց նախնիների շամանական հավատալիքներից դավանափոխվելու են՝ ընդունելով իսլամը:

7.

Թուրքերի ալեվիզմը և շամանությունը

"Երբ վերևում արարվեց կապույտ երկինքը, իսկ ներքում՝ խավար երկիրը, այդ երկուսի միջև ստեղծվեցին մարդկանց որդիները":

Օրխոնի (*Orhun*)[68] արձանագրությունները, որոնք թուրքական ժողովուրդների առաջին հետքերն են, այդպես են պատմում առաջին մարդու՝ Էր կիշիի (*Er kisi*) արարման մասին:

Թուրքական ժողովուրդները, որոնք առաջին անգամ հիշատակվել են 6-րդ դարում

Գյոկթյուրքեր (*Göktürk*) անվամբ, ծագումով Կենտրոնական Ասիայից են: Ինչպես մոնղոլները, նրանք նույնպես քոչվոր անասնապահներ էին՝ կազմակերպված ցեղերից և առաջնորդից, որին անվանում են խան (*khan*), իսկ նրա կնոջը՝ խաթուն (*Khatun*): Յուրաքանչյուր ցեղ ունի մեկ շաման՝ իմաստունբժիշկ՝ *Կամ-Օզան (Kam-Ozan)* անունով, որը հանձն է առնում կապ հաստատել աստվածների և ոգիների հետ՝ ապագայի մասին գուշակություններ տարածելու և համայնքի խնդիրները կարգավորելու նպատակով: Երգը, երաժշտությունը և պարը, ինչպես նաև զգայապատրանք առաջացնող նյութերը օգտագործվել են, որպեսզի նպաստեն շամանի զմայլանքին (տրանսին):

---

68 Օրխոնը Մոնղոլիայի գետերից է. այս անունով է կոչվել Խանգայի և Բայկալ լճի միջև գտնվող հովիտը:

Օղուզները (*Oguzlar*) կամ թուրքմենները (*Turkmenler*) կազմեցին այս ժողովուրդների հիմնական մասը և 10-ից 12-րդ դարերում արտագաղթեցին Կենտրոնական Ասիայից մինչև Անատոլիա, հաջորդական ալիքներով անցնելով Իրանի և ներկայիս Ադրբեջանի տարածքով:

Ծագումով նրանք կազմված էին քսանչորս ցեղերից: Հիմնարար առաջնորդը՝ Օգյուզ խանը (Oguz Han) առաջին կնոջից ուներ երեք որդի. Նրանք էին՝ *Գյուն* (*Gun-արև*), *Այ* (*Ay-լուսին*) և Յիլդիզ (*Yildiz-աստղ*), իսկ երկրորդ կնոջից ուներ ևս երեք որդի՝ *Գոկ* (Gök-երկինք), *Դաղ* (Dag-լեռ), և *Դենիզ* (Deniz-ծով) անուններով:

Այս վեց որդիներից յուրաքանչյուրն իր հերթին ունեցավ չորս որդի, որոնցից էլ առաջացան քսանչորս ցեղեր: Առաջին երեք որդիների ցեղերն անվանեցին *Բոզոկ* (Bozok – մոխրագույն նետեր), իսկ վերջին երեք որդիների ցեղերը՝ *Յուչ ոկ* (Üç Ok- երեք նետեր):

Գյունհանի Բոզոկ ցեղերն են՝ Կայիները[69], Բայաթները, Ալկա Էվրիները և Կարա Էվլիները:

Այհանի ցեղերն են՝ Յազիրները, Դոդյուրգյաները, Դյոգերները և Յապաղլյուները:

Յիլդիզհանի ցեղերն են՝Աֆսարները, Բեգդիլիները, Կրզրկներրն Կարգրնները:

Գյոկանի Յուշոկ ցեղերն են՝Բեյրնդիրները, Պեչենեկները, Չավյուլդուրները և Չեպնիները:

Դաղանի ցեղերն են՝Սալյուրները, Էյմուրները, Ալա Յունդլյուները և Յուրեգրրները:

Դենիզհանի ցեղերն են՝Իգդիրները, Բյուգդյուզները, Յրվաները և Կրնրկները:[70]

Թուրքմենական ցեղերը, որոնք 11-րդ դարում

69 Սրա մեջ միավորվել են օսմանները (*Osmanogullari*), որոնց տիրապետությունը տևել է 1299 -1922թթ:

70 Սրա մեջ միավորվել են սելջուկները (*Selçukogullari*), որոնց սուլթանությունը Անատոլիայում տևել է 1077 -1307թթ:

թափանցում են Անատոլիա, չնայած, որ իրենց առաջնորդներն ակնհայտորեն դավանափոխվել էին՝ ընդունելով իսլամը, այսուհանդերձ շատ ցեղեր դեռևս իրենց նախնիների հավատալիքների և շամանական ավանդույթների շարունակողն էին: Ալեվիզմում դեռ կարող ենք գտնել դրանց բազմաթիվ հետքերը:

Երկնքի Աստված Տանգրին (Տանրի)

Տանրին կամ *Գյոկ-Տանրին* կապույտ երկնքի աստվածն է: *Ակ Անան* կամ *Յերը*՝խավար երկրի աստվածուհին: Նրանք երկուսով թագավորում են ներդաշնակությունը: Արևը (Koyash-Կոյաս) և լուսինը (Ay) նրանց երեխաներն են և նրանց կապը: Առաջին մարդը՝ (*Er kisi*) *Էր Կիշին*, նույնպես արարվել է երկուսից. մարմինը տվել է երկիրը, միտքը՝ երկինքը: Դժբախտաբար նա անկատար եղավ և մարդկանց չկարողացավ դուրս հանել խավարից: *Տանրին*, ուրեմն, պարտավոր է նրանց լուսավորել՝ նրանց առաջնորդելու համար սուրբ կենդանիներ ուղարկելով: Դա արծիվն է (*Kartal*), որը երկիր հասցրեց շամաններին: Շամանը կամ *Կամ-Օգանը* նա է, ով կարող է մեկնաբանել Տանրիի նշանները: Նա կարիք չունի տաճարների, քանի որ երկնքի աստվածը ամենուրեք իր մոտ է, իհարկե՝ երկնքում, բայց նաև երկրի վրա, բնության՝ գետերի, լեռների և ծառերի մեջ: Նա մարդկանց հետ հաղորդակցվելու միջոցներ է թողել, ինչպես օրինակ «*Երկնային ծառը*» (*Gök Diregi*): «*Ծառերի և անտառի պաշտամունքը, համեմատած ջրի և լեռան պաշտամունքի հետ, գերակշռող է, բացի դրանից թուրքական ժողովուրդների առասպելներում ծառը կապվում է Տանգրիի՝ գերագույն էության ծագման հետ: Մասնավորապես մեծարվել են հաճարենին (Kayin agaci), գիհին (ardiç), սոճին կամ եղևնին (çam), կաղնին*

(çinar) և բարդին (servi)» :[71] Ծառը մի տոտեմ է՝ աստծո հետ հաղորդակցվելու, նրան ցանկություններ և աղոթքներ ուղղելու համար: Ալեվիներն այսօր էլ դեռ շարունակում են այդ ծառերի ճյուղերից կախել կտորի երեք փոքր մասեր, որպեսզի իրենց ցանկություններն իրականան: Այդ ծառերը կոչվում են ցանկությունների ծառեր» (*dilek agaci*).

Ամենագեղեցիկը, որ ինձ ցույց տվեց նա, Աբդալ Մուզա սուլթանի դամբարանում է՝ Անթալիայի մոտ գտնվող Տեկ կոյու կոչվող գյուղում, որտեղ թուրքմենական ցեղերից ուղղակիորեն սերված տահտաջի ալեվիներ են ապրում: Մեկ այլ հոյակապ ծառ գտնվում է Նեվշեհիրին կից Հաջի Բեկթաշիի դամբարանում, բայց այդ օրերին (2008թ.), երբ այնտեղ էի, տեսնելով այդ ծառը՝ ես հասկացա, որ այն այլևս շատ հին, չորացած ծառ է, և այցելուներն՝ ակնածանքից դրդված, այլևս չեն համարձակվում ծառի ճյուղերին կախել իրենց ցանկությունների փոքրիկ լաթի կտորները:

Թուրք ժողովրդի նախնիների պաշտամունքների մեջ կենդանիները նույնպես ունեցել են նշանակալի դեր: Քանի որ նրանք *Տանրիի* կողմից մարդկությանը ուղարկված ուղեկցորդներն էին, ուրեմն արժանի էին մեծագույն հարգանքի: Յուրաքանչյուր *Կամ-Օգան* ուներ իր կենդանին՝ որպես պաշտամունքի առարկա, որը արտահայտվում էր «կենդանի-հայր» (*hayvan-ata*) կամ «կենդանի-մայր» (*hayvan-ana*) եզրույթով: Մեծ մասամբ խոսքը վերաբերում էր գիշատիչ թռչուններին կամ եղջերուներին: Թուրքական ժողովուրդները հավատում էին, որ իրենց շամաններն օժտված էին շնորհով՝ փոխակերպվել իրենց տոտեմ կենդանու, որպեսզի ճամփորդեն և հասնեն մինչև երկնային աստծուն: Թռչելու այս կարողությունը անվանում են *Ուչմակ*

71 Thierry Zarcone, Hommes-Pierres, Hommes-Arbres et Hommes-Animaux en Asie turque et en Europe orientale, Diogène, PUF, 2004.

"Uçmak": Նման քոչվոր հասարակություններում չվող թռչունների թռիչքը մեկնաբանվում էր որպես աստվածային նշան, թե արդեն պահն է տրվելու ժամանակների քմահաճույքին: Այսպես՝ կռունկների թռիչքը (*turnalar-թյուրնալար*) նշանակում էր ամառային արոտավայրերից (*Yaylak-յայլակ*) անցում դեպի ձմեռային բնակավայրերի (*Kislak-Կըշլակ*):

Ալեվիները պատմում են, որ Հաջի Բեկթաշը Խորասանի իր իրանական շրջանից Անատոլիա է ժամանել աղավնու կերպարանքով (*güvercin-գյուվերջին*)[72]: Ծիսական երգերն ու պարերը կոչվում են «*կռունկների Սեմահ*» (*Turnalar Semahi*): «*Բանավոր ավանդությունը պատգամում է, որ սեմահ պարողները նմանակեն թռչող կռունկների շարժումները: (...) Երգերը հաստատում են այդ նկատառումները: Դրանք արտահայտում են կռունկներին ուղղված անընդմեջ կանչ թե՛ գարնանը, երբ նրանք դեպի հյուսիս են բարձրանում, թե՛ աշնանը, երբ նրանք կրկին թռչում են դեպի հարավ: (...) Սեմահական երգերում հիշեցում կա ոչխարի հոտը ամառային արոտավայր*[73] *տանելու մասին, որ անցյալում կիրառում էին ալեվիների մեծամասնությունը, և հիշում էին նաև բաժանումը, որ առաջացնում էին այդ յայլաները: Թե՛ մեկը, թե՛ մյուսը խորհրդանշված են առեղծվածային յայլաների և բաժանումների մեջ: Կռունկներն ուղեկցում են այդ ամառային արոտավայրեր գնացող ոչխարների հոտը, և նրանց անցումը մեկնումի ազդանշան է տալիս»*:[74]

72 Kudsi Erguner, *Vilâyet-nâme, le livre des derviches bektashi*, Le bois d'Orion, 1997.

73 Հայերեն լեզվի փոխառություններում ևս կա «յայլա» բառը : Օրինակ հանդիպում ենք Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմում՝ «Համբարձում յայլա, յայլա ջան, յայլա»... և այլն:

74 Françoise Arnaud-Demir, *Le syncrétisme Alévi-Bektachi dans les chants accompagnant la danse rituelle Semah,syncrétismes et hérésies dans l'Orient Seldjoukide et Ottoman* (14e-18e siècles). Actes du Colloque du Collège de France, Peeters Paris, 2001.

Ի վերջո, թուրքական ժողովուրդները, որոնք ապրում էին ցեղերով, կարծում էին, թե գոյություն ունի նաև իրենց նմուշօրինակի վրա հիմված «կենդանիների ցեղ»՝ հատկապես եղջերուների ցեղ: Եղջերուն անտառի արքան է: Նրա եղջյուրներն աճում են պարբերաբար և առաջացնում իրերի հավիտենական վերսկսումը, բնական և հոգևոր տարաբնույթ բոլորապտույտները: Նա թարմության և բերրիության պատկերն է: Բայց նա ունի նաև մոգական դեր՝ երկրից երկինք տեղափոխելով մեռյալների հոգիները: Ինչպես արծիվը երկնքում, այնպես էլ եղջերուն երկրի վրա գերազանցապես համարվում է սուրբ կենդանի:

Կամ-Օզանը

Թուրքական ժողովուրդների շամանը՝ *Կամ-Օզանը* հավակնում էր լինել Արծվի որդին (*kartaloglu*) և օժտված լինել թռչունի ոգով, որը Տանգրի աստծո արտահայտությունն է: Այսպես, նա կարող էր հաղորդակցվել ամենազոր Երկնքի հետ: Ժողովրդի կարծիքով *Կամ-Օզանը* ուներ բժշկի, բախտագուշակի և հոգևոր առաջնորդի անսահման կարողություններ, քանզի խոսում էր սուրբ թռչունի անունից, Տանգրիի անունից: Երբ կինը չէր կարող երեխա ունենալ, խնդրում էր շամանին խոսել Արծվի ոգու հետ. եթե կինը հղիանում էր, այնժամ ասում էին, որ «երեխան ծագում է արծվից»: (...)

Ոգիների աշխարհի հետ հաղորդակցվելու համար շամանն օգտագործում էր փետուրներ հագուստի համար, իսկ երջերուի եղջյուրները՝ գլխադրի համար: Նա եղջերուի կաշվե թմբուկ էր օգտագործում՝ իր ծիսական պարը ռիթմավորելու համար, զգացապատրանք առաջացնող նյութեր՝ զմայլանքի համար և ինքն իրեն կեղանու փոխակերպվելու համար, և այսպես մի ուրիշ աշխարհ հասնելու համար, որտեղ կապի մեջ էր Տանգրիի հետ:

Շամանները մեծ տեղ էին տալիս արևին և լուսնին՝ երկնքի և երկրի երեխաներին: *«Լուսնի փուլերն են վճռում գործողությունները, տոները, պատերազմները և հուղարկավորությունները: Այս վերջիններիս համար հաշվի էին առնում նաև արեգակնային օրացույցը, գիշերահավասարները և արևադարձերը: Բազում առասպելներ կային աստղերի լույսի մասին, որի դրսևորումը կարող էր լինել կանանց բեղմնավորող երկնագույն մի կենդանի, լույսից ծնված էակներ, որ իջել են երկնքից՝ ջահել աղջիկներին նախնիների և հերոսների հետ ամուսնացնելու համար»*:[75]

Թուրքական ժողովուրդների մոտ կար արևի և լույսի պաշտամունքը: Լուսնի մահիկը և արևը պատկերված էին նրանց պատերազմական դրոշների վրա: Ներգրավված էին նաև պահապան կենդանիներ, ինչպիսիք են եղջերուն և առյուծը (կամ այլ գիշատիչ կենդանիներ):[76]

Շամանը ծիսակատարություններ և զոհաբերություններ էր կազմակերպում նրանց պատվին: Մասնավորապես ձին և նապաստակը սրբազան կենդանիներ էին: Ձին զոհաբերվում էր արևին, քանզի նա գերազանցապես ազնվական կենդանի էր համարվում այս քոչվոր և ռազմատենչ ժողովուրդների համար: Նապաստակը կամ նրա էգը ծառայում էին լիալուսնի ժամանակ ապագան կարդալու համար: *«Շամանության մեջ շամանը բացում է նապաստակի որովայնը՝ ապագան այնտեղ կարդալու համար: Այս կենդանուն պահում էին միայն այդ նպատակի համար. այն տաբու (արգելք) է: Նապաստակի միսը չէր օգտագործվում»*:[77]

Հետաքրքիր է փաստել, որ ձին և նապաստակը (կամ

75 Jean-Paul Roux, *Les Astres chez les Turcs et les Mongols*, Revue de l'histoire des religions, 195, 1979.

76 Նույն տեղը :

77 Ali Tayyar Önder, *Türkiye'nin Etnik Yapisi*, Kripto Kitaplar 2008.

ճագարը) ալեվիների համար արգելված կերակուր է: Պատմում են, որ նրանք ավանդաբար ձիու միս չեն ուտում՝ հարգելով Ալիի ձին (*Duldul*), իսկ ճագարի միսը չեն ուտում՝ որովհետև էգ նապաստակը կնոջ նման ունի դաշտանային փուլ. սակայն ավելի հավանական է, որ այն առաջացած լինի շամանական տաբուների մնացորդից:

Ինչ վերաբերում է Հաջի Բեկթաշ Վելիի ավանդական ներկայացմանը, ապա առյուծին և եղջերուին ձեռքով բռնելը մի±թե զուտ իրողություն է: Հայտնի է, որ Օգիզուզ թուրքմենների մի մասը դավանափոխ եղան՝ ընդունելով իսլամ՝ *Բաբա* կամ *Դեդե* կոչվող սուֆիների շնորհիվ, որոնք ավանդական *Կամ-Օգանների* կաշվի մեջ էին հայտնվել: Նրանք ընդունել էին թուրք ժողովուրդների բավականին մեծ թվով հավատալիքներ, որպեսզի ավելի լավ ընդունելության արժանանան: Այդ դեպքում առյուծն ու եղջերուն արդյոք չե՞ն ներկայացնում արևն ու լուսինը:

Թուրքմենական Դեդերն ու Բաբաները

Թուրք պատմաբան Մեհմեթ Ֆյուադ Քյոփրյուլյուն (1890-1966) այսպես է ամփոփում թուրք ժողովրդի մահմեդականացումը. «*Որքանմեծանումէմերիմացությունը թուրքական սուֆիզմի առաջին ժամանակաշրջանի մասին, վերջինիս վերաբերյալ շամանության հետքերի, այսինքն, այսպես կոչված, թուրքմենական հին կրոնի մնացորդների մասին, այնքան դրանք մեզ ավելի հավանական են թվում: Թուրքերի գաղթը դեպի արևմուտք՝ դեպի մուսուլմանական երկրներ, տևեց 10-րդ դարից մինչև 14-րդ դարը, և հետևաբար մահմեդականացումը շարունակվեց բազմաթիվ հարյուրամյակներ: Այսպիսով շամանիստական ազդեցությունները անկասկած թարմացվեցին, և շամանությունը լրիվ չկորցրեց իր ուժը*»:[78]

78 Mehmed Fuad Köprülü, *Influence du chamanisme turco- mongol sur les ordres mystiques musulmans*, 1929.

Օգիզուզ թուրքերի դարձը դեպի իսլամ սկսվում է սելջուկների *Կինիկ* ցեղից: 10-րդ դարում ընդունելով կրկին սուննի իսլամ՝ նրանք դառնում են հզոր ռազմական տերություն: Նախ նրանք զավթում են Խորասանը՝ Իրանի արևելյան գավառը, և սրա վրա հիմնվելով շարունակում են իրենց նվաճումները: 1038 թվականին Թյուգրյուլ Բեյը իրեն հռչակում է Նիշապյուրի սուլթան, այնուհետև 1055 թվականին աբբասիդյան խալիֆի հրամանով գրավում է Բաղդադը: Սուննիների աբբասիդյան կայսրությունը, որը 750 թվականից ի վեր իշխում էր մուսուլմաններին, տեսավ իր հեղինակության և իշխանության վերականգնումը շիիթների Բույյիդական կայսրության կողմից, որը տեղակայվել էր Իրանում 932 թվականից ի վեր: Որպես երախտագիտության դրսևորում, սուննիական իսլամը պաշտպանելու համար, սելջուկները ստանում են «սուլթանի» տիտղոսը և կազմակերպում են սելջուկների նոր մեծ կայսրությունը Ալփ Առսլանի անվան տակ 1063 թվականից մինչև 1072թվականը, որի մայրաքաղաքը գտնվում էր Իրանի Ռեյ քաղաքում: Այս նոր պետությունը շատ արագ կազմավորվում է և ընդունում պարսկական լեզուն և մշակույթը, ու արևելք է քշում խռովարար թուրքական ցեղերին, որոնք շարունակում են հորդել տարագրության մեծ հորձանքներով:

Անատոլիան բաց է եղել նրանց առջև Բյուզանդական կայսրությունից 1071 թվականին Մանզիկերտի մոտ կրած պարտության պատճառով, և այն ժամանակից ի վեր թուրքմեններ անվանում էին այն ցեղերին, որոնք շարունակում էին իրենց քոչվորական կյանքը: 1077 թվականին սելջուկները Անատոլիայում ստեղծում են մեկ այլ պետություն, որն անվանվում է Ռումի սուլթանություն՝ Նիսե (*Iznik-Իզնիկ*), իսկ հետո Իկոնիում

(Konya-Կոնիա) մայրաքաղաքով. այս պետությունը կրում է նույն հատկանիշները՝ կենտրոնացում, սուննիական իսլամ և պարսկական մշակույթ: Թուրքմենական ցեղերը, այս պետություններից դուրս, շարունակում են ապրել իրենց քոչվորական կյանքով: Սուֆիական դերվիշներ ներքաշվեցին այդ ցեղերի մեջ, նրանց մահմեդական դարձնելու նպատակով և *Կամ-Օզանի* հետնորդների տեղը գրավելու համար: Այդ ցեղերի կյանքը արձանագրված է բանավոր ավանդության մեջ՝ ավելի ուշ գրված «*Դեդե Կորկուտի Գիրքը*» վերնագրով:

Այնտեղ նկարագրվում է անասնաբուծությամբ զբաղվող մի բնակչություն, որն անցնում է տեղից տեղ ամառային արոտավայրերի՝ յայլակների (*Yaylak*) և անասունների ձմեռանոցների՝ Ղշլյաղների (*Kislak*) հատվածում, ապրում՝ ճամբարներում, որտեղ կանայք հավասար իրավունքներ ունեն տղամարդկանց հետ և սիրելի են, քանզի նրանք տան պաշարների երաշխավորն են. «Արի՛ այստեղ, իմ բախտ, իմ գահ. տանս մեջ, դու նոճի ես, երբ ճեմում ես, քո սև վարսերը միահյուսվում են կրունկներիդ շուրջը, հոնքերդ ասես գծած կամարներ լինեն, կարմիր այտերդ ասես աշնան խնձոր լինեն, իմ կողակից, իմ հենարան, իմ արժանապատվություն»:[79]

Այս բնակչության մեջ կան «սպիտակ մորուքավոր» իմաստուններ. «*Դեդ Կորկուտը «ակսակալ» (սպիտակ մորուք) է, ուղեկցորդ կամ իմաստուն մեկը, ով լուծում է ցեղում առաջացած խնդիրները: Բնակչության մեջ «ակսակալները» (aksakals) համարվում են գիտնականներ և, մեծամասամբ, նրանց անվանում են Դեդ (պապ): Անցյալում այս եզրույթով կոչում էին ցեղի տոհմապետերին*»: [80]

Դեդերը ամուսնությունների խորհրդատուն էին

79 H. B. Paksoy, D. Phil, *Introduction to Dede Korkut*, Soviet Anthropology and Archeology, 29, 1990.

80 Նույն տեղը:

և ամուսինների համատեղ կյանքի հանձնառության երաշխավորները. «*9-11-րդ դարերում քոչվոր ցեղերում գոյություն չուներ ամուսնալուծություն: Տասներկու պատմություններում, որոնցից կազմված է Դեդ Կորկուտ Գիրքը, մենք չենք գտնի ամուսնալուծության և ոչ մի դեպք դեպք: Ամուսինը և կինը բաժանվում էին միայն անկանխատեսելի հանգամանքների բերումով, երբ հակամարտություններն ու կռիվները ստիպում էին տղամարդուն հեռու լինել իր կնոջից: Նման դեպքերում տղամարդիկ իրենց նշանածներին կամ կանանց ասում էին. «Թույլ տուր, որ հեռանամ մեկ տարով, եթե չվերադառնամ, տուր ինձ երկու տարի, և եթե այդ դեպքում էլ չվերադառնամ, տուր ինձ ևս մեկ տարի»*:[81]

Վերջապես, մենք տեղեկանում ենք, որ այս տոհմային հասարակությունները կարևորում էին երաժիշտների դերը. «Քոչվոր ցեղերը չէին կարող ապրել լռության մեջ: Երգիչներն ու երաժիշտները չէին դատապարտվում այնպես, ինչպես իսլամում, այլ ընդհակառակը, այդ դարաշրջանի հայտնի «աշըկները» (asik) մեծարվում էին որպես «օզան»: Լինել «օզան», նվագել (Kopuz) կյոպյուզ՝[82] ցեղի յուրաքանչյուր անդամի ձգտումն էր»:

Այստեղ գտնում ենք ալեվիների համայնքի հիմնային սկզբունքները՝ Դեդէ, որպես համայնքի հոգևոր և սոցիալական առաջնորդ, հասարակության մեջ տղամարդու և կնոջ իրավահավասարությունը, մենամուսնության սկզբունքը (ի հակադրություն իսլամի) և միասնական մշակութային հիշողության փոխանցման մեջ սազահարի (asik/azan) կենտրոնական դերը:

Մեհմեդ Ֆյուադ Կյոպրյուլուն այդ բանը ևս նշել

81 H. B. Paksoy, D. Phil, *Introduction to Dede Korkut*, Soviet Anthropology and Archeology, 29, 1990.

82 Կյոպյուզը հին լարային գործիք է: Համարվում է սազի նախատիպը:

է. «Կասկած չկա, որ հնամյա թուրքական ընտանիքի մայրիշխանության պատճառով դեռևս մեծ կարևորություն էին տալիս կնոջը, և կանայք, չնայած իսլամի գրություններին, կարող էին մասնակցել հասարակական ժողովներին: Այստեղից չենք կարող եզրակացնել, որ քոչվոր թուրքերը դիտվում էին որպես շամաններ (թուրքերեն-Kam), իսկ նրանց էթնիկական խմբի սուֆիները՝ դավանափոխներ: Ահա թե ինչու, տղամարդիկ և կանայք շատ բնականորեն կարող էին մասնակցել ծիսակարգերին, և շամանների դյութիչ խոսքերի փոխարեն ունկնդրել բարդ, խորհրդավոր հորինվածքներ՝ իրենց մայրենի լեզվով:»[83]

Ովքե՞ր են այդ սուֆիները, որ ներգրավվում են թուրքմեն քոչվոր ցեղերի կյանքի մեջ. թուրքական լեզվի սուֆիական միաբանության անդամներ, ինչպես օրինակ Յեսեվիր Ահմեդի Յեսեվին (1093-1166), թե պարզապես թափառական դերվիշներ *Kalenders* կամ *Abdals*, ովքեր չեն պատկանում ոչ մի միաբանության և, նրանք ովքեր գալիս են իրանական Խորասան գավառից:

Բնականաբար նրանք լավ չեն ընդունվում քոչվորների կողմից և *Կամ-Օգանների* փոխարինման իրենց դերը պետք է արդարացնեն հրաշքներով և մարգարեություններով: Այսպես, սուֆիները բնակչությանն ասում են, որ կարող են փոխակերպվել կենդանու և կրկնօրինակում են նրանց էքստազային ծիսական պարերը հին շամանների ծեսերի հիման վրա: *«Իսլամին դավանափոխվելը ընթացել է կամաց-կամաց: Անմիջապես չեն վերացրել նախնիների սովորություններն ու հավատալիքները: Պիր-ի-Թյուրկիստանի (Ahmet Yesevi) առասպելական կյանքը մեզ նորից տանում է այդ հավատալիքների միջավայրը: Ապշում ես սրբի հրաշքների մասին շարադրվող պատմությունների առատությունից. նա կարող էր փոխակերպվել թռչունի, թռչել օդի միջով, ինչպես ավանդական շամանն էր անում: Նրա մոգական ուժի շնորհիվ անհետանում էին լեռները: Նրան մշտապես օգնում էր Հիզիրը, որը ներկայացնում էր համընդհանուր նախաիսլամական մի աստվածություն ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքում»:*[84]

Թափառական դերվիշները (*Kalenders* կամ *Abdals*) նույնպես խառվում են այս թուրքմենական ցեղերին: Խորասանում Նիսհապուրից ծագողների գաղափարները մուսուլմանական սուֆիզմի և Մազդակյան կրոնի խառնուրդ է: Զրահադաշտական Մազդակ քահանան 5-րդ դարում ապստամբություն է բարձրացնում և վիճարկելով հասարակական կարգը, հայտարարում է, որ հարստությունները պետք է կիսվեն: Նրանք ճնշվում են և հալածանքների ենթարկվում: Նրանց հետնորդները 8-րդ դարում Խորասանում վերամիավորվում են և, սկսած Օգհուզ ցեղերից, ապստամբություններ են բարձրացնում (755թ. և 766-ից մինչև 768թ.): Այս կրոնը կրկին վերակենդանանում է ադրբեջանցի իշխան՝ Բյաբակ Խորամդինի շնորհիվ (795-838), իսկ նրա կողմակիցներին անվանում են խորամիդներ: «Խորամիդներն ակնհայտորեն չափից դուրս հանդուրժող էին: Նրանք հանդուրժում էին բոլոր կրոնները՝ համարելով ընդունելի, ինչպես նաև նախորդ մարգարեները, որպես մի և նույնական ներդրում ճշմարտությանը (Hakk)՝ նույնացված իմամ Ալիի անձի մեջ»:[85] «Մեկուսանալով իր ամրոցում (ներկայիս իրանա-ադրբեջանական սահմանում)՝ Բյաբակ Խորամդինը երեսուն տարի շարունակ ռազմական պայքար կմղի իր հարևան հայերի և խալիֆայության զորամասերի դեմ: Նրա զորքերը թալանում էին վանքերը՝ իր հասարակական ընդվզման շարժառիթով: (...) Բացի իր հավասարություն հռչակող ուղերձից, Բյաբակ Խորամդինի

83 Mehmet Fuad Köprülü, *Influence du chamanisme turco-mongole sur les ordres mystiques musulmans*, 1929.

84 Irène Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, op.cit.

85 Pierre d'Hérouville, *La ruine dans la taverne, 1ère partie: ascètes et ordres hétérodoxes d'Iran*, 2010.

առասպելը արմատավորվեց Խալիֆաթի դեմ աճող ազերիների և խորասանցիների ոխակալության մեջ:"[86]

Հենցայս ավանդույթն է, որ պահպանել են Կալենդերները և Աբդալները 13-րդ դարի Անատոլիայի թուրքմեն ցեղերի մեջ: Նրանք կոչվեցին Դեդեր կամ Բաբաներ, իսկ Հաջի Բեկթաշ Վելին առնչվում է այս ուսմունքին:

Հաջի Բեկթաշ Վելի. առասպելի և իրականության միջև

13-րդ դարի Անատոլիան Սելջուկ Ռումի սուլթանության ներքո հակասական մի հասարակություն է, որտեղ քաղաքային ընտրախավերն ընդունել են պարսկական մշակույթը և սուննիական իսլամը այն ժամանակ, երբ գյուղերը ներկայացնում են քրիստոնեական ժողովուրդների (հույներ, հայեր) և թուրքմենական քոչվոր ցեղերի մի խճանկար, որոնք դեռ շատ կապված են շամանությանը, և որոնց մահմեդականացումը շատ հեռու էր ավարտվելուց: Սուլթանները պարսկերեն են խոսում, և Ղուրանը դասավանդվում է արաբերեն *մեդրեզներում*՝ կրոնական դպրոցներում, գյուղացիները խոսում են հունարեն, հայերեն, թուրքերեն, և նրանց կրոնը առեղծվածային է՝ հիմված նրբերի և մարգարեների հնարած հրաշքների վրա:

Քաղաքներում *«առևտուրն ու արհեստագործությունը քրիստոնյաների և հրեաների մեծ մասի ձեռքում էր, քանզի թուրք սելջուկյան հասարակության կորիզը կազմում էր պատերազմող ազնվականությունը: Սակայն սելջուկ կառավարությունը հանդուրժող էր և խոհեմ. մուսուլմանները և ոչ մուսուլմանները համերաշխ գոյակցում էին»*:[87]

86 Idem

87 Irène Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, op.cit.

Արհեստավորներն ու առևտրականները փոքր ավաններում և գյուղերում խմբված էին Ակիսի (թուրքերեն՝ Ahilik) միավորումներում և միաբանություններում: Նրանք իրենց անվանում են *Futuvvet* կոչվող իսլամի առաջին տարիների ասպետական մտքի գաղափարակիրներ: Նրանք գործում են հաղորդության գաղտնի արարողությունների հիման վրա, և հյուրասիրությունը, մեծահոգությունը և փոխօգնությունը գործածության մեջ են դնում այնտեղ, որտեղ պետությունը բնակչությամբ չի հետաքրքրվում: Այս միաբանությունների հիմնադիրն է Ահի Էվրեն (1169-1261), իսկ նրանց ուսուցման բովանդակությունը կրել է շամանական թուրքմենների և սուֆիզմի հավատալիքների խորը ազդեցությունը: *Ակիները* ասում էին, որ իրենք իմամ Ալիի զինվորների հետնորդներն են: Միավորման հավատարմության իրենց դաշինքը կնքելու համար, յուրաքանչյուր անդամ պետք է վերցներ մի «եղբայր անդինից» (*Ahiret Kardesi*) որպես քավոր և նեցուկ ողջ կյանքի համար: Տեղի էր ունենում մի արարողակարգ, որտեղ կատարվում էր խորհրդանշական «երկու եղբայրների գոտևորում» (*Kemerbestlik*): Յուրաքանչյուր վաճառական, յուրաքանչյուր արհեստավոր ուներ այդպիսի «եղբայր»:

Ալեվիները վերցրել են այդ ավանդույթը *Musahiplik*-ի միջոցով, որը պարտադիր պարտականություն էր: Ընտանիքից դուրս ընտրել մի «եղբայր», և այսպիսով, փոխադարձ օգնություն հաստատել ամբողջ կյանքի համար: Ալեվի Դեդէ այսպես է արտասանում երդման պայմանները.

«Տեղիք մի՛ տվեք ձեր ցանկություններին, մի՛ լքեք ձեր ճանապարհը, կիսե՛ք ձեր ունեցվածքը և կյանքը, անօրինական ոչինչ մի՛ արեք, ձեր ուրախություններին և վշտերին եղե՛ք ընկերակից և եղեք ճանապարհի ընկեր (...)»:

«Անկասկած, Ակիների կորպորացիայի միջոցով է, որ «գործակից» կամ «եղբայր» musahiplik սովորույթը ալեվիների

մոտ դարձել է կրոնական ծիսակատարություն»:[88]

Ակհիները վիթխարի ուժ ունեցան այնտեղ, որտեղ սելջուկների պետությունը թույլ էր. նրանք ունեին արդարադատության իշխանություն, իսկ Անկարայում՝ նույնիսկ մի բեյլիկատ:[89] Երբ նրանց կառավարությունը դարձավ շատ հզոր, սուլթանները նրանց հալածեցին, և նրանցից շատերը ապաստան գտան Բեկթաշի վանքերում, որոնց ազդեցությունը երևում է ծիսակարգերում:

13-րդ դարի միջնամասում սելջուկների իշխանության համար հիմական վտանգն ավելի շատ արևելքից էր: Թողնելով ասիական իրենց տափաստանները՝ մոնղոլական ցեղերը, որոնց հրամանատարները Չինգիզ Խանի սերունդներից էին, գավթեցին Պարսկաստանը: Առաջացավ թուրքմենական ցեղերի աննախադեպ արտագաղթ դեպի արևմուտք՝ դեպի Անատոլիա: Հարյուր հազարավոր քոչվոր թուրքմեններ իրենց հոտերի հետ հասնում են մինչև անատոլիական բարձրավանդակներ և փորձում են դիմակայել մոնղոլական վայրագություններին: Այս քոչվոր փախստականների հոտերին հարկ է ավելացնել իրանական խորեզմեցիներին[90] (Harezmsahlar), որոնք փախչում են մոնղոլների ավերած, մոխիր դարձրած Խորասանից:

Սելջուկյան հասարակությունը այս վերամիավորումից լրիվ կորցնում է հասարակական հավասարակշռությունը: Իրենց անասունների համար արոտավայրեր և ձմեռանոցներ գտնելով՝ քոչվոր թուրքմենները քիչ-քիչ դառնում են գյուղերի բնակչության մեծամասնությունը:

88 Irène Melikoff, *Sur les traces du Soufisme turc, recherches sur l'islam populaire en Anatolie,* Isis, 1922.

89 *Բեյլիկատը* թուրքական իշխանության ձև է՝ կապված կլանի ղեկավարի՝ բեյի հետ :

90 *Խորեզմը* պետություն էր իրանական Խորասանում, որը ղեկավարվում էր թուրք-պարսկական մի արքայատոհմի կողմից (1077-1231):

Նստակյաց բնակչությունը նրանց այնքան էլ չի սիրում, և գյուղացիները տառապում են ինչպես նրանց քոչվորական ապրելակերպից, այնպես էլ նրանց ռազմատենչ ոգուց: Հարձակումներն ու կողոպուտը սովորական էին դարձել հատկապես քրիստոնյա գյուղացիական համայնքներում:

«Նրանք հաստատվել էին անատոլիական տափաստաններում՝ Սիվասի, Տոկատի, Ամասիայի, Չորումի, Կայսերի, Բոզոկի, Կիրշեհիրի շրջաններում: (...) Սակայն հորձանքների պատճառով աստիճանաբար չէին բավականացնում արոտավայրերն ու ձմեռանոցները: Այդ արոտավայրերի պատճառով ցեղերը պատերազմում էին իրար դեմ: Դրանք նաև պետք է բախվեին արդեն նստակյաց թուրքերի հետ, որոնք տառապում էին քոչվորների անկարգություններից»:[91]

Ժըիասեդդին Կեյհյուսրեվ II սուլթանը և իր Սադեդին Քյոպեկ վեզիրը հակաժողովրդական դրսևորումներ են ցուցաբերում այս բնակչության հանդեպ՝ նրանց դեմ ուղարկելով իրենց ջոկատները, որպեսզի խանգարեն նրանց բնակավայրը փոխելու հարցում, ինչպես, և որպեսզի ավելացնեն առանց այն էլ չափազանց մեծ հարկերը: Դեռ ավելին, սուլթանի խմբերը գործում են միշտ ի վնաս նստակյաց գյուղացիների (թե՛ քրիստոնյա, թե՛ մուսուլման), տարածքային ընդհարումների ժամանակ, որոնք նրանց հակադրում են քոչվոր թուրքմեններին:

Այս դժգոհությունը մեծ ընդվզման առիթ է հանդիսանում. 1239-1241 թվականները թուրքմենները մեծ ապստամբություն են բարձրացնում, որը ղեկավարում են նրանց հոգևոր առաջնորդները՝ *Բաբաները*:

91 Irène Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, op.cit.

Բաբաների ապստամբությունը (1239-1241)

Այս ապստամբությունը[92] հիշատակող պատմական աղբյուրներից, ինչպես նաև Իռեն Մելիքովի և Ահմեդ Յասար Օկակիի ուսումնասիրություններից մենք տեղեկանում ենք, որ այն ունեցել է երկու գլխավոր օջախ: Առաջինը (Ամասիայի, Տոկատի, Չորումի և Սիվասի շրջանում) ղեկավարվում էր թուրքմեն բաբա *Բաբա Իլիաս-ի Խորասանի* կողմից, որը հայտարարել էր, թե իրեն ուղարկել են Աստծո անունից՝ պայքարելու պալատական հարմարավետությունների և հաճույքների մեջ թաղված սուլթանի և անարդարությունների դեմ, ինչպես նաև ազատագրելու տանջահար թուրքմեն ժողովրդին, որը խեղդվում էր ծանր հարկային բեռից: Ապստամբության երկրորդ օջախը Ադիյամանի, Մալաթիայի, Ուրֆայի, Մարաշի և Էլբիստանի շրջանն էր, որ ղեկավարում էր Հալեպից ժամանած *Բաբա Իսակ-ի Շամի* անունով խորեզմյան մի բաբա, որը առաջինի աշակերտն էր: Նա նույնպես պայքարում էր հարկահավաքների դեմ և թուրքմեններին խոստանում էր պատերազմի ավարտին անաչառ բաշխում:

Խռովության նպատակն էր տապալել սուլթանին և ստեղծել արդար պետություն (*Adalet devleti*), երկու տարածաշրջանների ընդվզող բանակներին միավորել, գործել միասին և գնալ Կոնիա:[93] Թուրքմեն ժողովուրդները միավորվեցին և դուրս եկան ապստամբության այնքան համախմբված, որ Ժըիասեդդին Կեյհյուսրեվ II սուլթանը պատերազմ սկսեց նրանց դեմ՝ Ամասիյում հարձակվելով Բաբա Իլիասի վրա: Իր կողմից Բաբա Իսհակը Մալաթիայում

92 *Menâkib-al Arifin* d'Eflâki écrit au 14e siècle, *Menâkibu'l Kudsiyye fi Menâsibi'l Unsiyye* écrit par Elvan Celebi au 14e siècle, et le *Tevârih-i Âl-i Osman* écrit par l'historien Aşıkpaşazâde (1393-1481) au 15e siècle.

93 Odkan Erdenay, *Aleviliğin Yazılmayan Tarihi*, 2008.

և Էլբիստանում երկու կարևոր ճակատամարտերում հաղթանակ տարավ՝ փախուստի մատնելով սելջուկյան բանակին: Այնուհետև ապստամբները հարձակումով գրավեցին Շիվասն ու Տոկատը և ձեռնարկեցին նոր հարձակում Ամասիայի վրա:

Սուլթանը՝ մեծ բանակի գլուխ կանգնած (բանակը կազմված էր ինչպես թուրք զինվորներից, այնպես էլ ֆրանկ, վրացի և հայ ասպետներից), գրավեց քաղաքը և, մինչ Բաբա Իսհակի լրացուցիչ ուժերը օգնության կհասնեին, սպանեց Բաբա Իլյասին:

Երբ նրանք վերջապես տեղ հասան, ծանր պարտության մատնեցին սուլթանին և սկսեցին իրենց երթը դեպի Կոնյա: Նրանք գրավեցին Կեյսերի քաղաքը և շարունակեցին իրենց ընթացքը դեպի Կիրշեհիր, որտեղ Մալիա դաշտավայրում նրանց էր սպասում մի նոր բանակ՝ կազմված թուրքերից, քրդերից, վրացիներից և դարձյալ ֆրանկ ասպետներից: Այս անգամ թուրքմենները ջախջախվեցին և անողոքաբար կոտորվեցին, և նրանց հետ էլ Բաբաների ապստամբությունը, որը խալխալել էր Ռումի սելջուկյան սուլթանության հիմքերը:

Բաբա Իլյասը, Բեկթաշը և Մենթեշը

Էֆլակին 14-րդ դարում գրած իր *Մենաքիբ-ալ Արիֆինում* Բաբա Իլյասի աշակերտների մեջ հիշատակում է իր «նախընտրելի աշակերտ Խորասանցի Հաջի Բեկթաշ-ին», որը հաստատվել է Էլվան Ջելիբի գրած *Մենաքիբու'լ Կյուդսիյե ֆի Մենասիբի'լ Յունսիյե* գրքում՝ նույնպես 14-րդ դարում:[94]

Ինչ վերաբերում է *Tevarih-I Ali Osman*-ին, որ գրել է 15-րդ դարի պատմիչ *Աշիկփաշազադեն* (1393-1481), նա մեզ տեղեկացնում է այն փաստի մասին, որ «*Հաջի Բեկթաշը Խորասանից Ռումի երկիրը իր եղբոր՝*

94 Irène Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, op.cit.

Մինթաքի հետ: Նրանք գնում են Սիվաս, հետո միանում Բաբա Իլյասին: Հետո գնում են Կիրշեհիր, հետո՝ Կեյսերի: Այնտեղից Մինթաքը վերադառնում է Սիվաս, որտեղ և նահատակվում է: Հաջի Բեկթաշը, որը չի մասնակցում ապստամբությանը, Կեյսերից գնում է Կարա Յոյուկ, որտեղ և գտնվում է նրա գերեզմանը»:[95]

Այստեղից Իոեն Մելիքովը հանգում է հետևյալ եզրակացության. *«Չնայած Հաջի Բեկթաշը նշվում է խալիֆների (աշակերտ) շարքում, բայց երևի ոչ որպես առաջնակարգ դերակատար: Նա ապստամբությունից հեռու է մնացել»:*[96]

Այսպիսով, Բաբա Իլյասի աշակերտը (ըստ Էֆլակիի՝ նախընտրելի աշակերտը), տեսե՞լ է իր եղբոր նահատակվելը և արդյոք չէ՞ր հետաքրքրվում կոիվներով և ապստամբությունով: Եվ, ի վերջո, ինչպե՞ս կարող էր նման մի «վախկոտ» դառնալ ալեվիզմի խորհրդանիշը:

Սրա վերաբերյալ թուրք պատմիչ Իսմայիլ Կյագյուսկզը անհերքելիորեն ժխտում է՝ սկսած Էլվան Ջելեբիի Մենաքիբու'լ Կյուդսիիե ֆի Մենասիբի'լ Յունսիից: Նա խնդրում է մեծ կարևորություն տալ 1992 է 2016 թիւ ոտանաւորի տողերուն բովանդակությանը:[97]

Ահա դրանցից մեկի հայերեն թարգմանությունը ներկայացնում ենք ձեզ.

«Օ՜, դու, որ հավատում ես աստծո բարությանն ու առաքինությանը,
Լսիր այս կարգադրությունը և հրամանը,
Սա Կենդեկում[98] *է, մարտից հետո,*

95 Նույն տեղը :
96 Նույն տեղը :
97 Ismail Kaygusuz, *Görmedigim Tanrıya tapmam, Alevilik ve Materyalizm*, op.cit.
98 Ըստ հեղինակի՝ այս վայրը գտնվել է Ակսարայի և Կըրշեհիրի միջև:

Որ այս կարգադրությունը ոգեկոչվեց և որ տրվեց այս հրամանը,
Այս վայրում էր, պաշտպանության ժողովի անդամների մեջ նաև
Հաջի Բեկթաշը, որը, պարզվեց ընդունակ է հաջող ավարտելու, համախմբելու և լուսավորելու ուղերձը,
Շարունակել բարեխղճորեն ապրեցնել ճանապարհն ու ուղենիշերը՝
Զննելով Հաջի Բեկթաշի հոգին
Տեսնում ենք մեծ տարբերություն այլ հոգիների հետ
Ո՛չ թե Արևի չնչին մի մաս, որ չի հանդիպել
Ո՛չ թե մեծ ծովերից ջրի մի կաթիլ, որ չի ճանաչել
Գերագույն չեն կարող բացատրել նրան տեսնողները
Քանզի միայն կույրը չէր կարող չտեսնել նրան
Ամեն բան փոխում է բնույթը՝ դաժանությունը, անարդարության խավարը
Հաջի Բեկթաշի պայծառափայլ լույսի հետ շփվելիս
Եվ այդ լույսը դեռ ավելի պիտ լուսավորի»

Եվ հենց այս գաղտնիքի շնորհիվ է, որ աշակերտների միջից նա դարձավ Սեյիդ[99]

Եվ հենց այդպես եղավ, որ նա գրեց այս վկայությունը.

«Ո՞րն է Հաջի Բեկթշի գաղտնիքը
Անգամ գիտնականը կարող է չիմանալ
Քանզի նա Հակկի պատկերն է՝ համեմատած մարդկային էակի հետ
Ես բացատրում եմ Սրբության գաղտնիքը. ես քեզ Ղուրան չեմ կարդում, ես քեզ կարդում եմ մարդկային էակ
Երեք անհրաժեշտ բան՝ Ղուրանի բանալին, բանալին,

99 Seyyid. իսլամում իմաստուններին տրվող պատվավոր կոչում, որը վկայում է այն մասին, որ նրանք սերում են Մուհամմեդի, Ֆաթիմայի և Ալիի տոհմից:

բանալին՝ ըմբռնումը նրա թաքուն իմաստի»:

Մարդ պետք է ունենա հազար բարեկամ:

Սատանան կարդում և գրում է ավելին և շատերին գիտի:

Էդեբալիին[100] և այստեղի ուրիշ ծառաներ՝ տեսնելով նրա ծավալու միտքը

Տվեցին իրենց համաձայնությունը՝ ուղարկել նրան ընկերներով լի փարթամ մի այգի, որ նման է դրախտին,

Քանզի ընկերներին միանալու համար պետք է ապրել Կաղիրում[101] և Միռաչում[102]

ՀաջիԲեկթաշ, հերո՛ս հրամանատար այս պատերազմի

Դուրս եկ Կենդեկից: Կգտնես դու սեփական ազատությունդ:

Գնա՛ դու այնտեղ՝ մեծ իմաստունի մոտ:

Իր շուրջը նա ժողվել է շատ աշակերտներ

Նրանցից յուրաքանչյուրը վայելչագեղ էակ է իրական:

Նրանք իրականում հլու են ամենաառաջացած ճանապարհին

Հավատքով՝ գեղեցիկ բարոյախոսություն, գիտելիքով և համբերությամբ:

Նրանք օրենքի գիտնականներն են և ճանապարհի գիտակները:"

Այս փաստաթղթում Հաջի Բեկթաշը ոչ միայն մարտիկ է, այլև ապստամբության ռազմական առաջնորդ: Եվ Մալիայի

100 *Էդեբալիի* (1206-1326) սուֆի է, ով մասնակցել է Բաբաների ապստամբությանը, և ով, ավելի ուշ, մեծ ազդեցություն կունենա Օսմանյան կայսրության քաղաքականության և մշակույթի վրա:

101 *Կաղիրը* խորհրդավոր ճանապարհորդություն է, որ կատարել է Մովսեսը (Մուսա) գիտությանը հասնելու համար:

102 *Միռաչը* կամ Միրաժը խորհրդավոր ճանապարհորդություն է, որ կատարել է Մուհամմեդը երկնաց աշխարհում՝ Գաբրիել (Ջեբրաիլ) հրեշտակի ուղեկցությամբ, որի ընթացքում հանդիպել է Ադամին և մյուս մարգարեներին, որոնք իրեն էին փոխանցել իրենց գիտելիքները:



Բաբաների ապստամբությունը (1239-1241)

պարտությունից հետո նա պարտավորվում է վերականգնել իր հոգևոր ուսուցիչ Բաբա Իլյասի ավանդները: Մենք հեռու ենք «այն կերպարից, որն առաջին պլանում չէ և որը հեռու է կանգնած մարտերից»:

Ո՞վ է իրականում Հաջի Բեկթաշը

Այստեղ խոսքն ալեվիներին կշտամբելու մասին չէ, որ նրանք այդպես են դարձրել այդ մարդուն և իր ուսմունքը: Այլ խոսքն այն մասին է, որ Բաբաների ապստամբությունից հետո մենք շատ քիչ բան գիտենք այդ մարդու մասին: Ըստ պատմիչների՝ նա ծնվել է 1208 կամ 1209 թվականին և մահացել է 1270 թվականին:[103] Հաջի Բեկթաշին ծագումով իրանական Խորասան նահանգի Նիսկապուր քաղաքից էր: Այն ժամանակ այս նահանգը Խորեզմյան թագավորության մաս էր կազմում՝ պարսկա-թուրքական արքայատոհմի, որը տապալեցին մոնղոլ զավթիչները 1231 թվականին: 1220 թվականի առաջին արշավանքներից սկսած թագավորության բազմաթիվ բնակիչներ փախան՝ մոնղոլներից առաջ անցնելով: Թուրքմենական ցեղերի հետ նրանք կազմեցին փախստականների այն ալիքը, որոնք գալիս էին սելջուկյան Անատոլիայից: Ալադդին Կեյկուբադ սուլթանը (1221-1237) 1231 թվականից աջակցում էր նրանց՝ հաստատվելու Անատոլիայում:[104]

Հաջի Բեկթաշը, ուրեմն, Անատոլիա պետք է եկած լինի մոտ 23-24 տարեկանում և Բաբաների ապստամբությանը մասնակցեր 31 կամ 32 տարեկանում՝ որպես զինվորական առաջնորդ:

Ուրեմն ի՞նչ էր տեղի ունենում երիտասարդի կյանքում

103 Abdulbaki Gölpinarli, *Manakib-i Haci Bektas-i Veli «Vilayet-nâme »*, 1958.

104 Claude Cahen, *Baba Ilyas, Hadji Bektas et quelques autres*, Turcica 1, 1969.

այս ութ տարիների ընթացքում:

Այս թեմայի շուրջ աշխատող թուրք և ֆրանսիացի պատմաբանների և գրողների մեծամասնության կարծիքով կասկած չի կարող լինել, որ Հաջի Բեկթաշը դերվիշ է եղել՝ նշանավոր ուսուցիչ թուրք սուֆի Ահմեդ Յեսեվիի աշակերտը: Որոշ մարդիկ էլ մինչև անգամ պնդում են, որ նա գնացել է Մեքքա՝ ուխտագնացության, որի համար էլ արժանացել է Հաջիի տիտղոսին (բառի այժմյան նշանակությամբ):

Նրանցից մեծ մասը հիմնվում է սուրբ, այլ կերպ ասած, Վիլայեթ-Նամէ-ի Հաջի Բեկթաշ-ի Վելիի կյանքի պատմության վրա, անշուշտ, ալեվիների կողմից պատշաճ քննադատության չենթարկված պատմության վրա, որը պատմականորեն գրվել է 1481-1501թթ. միջև՝ նրա մահից առնվազն 200 տարի անց:

Այս տեքստը հրաշքների պատմություն է, որն իրականացրել է սուրբը և չունի ժամանակագրական ճշգրտություն: Այդ իսկ պատճառով գրքում ենթադրվում է, որ Հաջի Բեկթաշը Ահմեդ Յեսեվիի անմիջական աշակերտն է եղել, այն դեպքում, երբ վերջինս մահացել է նրա ծնվելուց ավելի քան 40 տարի առաջ՝ 1116 թվականին: Հիշենք, որ այս հատվածում Ահմեդ Յեսեվիի սուֆիական միաբանությունը՝ Եզեվիությունը, հանեֆիտյան սուննիական ծիսակարգ է և ներդաշնակ չէ այն պատկերի հետ, որ Էֆլակին վերագրում է Հաջի Բեկթաշին. «*Աստծո սիրահար և գիտելիքով օժտված մի մարդ, որը չի հարմարվում իսլամի պատգամներին*»:[105]

Վիլայեթ-նամէ-ի Հաջի Բեկթաշ-ի Վելին մեկնաբանվում է նաև այսպես, որ Սուրբը ստացել է ուխտավորի իր տիտղոսը Մեքքայում... երազներում:

Հաջի Բեկթաշի անունը հանելուկ է, քանզի նա ալեվիների կողմից կոչվել է «Հյունկար Հաջի Բեկթաշ

105 Irène Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, op.cit.

Վելի», որ նշանակում է «Սուլթան Բեկթաշ, Սուրբ, ով կատարել է իր ուխտագնացությունը»: Այսպիսով, նա համատեղում է թուրքական ազնվականության տիտղոսը (Հյունկար/Սուլթան), մուսուլմանական տիտղոսը (Հաջի/ուխտագնացություն կատարած) և սրբազանության տիտղոսը (Վելի/Սուրբ):

Ամենահին փաստաթղթերում, որոնց մեջ նա հայտնվում է *Հաջի Բեկթաշ-ի-Խորասանի* անվամբ, նա հիշատակում է իր հայրենի երկիրը՝ Խորասանը:

Մեր կարծիքով Հաջին պետք է հասկացվի Հաջ իր հին իմաստով, որը ժամանակակից թուրքերենով Հոկա (խելացի, էրուդիտ) է թարգմանվում, և ոչ թե ուխտագնաց մուսուլման: Սրանից կբխեր «Խորասանի Էրուդիտ Բեկթաշ» և որը, իմ կարծիքով, ավելի շատ է համապատասխանում պատմական տեքստերում նկարագրված անձնավորությանը:

Իրականում, ինչ նշանակություն ուրեմն կարող էր ունենալ Մեքքայի ուխտագնացությունը նրա համար, ով գրում է. «*Այն, ինչ փնտրում ես դու, փնտրիր քո մեջ, այն ո՛չ Մեքքայում է, ո՛չ Երուսաղեմում, ո՛չ ուխտագնացության մեջ*» (*ne ararsan kendinde ara, Mekke'de, Küdüs'te Hac'da degildir*)?

Վերջերս մի ալեվի բարեկամ ինձ վստահեցրեց, որ Անատոլիայի որոշ շրջաններում «հաջի» բառը օգտագործում են "*müsahip*" իմաստով:

Ահա թե ինչն է շատ հետաքրքիր, եթե այն տեղեկացնում է Հաջի Բեկթաշի կյանքի շարունակության մասին, այնպես, ինչպես պատմաբան Աշըկփաշազադեն՝ իր *Թեվարիհ-ի Ալ-ի Օսման* գրքում:[106] Հաջի Բեկթաշը ընտրում է մի թուրքմենուհու՝ Խաթուն Անա անունով, որպես իրեն փոխարինող և նրան բացահայտում է իր հրաշքների կարողություններն ու իր թաքնված գիտությունը: Այդ կինը

106 Thierry Zarcone, *Poètesses soufies de la confrerie bektachie*, op. cit.

հոգևոր առաջնորդն էր (*Baciyan-I-Rum- Բաջիյան-ի-Ռում*) *Ռումի Քույրերի*՝ չորս կրոնական միաբանություններից մեկի, որոնք իշխում էին այն ժամանակ Անատոլիայում: Մյուս երեք միաբանություններն են՝ (*Gaziyan-i-Rum- Գազիյան-ի-Ռում*) – *Ռազմիկները*, (*Abdalan-i-Rum- Աբդալան-ի-Ռում*) *Ճգնավոր դերվիշներ* և (*Abiyan-i-Rum – Աբիյան-ի-Ռում*) *Արհեստավորներն ու Վաճառականները:* Խաթուն Անայի աշակերտը՝ Աբդալ Մուզան, և հենց սրանք են, ովքեր շարունակում են Հաջի Բեկթաշի ուսմունքը նրա մահից հետո՝ կառուցելով նրա դամբարանը:

Թուրք պատմիչ Իսմետ Զեկի Էյյուբողլուն[107] բացատրում է, որ Բաբաների ապստամբությունից հետո Հաջի Բեկթաշը ներքաշված է եղել *Չեպնիների* թուրքմենական ցեղի մի կլանի մեջ, որի առաջնորդը Յունուս Մյուկրին էր, իսկ դուստրը՝ մի Բաջի, որը Բաբայի իգական համարժեքն էր Սոյուջա Կառահոյուկում (այսօր քաղաք է Նեվշեհիրի և Կիրշեհիրի միջև, որը կրում է Հաջի Բեկթաշի անունը), որտեղ նա բնակություն է հաստատում մինչև իր կյանքի վերջը: Խաթուն Անան հետագայում այստեղ կառուցել է դամբարան, այնուհետև նաև՝ վանք: Խաթուն Անայի աշակերտներից էր Աբդալ Մուզան:

Այս վանքի և շրջապատի մշակված դաշտերի գոյությունը հաստատվում է 1295-1297 թվականների փաստաթղթերի միջոցով:[108]

Ուրեմն, Հաջի Բեկթաշը ներքաշված է եղել թուրքմենական մի ցեղի մեջ և դարձել է Յունուս Մյուկրիի "musahip-մյուսահիփ": Հիշեցնենք, որ երկու "musahip"-ների միջև ամուսնություն չէր կարող լինել երեխաների հետ, մի բան, որ բանական բացատրություն է տալիս Հաջի Բեկթաշի և Խաթուն Անայի հարաբերություններին, որոնք ոչ մի կապ չունեն ցանկասիրության հետ:

107 Ismet Zeki Eyuboglu, Haci Bektas Veli, Ozgur Yayinlari, 1998.

108 Irène Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, op.cit.

Վիլայեթ-նամէ-ի Հաջի Բեկթաշ-ի Վելին Խաթուն Անային անվանում է "*Kadincik Ana*" (Կադինջիկ Անա), որն այս կապակցությամբ ծագել է մի անհեթեթ առասպելից: Ահա թե ինչ է գրված.

«Կադինջիկը սովորություն ուներ խմել Բեկթաշի լվացումների ջուրը կամ պարզապես այն ջուրը, որի մեջ նա լվանում էր իր ձեռքերը: Մի օր, երբ լվացումներ էր անում, Բեկթաշի քթից արյուն հոսեց: Նա ասաց Կադինջիկին.

– «Տա՛ր այս ջուրը և թափի՛ր այնտեղ, ուր ոչ ոք երբեք ոտք չի դնի»:

Կադինջիկը տաշտը տարավ և ինքն իրեն ասաց. «Մինչև հիմա ես այս ջուրը խմել եմ, որը լավ էլ մաքուր է: Ինչո±ւ հիմա թափեմ: Ավելի լավ է այն խմեմ առանց զզվելու»:

Նա խմեց այդ ջուրը և տաշտը ետ բերեց Բեկթաշին: Բեկթաշը ուշադիր նայեց նրան, քանի որ լավ գիտեր նրա սովորությունը:

– Դու խմեցիր նաև այս վերջի±նը, – հարցրեց նա:

– Տիրոջից ոչինչ չես կարող թաքցնել, – պատասխանեց կինը: – Ես ուրիշ տեղ չգտա, բացի իմ որովայնից, ուր կարող էի թափել ձեր շնորհի մնացորդը:

– Օ՜, Կադինջիկ, – այնժամ ասաց Բեկթաշը, – դու կստանաս այն, ինչ սպասում էիր մեզանից: Մենք քեզանից կունենանք երկու որդի, որ կկրեն մեր անունը: Նրանք կլինեն իմ արյան որդիները, և ծերունիները կշտապեն գրկել նրանց, հենց որ դառնան յոթ տարեկան»:[109]

Այս առասպելի հիմքով բեշիկթաշյան միաբանությունը բաժանվեց երկու ճյուղի.

- Ջելեբիների ճյուղը, որը համարվում է Խաթուն/Կադինջիկ Անայի և Հաջի Բեկթաշի երեխաների սերունդները.

109 Kudsi Erguner, *Villayet Name, le livre des derviches bektashi*, op.cit.

- Բաբագանների ճյուղը, որը համարում է, որ Հաջի Բեկթաշը ունեցել է ոչ թե մարմնական սերունդ, այլ միայն հոգևոր:

Մի *սոհբեթ* Հաջի Բեկթաշի հետ...

Մի պահ պատկերացնենք, որ մի երեկո կրակի շուրջը հավաքվել ենք՝ սոհբեթի[110]: Ահա, անկասկած, թե ինչ կարող էր ասել նա իր մասին.

«Իմ անունը Բեկթաշ է, ես գալիս եմ Պարսկաստանի հեռավոր մի շրջանից, որի անունն է Խորասան, և որտեղ բազմաթիվ իմաստուն մարդիկ կան:

Երկար ժամանակ այս երկիրը եղել է ժողովուրդների և հավատալիքների մի խաչմերուկ, և ես շատ բան սովորեցի՝ այստեղ մարդկանց հետ առնչվելիս: Հենց դրա համար էլ ես ասում եմ ձեզ՝ ոչ մի ժողովուրդ չպետք է արժանանա նախատինքի և համարվի անհավատ:

Ես ստիպված եղա լքել իմ ծննդավայրը, քանզի այնտեղ պատերազմ էր՝ Արևելյան Ասիայից եկած ռազմիկ զորավարների մեղքով: Ես երբեք չեմ մոռանում, որ թշնամին նույնպես մարդ է, ինչպես չեմ մեղադրում մոնղոլ ժողովրդին, նա նույնպես իրավունք ունի արոտավայրեր գտնել իր հոտերի համար, հողը պետք է կերակրի բոլորին, քանզի այն Աստծո պարգևն է Ադամի բոլոր սերունդների համար:

Ես իմ եղբոր՝ Մենթեշի և բազում փախստականների հետ բռնեցի Անատոլիայի ճամփան: Գաղթի ճանապարհին մենք միացանք թուրքմենական քոչվոր ցեղերին: Նրանց հետ նայեցինք արևին և լուսնին, խմեցինք և պարեցինք նրանց հետ, նրանց կանանց, նրանց երեխաների հետ:

110 Սոհբեթը թուրքական մշակույթում ընկերական բանավեճ է:

Երաժշտության հնչյունների ներքո մենք ականջալուր եղանք նրանց իմաստունի խոսքերին, ով մեզ բացատրեց, որ միակ կրոնը մարդկային սերն է մարդու նկատմամբ, և որ մարդու դեմքի վրա կարելի է տեսնել Աստծո գեղեցկությունը:

Երբ մենք վերջապես հասանք Անատոլիա, մնացինք իմաստունի մոտ, քանզի նա շատ բան ուներ մեզ սովորեցնելու: Բայց նա մեզ խորհուրդ տվեց ինքնուրույն գնալ գիտության հետքերով, քանզի մարդկության մեջ է, որ գտնում են ճանապարհը, և ոչ թե Մեքքայում, Երուսաղեմում կամ ուխտագնացության մեջ:

Երկար տարիներ մենք հերկեցինք այդ նոր հողը և այնտեղ հանդիպեցինք շատ տարբեր հավատքի տեր մարդկանց: Նրանց հետ շփվելով՝ մենք շատ բան սովորեցինք:

Հետո մի օր սուլթանը, որ ղեկավարում էր երկիրը, որտեղ մենք ապաստան էինք գտել, որոշեց, որ մեր թուրքմեն բարեկամները շատ-շատ են, և որ նրանք պետք է հնազանդվեն իր օրենքներին և կրոնին, որը դպրոցներում դասավանդում էին իրենց համար անհասկանալի լեզվով:

Իմաստունը, որ մեզ այնքան բան էր սովորեցրել, որոշեց իր ժողովրդին ապստամբության կոչ անել: Մյուս թուրքմեն իմաստուններն էլ հետևեցին նրան, և ժողովուրդը ոտքի ելավ արդարության մեծ բանակով: Իսկ Սուլթանը նրան ջախջախելու համար անարդարության բանակ հանեց:

Այդ ժամանակ մենք եղբորս հետ գնացինք նրան մեր օգնությունը առաջարկելու, և նա ընդունեց այն: Իմաստունը տեսավ, որ իրենից հեռանալուց հետո մենք շատ բան էինք սովորել, և այդ ժամանակ նա մեզ անվանեց Հոջա (Hoca) և իր ռազմական խորհրդում մեզ հրամանատար նշանակեց: Այնուհետև նա մեզ վրա մեծ պարտականություն դրեց. այն է՝ վերադառնալ թուրքմենական մյուս ցեղերի մոտ և նրանց կոչ անել միանալ ապստամբությանը:

Երբ Սուլթանը պաշարեց նրա բանակը Ամասիայի

իր ամրոցում, և երբ մեկ այլ իմաստուն ցանկացավ նրան օգնության հասնել, իմ եղբայրը նույնպես մեկնեց մասնակցելու այդ ճակատամարտին և զոհվեց Սիվասում: Նրանից հետո իմաստունը՝ մեր բարեկամն էլ զոհվեց:

Իսկ ես պայքարեցի մինչև վերջ՝ մեկ ուրիշ իմաստունի հրամանատարության տակ, մինչև այդ անիծյալ Մալիայի դաշտավայրը, որտեղ Սուլթանը մեզ պարտության մատնեց: Այդ ժամանակ հատուկենտ ողջ մնացածներն ինձ խնդրեցին գնալ և ուսուցանել ճանապարհը, որպեսզի այդ բազում զոհվածների մահն ապարդյուն չանցնի:

Ես ճամփա ընկա դեպի արևմուտք, քանզի այն ժամանակ ասում էին, որ այնտեղ ուրիշ իմաստուններ էլ կան, ովքեր գիտեն Գիտելիքի այլ գաղտնիքներ:

Մի օր ես հանդիպեցի մի շատ իմաստուն կնոջ, և մենք որոշեցինք փոխանակել մեր գիտելիքները: Նրա հայրը թուրքմենական ցեղի առաջնորդ էր, նա նույնպես շատ իմաստուն էր: Նա ինձ առաջարկեց մնալ իրենց հետ, և իբրև նշան իմ հանդեպ ունեցած նվիրվածության, նա ինձ ընտրեց որպես եղբայր անդինից՝ մեջքովս գոտի անցկացնելով:

Ես ասում եմ ձեզ, որ այդ կինը շատ իմաստուն է, և եթե մի ժողովուրդ չի կրթում իր կանանց, դատապարտված է կորստյան: Նա իմ ընկերուհին է, և ահա, տեսեք, թե ինչպես է նստած կրակի շուրջը, և այս կինը նույնպես շատ բան ունի ձեզ ասելու»:

Ահա, անշուշտ, ինչ կպատմեր Բեկթաշը մեզ, եթե կարողանայինք այդպիսի պահ անցկացնել նրա հետ:

Ո՞րն է մարդկային այդ իմաստությունը, որ այնքան հաճախ պատկերված է առյուծով ու եղջերուով շրջապատված:

Հաջի Բեկթաշին ի՞նչ ուսմունքներ է հաջողվում հաշտեցնել:

9.

Հաջի Բեկթաշը և բեկթաշիզմը

Իր կենդանության օրոք Հաջի Բեկթաշը երբեք սուֆիստական միաբանություն չի հիմնել, ոչ էլ փիլիսոփայական դպրոց: Շատ ավելի ուշ՝ 16-րդ դարում էր, որ ծագումով քրիստոնյա դերվիշ Բալիմ Սուլթանի կողմից (1457-1517) և Օսմանյան կայսրության կանոնակարգի հիման վրա կազմավորվեց բեկթաշիական կանոնակարգը:

Բեկթաշիական տեսությունները հիմնվում են որոշակի թվով գրությունների վրա, որոնք վերագրվում են Հաջի Բեկթաշին, բայց պատմիչները կասկածի տակ են դնում նրա՝ հեղինակը լինելու հավանականությունը: Իրականում այս տեքստերը գրվել են իմաստունի մահից շատ ավելի ուշ և իրենց վրա են կրում 14-15-րդ դարերում ի հայտ եկած սուֆիստական տեսությունների ազդեցությունը:

Սա առանձնահատուկ Մակալաթ-Գայբիյեի և Քելիմաթ Գայբիյեյի դեպքն է՝ երկու աշխատություն, որոնք համադրում են 4 դռների և 40 շեմերի տեսությունը, որը բեկթաշիզմի հիմքն է:

Այսպես, Մակալաթը արաբերենից թուրքերեն թարգմանվել է 1409 թվականին ոմն Հաթիպողլուի կողմից, բայց արաբական տարբերակը երբևէ չի գտնվել, և պատմաբան Ահմետ Յաշար Օջակը պարզապես կարծում է, որ այն երբեք գոյություն չի էլ ունեցել: Ավելին, հայտնի է, որ Հաջի Բեկթաշի լեզուն թուրքերենն էր և ոչ թե արաբերենը: Վերջապես, ինչպես ասում է Իրեն Մելիքովը. «*Վերլուծելով Մակալաթները՝ երևան են գալիս որոշակի թվով կետեր, որոնք հակադրության մեջ են մտնում այն ամենի հետ, ինչ մենք գիտենք Հաջի Բեկթաշի մասին.*

1) Մակալաթները խոսում են Տարիկաթների մասին, մինչդեռ մենք գիտենք, որ Հաջի Բեկթաշը չի հիմնել Տարիկաթը

2) Մակալաթները խոսում են Ուխտագնացության անհրաժեշտության մասին, մինչդեռ Հաջի Բեկթաշը երբեք Ուխտագնացություն չի կատարել: Նա երազում է դարձել «հաջի»

3) Մակալաթները խոսում են ամուսնության անհրաժեշտության մասին, մինչդեռ Հաջի Բեկթաշը «մյուքերեդ» (ամուրի) դերվիշ էր: Այս տարբեր կետերը գալիս են լրացնելու Մակալաթների հավաստիությունը կասկածի տակ առնելու մեր պատճառները»:[111]

Հաջի Բեկթաշի «խորհուրդները» (նասիհաթլար)

Իրենք՝ ալեվիները, վիթխարի կարևորություն են տալիս Հաջի Բեկթաշի «խորհուրդներին» (*Haci Bektaş'ın Nasihatlari yaıı Haci Bektaş sözleri*): Սրանք այն միակ գրվածքներն են, որոնց վերաբերյալ վստահ ենք, որ նրան են պատկանում, նույնիսկ եթե իր դարաշրջանի դերվիշների օրինակով նրանք սկզբում միայն բանավոր են փոխանցվել: Ահա մի շարք, որն ամբողջական չէ.

"*Ara, bul. Her ne arar isen, kendinde ara. Hararet nârda'dir, sac'da değildir, Kerâmet sendedir, tâc'da değildir. Her ne arar isen, kendinde ara, Kudüs'te, Mekke'de, Hâc'da değildir* ".

«*Փնտրի՛ր, գտի՛ր: Ինչ էլ որ փնտրում ես, քո մեջ փնտրիր այն: Եռանդը երկաթի մեջ է, ոչ թե թիթեղի, իմաստությունը քո մեջ է, ոչ թե թագիդ: Ինչ էլ որ փնտրում ես, քո մեջ փնտրիր, այն ո՛չ Երուսաղեմում է, ո՛չ Մեքքայում, ո՛չ էլ Ուղտագնացության մեջ*»:

111 Irène Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, op.cit.

"Yolumuz, ilim, irfân ve insanlık sevgisi üzerini kurulmuştur. Aşk meydanı, erenlerin ve bilenlerindir. Hakk'a erişebilmek için, büyüklere ve doğrulara yaklaşın. Hakki' görmek istersen özünü gör. Her şey sensin varlığından haberdar ol."

«Մեր ճանապարհը հիմնված է մարդկային սիրո, գիտելիքի և ճանաչողության վրա: Սիրո աշխարհը պատկանում է նրանց, ովքեր գիտեն և իրազեկ են: Ճշմարտությանը հասնել կարողանալու համար մոտեցի՛ր մեծերին և արդարներին: Եթե ուզում ես տեսնել ճշմարտությունը, տե՛ս քո սեփական էությունը: Տեղյակ եղի՛ր քո սեփական բնույթից, քանզի դու ամեն ինչ ես»:

"Murada ermek sabır iledir. Araştırma açik bir sınavdır. Ilimden gidilmeyen yolun sonu karanlıktır. Düşünce karanlığına ışık tutanlara ne mutlu. Arif ol, nasibate kulak ver. Kendi ilminden söz etme. Bilgili ol, sır saklamasını bil."

« Ձեռք են բերում այն, ինչ համբերատար ցանկանում են: Որոնումը մեծ փորձություն է: Գիտելիքի ճանապարհով չընթանալու դեպքում՝ վերջում բախվում են միայն խավարին: Թո՛ղ որ երջանիկ լինեն նրանք, ովքեր մտքի խավարի մեջ լույս են կրում: Իմաստուն եղի՛ր, ականջդ խորհուրդին դարձրո՛ւ: Քո գիտելիքով մի՛ պարծենա: Կրթված եղի՛ր և իմացի՛ր գաղտնիք պահել»:

"Hiç bir milleti ve insanı ayıplamayınız. Düşmanınızın dahi insan olduğunu unutmayınız. Sözü düşünde söyle. Ayıbı görür isen ört. Doğru ol, musibete sabret. Incinsen de incitme. "

« Մի՛ նախատեք որևէ ժողովրդի, ոչ էլ որևէ մարդկային արարածի: Մի՛ մոռացեք, որ ձեր թշնամիներն էլ են մարդ: Մի բառ ասելուց առաջ մտածի՛ր: Եթե որևէ թերություն ես տեսնում, ների՛ր այն: Արդար, համբերատար եղիր դժբախտության մեջ: Չարիք մի՛ գործիր, եթե դու ինքդ չարիքի մեջ ես»:

"Kadinları okutunuz. Aklına, hissine, bedenine, iradene hakim ol. Eline, diline, beline sahip ol. Dünya için gönlünü mahsun etme. Dünyalik için mevki sahibi kimselere yüzsuyu dökme. Hilaf söyleme, şahit olma."

«Կրթե՛ք կանանց: Եղի՛ր բանականությանդ, մտքերիդ, մարմնիդ և կամքիդ տերը: Ղեկավարի՛ր ձեռքերդ, լեզուդ և երիկամներդ: Սիրտդ մի՛ վաճառիր հանուն փողի: Մի՛ ստորացիր նրանց առաջ, ովքեր հանուն փողի ընտրություն են կատարում: Անպարկեշտ բաներ մի՛ ասա, դրանց վկան մի՛ եղիր»:

"Bütün taşlara mücevher denmez. Önceden düşmanlık yapmış kişi ile dost olma. Düşmanına yüz verme. Bilmediğin kişiye yar olma. Aşk muhabetten doğar. Kimsenin uğradığı kötü duruma gülme."

«Բոլոր քարերը թանկարժեք չեն: Մի՛ եղիր ընկեր նրան, ով նախկինում թշնամանք է ցուցաբերել քո նկատմամբ: Թշնամուդ խոսք մի՛ ուղղիր: Մի՛ օգնիր նրան, ում իսկապես չես ճանաչում: Սերն ընկերությունից է ծնվում: Մի՛ ծաղրիր որևէ մեկին, ով անցնում է դժվարությունների միջով»:

"Az söyle, münim ol, kavgali yerden kaç. Nebiler,veliler, insanlığa Tanrı'nın hediyesidr. O sultanın sırrını sakla. Aşik o ki özü Muhammed, huyu Ali gibi ola. Sen meleklerin secde ettiğisin. Sen cümle eşyanın aynasısın. "

«Քի՛չ խոսիր, եղի՛ր հավատացյալ, փախի՛ր այնտեղից, որտեղ պայքարը թեժ է: Մարգարեները և Սրբերը Աստծո պարգևն են մարդկանց համար: Պահի՛ր քո տիրոջ գաղտնիքը: Սիրահար եղի՛ր, եղի՛ր նա, ով դառնում է Մուհամմեդի էությունը և Ալիի բնույթը: Դու հրեշտակների գետնատարած երկրպագության արդյունքն ես: Դու ամբողջ արարչագործության հայելին ես»:

"Ibadete ve malına güvenme. Her bulunduğun hale şükür eyle. Elinden gelirse tek başına nimet yeme. Insanın cemali sözünün güzelliğidir. Bizi sevenlerin gönüllerinde biz oturur, dillerinde de biz konuşuruz. çalışmadan geçinenler, bizden değildir. çalışan insan kötülük düşünmez."

«Մի՛ հավատա կուռքերին և ունեցվածքի տիրապետությանը: Շնորհակալ եղի՛ր քեզ հանդիպած յուրաքանչյուր իրավիճակի համար: Միայնակ մի՛ օգտվիր բարիքներից, եթե դրա հնարավորությունն ունես: Գեղեցիկ դեմքով մարդու խոսքը գեղեցիկ է: Նրանք ովքեր մեզ սիրում են իրենց սրտում, մենք նրանց հետ ենք նստում, մենք խոսում ենք նաև նրանց լեզվով: Մեր մեջ տեղ չկա նրանց համար, ովքեր փախչում են աշխատանքից: Աշխատող մարդը վատ բանի մասին չի մտածում»:

" Dâimâ iyiyi, güzeli, doğruyu öğrenebilmek için okuyunuz, okutunuz. Dili. dini, rengi ne olursa olsun iyiler iyidir. Doğruluk dost kapısıdır. Elden gelen her iyiliği herkese yapınız. Kanâatkâr olanlar, en büyük zenginliğe sahiptir. Sevgi ve acıma, insanlık; hiddet ve şehvet ise hayvanlık vasfidır."

«Որպեսզի կարողանաս ճանաչել, թե որն է լավը, գեղեցիկը և արդարը, պետք է սովորել և սովորեցնել: Կարևոր չէ լեզուն, կրոնը կամ գույնը. նրանք ովքեր լավն են՝ լավն են: Ուղղամտությունը բացում է բարեկամության դռները: Թո՛ղ որ բոլորն օգտվեն յուրաքանչյուր հնարավոր օգնությունից: Նրանք, ովքեր բավարարվում են քչով, ամենամեծ հարստության տերն են: Սերը և բարեգթությունը մարդկայնության շարքից են, բռնությունը և կտտանքը՝ անասնականության շարքից»:

Բեկթաշիզմի առաջին քայլերը

Հաջի Բեկթաշի մահից հետո Հաթուն Անայի գլխավոր հետնորդ Աբդալ Մուսան հանձն է առնում նրա ուսմունքը, նրա «խորհուրդները» Անատոլիայիով մեկ տարածել: Նա ճամփորդում է Սուլուջա Կարահոյուկից մինչև Բուրսա, Բերգամա և Դենիզլի: Ի վերջո նա հաստատվում է Անթալիայի մոտ՝ Էլմալիում, որտեղ հիմնում է միաբանության առաջին վանքը (*Tekke*): Հետնորդների մեջ կարող ենք գտնել Կայգուսուզ Աբդալը՝ մի դերվիշ բանաստեղծ, որը բեկթաշիզմը սերմանելու է Եգիպտոսում:

Այս վանքից սկսած՝ ուսմունքը, որը բեկթաշիզմը պետք է վերածի կրոնական միաբանության, ենթարկվելու է սուֆիզմի տարբեր հոսանքների ազդեցությանը, քանի որ այն ապաստան է հանդիսանալու նրանց համար, ովքեր դավանելու են սունիթական հոգևոր իշխանությունների կողմից դատապարտելի տեսությունները:

Աբդալ Մուսա Սուլթանի ո՛չ ծննդյան, ո՛չ էլ մահվան օրը հայտնի չէ: Պատմաբանները համամիտ են այն կարծիքին, որ նա ծնված կլինի Օսմանյան կայսրության ստեղծման ժամանակ (1299) և ապրած կլինի Բեյլիկաթների դարաշրջանում՝ սելջուկներից ժառանգած թագավորություններում, ինչը օսմանները մեկ առ մեկ նվաճեցին՝ իրենց տիրապետությունը հաստատելու համար:

Այն ժամանակաշրջանում, երբ առաջին բեկթաշիական վանքն է հիմվում Էլմալիում, նա գտնվում է Քարամանների Բեյլիկաթում (1250 - 1483): Աբդալ Մուսա Սուլթանը այնտեղ ներառում է կանոնակարգի անդամներ *Abdalan-i-Rum* (ճգնավոր դերվիշներ) և *Abiyan-i-Rum* (առևտրականներ և արհեստավորներ):

Ակհիները ազդեցություն են թողնում բեկթաշիական կանոնակարգի վրա, որը ծնվել է նրանց

հաղորդակցական ծեսերով և իմամ Ալիի նկատմամբ իրենց վկայակոչումներով: «Ժողովրդական սուֆիզմի կողմից աշխատող արհեստավորական միավորումները ստանում են խորհրդավոր-սոցիալական բնույթ՝ հիմված համերաշխության և անհավասարության դեմ պայքարի սկզբունքների վրա: Նրանք իրենց ծագումը վերագրում էին Ալիին. *lâ fetâ illa Ali՝ Ալիից բացի ուրիշ ազնիվ մարդ չկա:* Արհեստավորական հաղորդակցությունների հիմքում կար Սելման-ի-Ֆարսին, ով առաջինն էր մավլաներից՝ Մարգարեի ոչ արաբ ուղեկիցներից: Սա *Akhis*-ների շնորհիվ է, որ Սելման-ի-Ֆարսիի պաշտամունքը թափանցեց Բեկթաշիների մոտ»:[112]

Ակհիների հաղորդության արարողությունը դառնում է բեկթաշիների հաղորդությունը, այսինքն, հենց այն, որ նոր հաղորդվողը գլուխը ծածկել է սպիտակ ֆետրե գլխարկով, որ նրա իրանով անցկացրել են գոտի, որ նրան խմեցրել են հաղորդվողների հերթով խմած գավաթից և, վերջապես, որովհետև նրան հագցրել են տաբատ: Բեկթաշիները դրան ավելացրել են մի դրոշ, մի փայտե զենք և մի մոմ: Այս հաղորդման արարողությունը ծագել է մի ավանդույթից, որը պահանջում է, որ Մուհամեդը մի գոտի անցկացնի Ալիի իրանով, տասնյոթ ուղեկիցների աչքի առաջ, որպեսզի ցույց տա, որ ինքն իրոք նրա հետնորդն է: Հետո Ալին նույնն է անում տասնյոթ ուղեկիցների հետ (*Kemerbest*)՝ սկսելով Սելման-ի-Ֆարսիից:

Ալեվիններն այս խորհրդավոր արարողությունը վերարտադրում են իրենց համայնքի ժողովների ժամանակ, որ կոչում են *Ayn-i Cem - Այնի Ջեմ*. այն, ինչ իրենք կոչում են քառասուն հոգու խնջույք: Իր հայտնության ընթացքում (*Miraç-Միրաչ*), Մուհամմեդին Գաբրիել հրեշտակն (*Cebrail-Ջեբրայիլ*) ուղեկցում է քառասուն

112 Irène Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, op.cit.

հոգու մոտով, որոնք ղեկավարում են աշխարհը՝ ըստ ճշմարիտի կամքի: Նա թակում է դուռը և ներկայանում. «Ես մարգարեն եմ», քառասունը նրան պատասխանում է. «Դա միայն իր հավատարիմներին է հետաքրքիր»: Հետո Մուհամմեդն ասում է. «Աստծո կողմից ուղարկվածն եմ», որին պատասխանում են, թե՝ «մենք դրա կարիքը չունենք»: Մուհամմեդը պնդում է. «Ես աղքատների ծառան եմ», և այդ ժամանակ քառասունը նրա առջև բացում է դուռը: Նրանք երեսունինն են, նստած են, որոնցից միայն Ալին և Սելման-ի Ֆարսին են դրսում՝ զբաղված ողորմություն խնդրելով: Մուհամմեդը ցանկանում է ծանոթանալ նրանց հետ, և նրանք պատասխանում են. «Մեր ճանապարհն ու մեր սրտերը միևնույն ուղղությամբ են գնում, մենք մեկ ենք, և մեզանից մեկը՝ մենք բոլորս ենք»: Ալին ավելացնում է. «Եթե մեզանից մեկի արյունը հոսի՝ մենք բոլորս կարնահոսենք», և նա կտրում է իր դաստակը: Բոլորը սկսում են արնահոսել, այդ թվում և Սելման-ի Ֆարսին (Salman Farisi), որն իր որոնումից վերադառնում է միայն խաղողի մի հատիկով: Նա խնդրում է Մուհամմեդին այն բաժանել իրենց մեջ, քանզի նա աղքատների ծառան է, և վերջինս ճզմում է խաղողը, որի հյութը բոլորը խմում են և հարբում պարելով: Այդ ժամանակ է, որ Մուհամմեդը կորցնում է իր չալման, որը բաժանվում է քառասուն մասի, ինչը նրանք հավաքում են և անցկացնում իրենց հասակով մեկ: Ակհիների ազդեցությանը պետք է շուտով ավելացնել նաև սուֆիզմի հետնորդների ազդեցությունը, որոնք կազմավորվում են 14-րդ դարի վերջում Ադրբեջանում՝ սկսած Ֆազլուլահ դ'Աստրաբադի ուսմունքից, որը նաև Նաիմի է կոչվում (1339-1394): Նրա ուսմունքը թվերի և տառերի, բառ կազմող տառային միավորումների պաշտամունք է: Այս ուսմունքի համար տառերը Տիեզերքի սկզբունքով են, նույնիսկ նրանք, որ կարդացվում են մարդկային դեմքին: Նաիմին կարծում էր, որ մարդն աստվածային դրսևորում է: Նա ինքն իրեն կոչում

էր իմամ Ալիի և 6-րդ իմամի՝ Ջաֆեր Սադիկի ուսուցման ժառանգորդը, որին Ալին մի գաղտնի գիրք էր տվել, որը նրան թույլ էր տվել հասնել տառերի և թվերի գաղտնիքի ճանաչմանը, որից էլ գալիս է Ղուրանի իրական ուղերձը. *« Յուրաքանչյուր տառ կազմված է չորս տարրից՝ հող, օդ, ջուր և կրակ: Մարդը մի միկրոտիեզերք է, որն իր մեջ ընդգրկում է մակրոտիեզերքը: Հուրուֆիական ուսմունքի հիմքը մարդու աստվածայնացումն է: Արարչագործությունն իր կատարելությանն է հասել մարդու արարման մեջ: Աստծուն պետք է փնտրել ոչ այլ տեղ, քան մարդու մեջ: Աստվածային թագը մարդկային սիրտն է»:* [113]

Այս տեսություններն Անատոլիայում տարածվեցին Նեսիմիի (*Seyyid Nesimî*) (1369 - 1417) կողմից: Իր մարդասիրական բանաստեղծություններով նա փոխանցում է հուրուֆիզմի հաղորդագրությունը և մահապատժի կենթարկվի, ինչպես իրենից շատ առաջ եղել էր Մանսուր ալ-Հալլաջը (*Hallac-ı Mansur*) (858 - 922)՝ հայտարարելու համար. «Ես Ճշմարիտն եմ (Աստված)» (*Enel Hakk/Ben Hakkım*):

Ահա թե ինչ էր գրում Նեսիմին.

«Այն օրը, երբ մենք կբացենք մեր դեմքերը, ամեն ոք կիմանա, որ մեզանից բացի ուրիշ Աստված չկա: Ես երեսուներկու կերպարներն եմ, ես ո՛չ տեր եմ, ո՛չ էլ փոխարինող: Մարդ, ում դեմքը հավերժական Սուբստանցիայի արտացոլանքն է, իրականում դու Ալլահն ես՝ գթասիրտ և ողորմած»:

Իր մահից հետո մեծ թվով հետևորդներ ապաստան գտան բեկթաշիական վանքերում և այնտեղ ազդեցություն թողեցին հավատքի վրա:

Վերջապես, *Abdalan-i-Rum*- ները՝ ճգնավոր դերվիշները, գալիս են լրացնելու Բեկթաշիզմը Ահմետ Յեսեվիի ժառանգության աղբյուր սուֆիստական և ծագումով թուրք առաջին եղբայրաբանության տարրերով: Մասնավորապես, ճանաչողությանը հասնելու ճանապարհի տեսությունը, որը կոչվում է 4 դռների և 40 շեմերի տեսություն, նշանակալի փոխառություն է այս միաբանությունից, եթե անգամ Բեկթաշիները փոխակերպել են նրա բովանդակությունը:

113 Irène Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, op.cit.

Բեկթաշիզմի հաստատումը՝ որպես միաբանություն

Բեկթաշիական միաբանությունն ունի ալեվիների ծեսերին շատ մոտ մի ծես, և թերևս հենց այդ պատճառով է, որ ալեվիներին շարունակում են կոչել կրկնակի անվանարկումով՝ Ալեվի- Բեկթաշի: Այնուամենայնիվ, պետք է լավ հասկանալ, որ բեկթաշիզմը սուֆիական կրոնական կանոնակարգ է՝ իր վանքերով, իր հիերարխիայով, իր սկսնակներով և տերերով. այն, ինչը չունի ալեվիզմը:

Կրոնական կանոնակարգը իր լիակատար ձևով կազմավորվել է Բալիմ Սուլթանի (1457 - 1517) կողմից 1501 թվականին՝ Օսմանյան կայսրության հովանավորության ներքո: Այս դարաշրջանում արդեն գոյություն ունեին մեծ թվով բեկթաշիական վանքեր, որոնք ապաստան էին համարվում բոլոր այն մտավոր հոսանքների համար, որոնք հալածվում էին սուլթանների պաշտոնական կրոնի՝ սուննիական իսլամի կողմից: Յուրաքանչյուր վանք ուներ իր սեփական ուսուցումը, ամենաուժեղ ազդեցությունների գործառույթը: 16-րդ դարն Օսմանյան կայսրության համար իրենից ներկայացնում է Պարսկական կայսրության դեմ Սեֆեիդյան արքայատոհմի մղած պատերազմներով անհանգիստ դարաշրջան: Շահ Իսմայիլը, ով ղեկավարում է Պարսկաստանը, շիիթ է: Օսմանյան սուլթաններ

Բեյազիտ II-ը և Սելիմ I-ը սուննի են: Պարսկական կայսրությունը ապստամբության կոչ է անում բոլոր նրանց, ովքեր հալածվել էին սուլթանների կողմից՝ թուրքմենական ցեղերին և սուննիական իսլամի հակառակորդներին: Բեկթաշիական վանքերը, որոնք ապստամբների համար երկարաժամկետ ապաստան են, Օսմանյան կայսրության համար վտանգ են ներկայացնում: Ահա թե ինչու են սուլթանները որոշում կազմավորել կանոնակարգը, որպեսզի այն ավելի լավ ղեկավարեն: Այսպես, նրանք Բալիմ Սուլթանին՝ Դիմետոկայի վանքի (այժմ՝ Հունաստանում) պատասխանատուին նշանակում են կանոնակարգի ղեկավար: Նրա խնդիրն է շեղել սուննիական իսլամի հակառակորդներին շիիթական Պարսկաստանի մեջ ներգրավվելուց, և նրանց միավորել մեկ ընդհանուր միաբանության մեջ: Վերակազմավորված Բեկթաշիզմը դառնում է մի ճանապարհ (*Tarikat*), որը ձգտում է Ղուրանի (*Bâtin*) թաքնված իմաստի բացահայտմանը: Նրա հոգևոր տերը (*Mürşid*) Մուհամմեդն է, հոգևոր ուղեկցորդը՝ Ալին (*Rehber*) և նրա հիմնադիր իմաստունը՝ (*Pir*) Հաջի Բեկթաշը:

Կանոնակարգում 5 աստիճան կա. սկսնակ (*muhib*), դերվիշ, հայր (*baba*), մերկ (*müdjerret*) և խալիֆ (*halife*): Սկսնակը, ով ցանկանում է դառնալ դերվիշ, հայտարարում է իր ցանկության մասին և մտնում է մի թեքքե (վանք): Այդ թեքքեում նա ծառայություն է մատուցում դերվիշների շրջանում «*arakiyye*» կոչվող ժամանակահատվածում: Եթե նա ընդունակ է, հայտարարվում է նրա դերվիշ դառնալու մասին, նա մի *Ayn-i Cem* -ի կողմից օծվում է:

Խալիֆը կարող է դերվիշին թույլատրել *բաբա* դառնալ: Նա արդեն կարող է չալմա կրել: Միայն խալիֆները կարող են տալ այս տիտղոսը:

Մուջերեթը մի *բաբա* է կամ *դերվիշ* , ով ցանկանում է ամուրի մնալու երդում տալ: Նա այլևս երբեք չի կարող ամուսնանալ և ամբողջովին նվիրվում է միաբանությանը:

Վերջին աստիճանը խալիֆինն է: Սա բեկթաշիների ամենաբարձր աստիճանն է: Բաբան կարող է այս աստիճանին հասնել միայն այն դեպքում, եթե ընդունվել է երեք մյուջերեթների կողմից:

Ի տարբերություն այլ միաբանությունների, բեկթաշիները հրապարակայնորեն չեն երևում: Միայն հաղորդակիցները կարող են մասնակցել ծեսերին և արարողակարգերին. նրանք օգտագործում են թաքիյեն (ծեսերի գաղտնապահությունը): Համապատասխան 6-րդ իմամ Կաֆեր Սադդիկի *Բույրուկի* (կարգադրության), բեկթաշիները պետք է համապատասխանեն՝ 3 *Սյուններթներին* (ավանդույթներին).

1. Գալ դեպի Աստծո խոսքը, ուղղություն վերցնել դեպի հոգու միասնությանը
2. Դադարեցնել հոգում եղած բոլոր դաժանությունները, զսպել հիշաչարությունը և գոռոզությունը, հպարտությունը, նախանձ չառաջացնել, տուրք չտալ ցանկություններին, փառասիրություններին՝ հոգին սատանային չհանձնելու համար:
3. Եթե հաղորդակիցները հազար ու մի հոգի են, նրանք պետք է միասին նստեն և խոսեն մեկ ձայնով:

և 7 *ֆարզերին* (կարգադրություններին).

1. Հեռու մնալով սատանայից, անգիտակիցների կրոնից ապահովել կրոնը միաբանության ճանապարհով՝ թաքցնելով գաղտնիքները:
2. Կրել Աստծո հզոր աջը, այսինքն՝ սեփական նախաձեռնությամբ շրջվել դեպի ճշմարտությունը:
3. Հնազանդվել ճշմարիտի հավասարակշռությանը: Մեղքի դիմաց՝ հազարավոր ներումներ և աղերսանքներ: Չստե՛լ ու մաղթանքներ չանե՛լ ստահոդ վայրերում և

այնտեղ չգտնվել: Թո՛ղ որ աշխարհի օրենքը հաստատվի, իր տեղը գտնի մինչև անգամ ավազի վերջին հատիկը:

4. Խալիֆի համաձայնությամբ երդումով հրաժարվել աշխարհիկ կյանքից:

5. Ճշմարիտ աշխարհում ճշմարտությամբ պաշտպանել *Musahip*-ի իրավունքը:

6. Կրել Խալիֆի *թիկնոցը*, երդում տալ և ապաշխարել:

7. Ընդունել Խալիֆի *թագը*:

Բեկթաշիները պետք է նաև ընդունեն միաբանության 12 *Ilke*-ները (պայմանները).

1. Վախենալ *Հակկ-Ալլահից:* Սա նշանակում է, որ հաղորդակցվողի պարտականությունն է նախ խոսքերով և արդար ու ճիշտ արարքներով ճշմարտությունը պահել:

2. Ոչ ոքի չասել անարդար, ճշմարտությանը հակառակ խոսքեր: Ամբողջ *ժողովրդին* նայել նույն աչքով: Ամեն ինչի մեջ տեսնել սեփական էության փոքրությունը:

3. Ժողովրդին իր մեծությունն ու կարեկցանքը ցուցաբերել ամոթխածորեն և լավ վարքով: Իր հոգին և ուժը տալ ճանապարհին և սյուներին (*erkan*):

4 . Ոգեկոչել ազնիվ աղերսանքների, այսինքն՝ Ադամի մեջ տեսնել պատվելի մարդու:

5. Սահմանափակվել միայն համաձայնությամբ: Համբերատար լինել Աստծո համաձայնությունների և փորձությունների մեջ, Հակկին - Աստծուն չմերժելու համար... Ճշմարիտը սիրում է իր համբերատար ծառաներին:

6. Հրաժարվել աշխարհիկ նախաձեռնությունների կարևորությունից:

7. Բոլոր նախաձեռնություններում համբերատար գործել: Ճշմարիտն ամենագետ է:

8. Վախենալ ճշմարիտից և այսպիսով չկրել պատիժներ:

9. Լինել ամենից համաձայնողների մեջ: Բավարարվել քչով և դրանով ստանալ իր մեծությունը:

10. Չվշտանալ Ալլահից ելնող էությունից:

11. Մեկուսանալ և չձուլվել ժողովրդին:

12. Լինել արդարության և ճշմարտության վկայակոչը:

Աշխարհը քառասունի հոգու ժողովի բարեհաճության տակ է (*Kirklar Meclisi*): Այս քառասունը հասել են *Insan-i Kamil*-ի (կատարյալ մարդկանց) փուլին՝ հոգով միավորված մեկը մյուսին: Նրանք առաջինն են, ովքեր ընդունել են Մուհամմեդին արված բացահայտումը և համապատասխանել դրան: Երբ նրանցից մեկը մահանում է, նա փոխարինվում է երկրում ապրող երեք հարյուր անբիծ հոգիներից մեկով: «Աստված Երկրի վրա ունի երեք հարյուր հոգի, որոնց սիրտը համապատասխան է Ադամին, քառասուն հոգի, որոնց սիրտը համապատասխան է Մովսեսի (*Musa*) սրտին, յոթ հոգի, որոնց սիրտը համապատասխան է Աբրահամի (*Ibrahim*) սրտին, հինգ հոգի, որոնց սիրտը համապատասխան է Գաբրիելի (*Cebrail*) սրտին, երեք հոգի, որոնց սիրտը համապատասխան է Միքայելի (*Mikâil*) սրտին, մի հոգի, որի սիրտը համապատասխան է Սերաֆիելի (*Israfil*) սրտին»:

Նրանց մեջ կան հինգը (Մուհամմեդը, Ֆատման, Ալին, Հասանը և Հյուսեյինը), յոթը (Մուհամմեդը, Ալին, Հատիսը, Հասանը, Ֆատման և Սալման Ֆարիսին) և տասնյոթ հավատարիմ գոտիավորները (*Kemerbest Hanedanı*)՝ սրտով և հոգով Մուհամմեդ մարգարեի սուրբ ընտանիքին (*EhliBeyt*) կապված ուղեկիցները:

Բեկթաշիները ենթադրում են, որ երեքը (Աստված/ճշմարիտը, Մուհամմեդը և Ալին) ծագում են բացահայտումի և Ղուրանի թաքնված իմաստից: Այս գաղտնիքը կա 17 սաղմոսներում (*âyât*), որոնք ներկայացնում են 17 ակնհայտությունները և կարող են ամփոփվել հետևյալ 5

մեծ սկզբունքներով.

1. Եզակիություն – հավատք առ Աստծո գոյությունը, եզակիությունը և հավիտենականությունը:

2. Արդարություն – Աստված արդար է և անաչառ: Նա աստվածային օրենքների պաշտպանն է, կառավարիչը, կատարողը: Բարին և չարը Աստծուց չեն բխում: Աստված ստեղծել է մարդուն՝ Ադամին, իր սեփական գիտակցությամբ և նրան որպես խալիֆ ուղարկել երկիր:

3. Մարգարեություն – աստվածային օրենքները փոխանցվել են մարգարեին: Այն կարգադրությունները, որ փոխանցվել են մարգարեին, Աստծունն են:

4. Իմամություն և սրբություն – մարգարեից հետո իմամերն են շարունակում ուղերձը՝ մարգարեների աստվածային օրենքները՝ դրանք կիրառելով, վերահսկելով, պաշտպանելով աղավաղումից (հատկապես այն մարգարեների համար, ովքեր գրքեր չունեն): Հավատքը հիմնվում է տասներկու իմամների հավատքի վրա:

5. Հարություն – հավատք առ վերջին դատաստան և երկնային կյանք (*Akhirat*):

Որպեսզի ներթափանցեն ճանաչողության մեջ և մոտենան ճշմարիտին, բեկթաշիները պետք է բռնեն 4 դռների և 40 շեմերի ուղին:

1. Օրենքը (*Şeriat-Շերյաթ*) – հավատալ Աստծո եզակիությանը և աղոթել, պաշտպանել ճանաչողությունը և Գնոզը (*Irfan-Իրֆան*), աշխատանքի տերը լինել, օրինական եկամուտ ունենալ, ամուսնանալ և երեխա ունենալ, օրինական եկամուտով սեղան ունենալ, հետևել ընկերակցությանը, կոկիկ հագնվել և ուտել, կարեկից լինել և ներողամտություն ցուցաբերել, պաշտպանվել խորամանկությունից և ուղղվել դեպի ճշմարիտը:

2. Ճանապարհը (*Tarikat-Թյարիկյատ*) – երդում տալ

Պիռին՝ կյանքում ընթանալ «էրկանի» (*սյուն*) ճանապարհով և մեղքերը խոստովանել, հետևորդ դառնալով հավատարիմ մնալ երդմանը, հագնվել կոկիկ՝ մնալով ամոթխած և կիրթ (*adap-ադափ*), աշխատանքը խնամքով կատարել, ծառայել ճանապարհի մարդկանց, մնալ երկյուղի և հույսի դիրքում, զղջալ և ներում հայցել, դժվարություններ տեսնելիս՝ չընկղմվել տառապանքի մեջ, լինել բարեպաշտ, ընթանալ փրկության ճանապարհով, խորհուրդ հարցնել Գնոզի (*Irfan-Իրֆան*) հետևորդներից, ճանաչել ճշմարիտը, հոգալ կողակցի և նրա աշխատանքի մասին և զսպել իր ձեռքերը, լեզուն, երիկամները:

3. *Իմացությունը* (*Marifet-Մարիֆետ*) – ոչինչ չձեռնարկել հակառակ *adab-ադաբին* (քաղաքավարություն, համեստություն, ամոթխածություն), վախենալ Աստծուց այն ժամանակ, երբ «ես»-ը մղվում է վատ արարքների, լինել ժուժկալ, ծոմապահ՝ ցանկացած վատ արարքների հանդեպ, վեհանձնություն և զսպվածություն՝ բավարարվել ունեցածով, ամաչել վատ արարքների համար, մեծահոգություն՝ բաժանել սեփական ձեռքերով ստեղծած բարիքները, իմացության (*ilim-իլիմ*) և ուղղորդության (*irchad-իրշադ*) հետևողը լինել, մեծ սրտի տեր լինել, *Մարիֆետի* (*Marifet*) (*աստվածային ճանաչողության*) հետևողը լինել, ճանաչել սեփական էությունը և փոխանցել այն:

4. Ճշմարտությունը (*Hakikat- Հակիկատ*) – երկրից (*Turab-Թյուրաբ*) լինել, տեսնել իր էության թերությունները, չմերժել 72 ազգերը, երբեք չհրաժարվել բարիք գործելուց, շահել աշխարհի բոլոր արարածների վստահությունը, բարի գործեր կատարել, զրուցել Հակկի գաղտնիքների մասի և այսպես ազնվացնել սրտերը, ուխտագնացություն. շահել բարեկամի սիրտը, պահել բարեկամի գաղտնիքները, հոգևոր հաղորդման (*münajat-մյունայաթ*) միջոցով ներվել Աստծո կողմից, նրան փառաբանել իր նվիրած բոլոր

բարիքների համար, դիտարկումներ և մտորումներ Աստծո մասին:

5. Բեկթաշիները հավաքվում են մի սուրբ արարողության՝ *Ayn ül Cem*-ի համար, որպեսզի ընդունեն կանոնակարգին վերաբերող ցանկացած օգտակար որոշում և որպեզի Աստծո հետ կապի մեջ մտնեն Սեմապ (*Semah*) պարի ժամանակ, երբ նրանք մտնում են տրանսի մեջ: Այս արարողակարգը ղեկավարվում է տասներկու ծառայողների՝ (վկայակոչելով շիիթական ավանդույթի Տասներկու Իմամներին)՝ 12 *Post*-փոսթերին:

Յուրաքանչյուր ծառայություն տեղակայված է կանոնակարգը տարածողներից որևէ մեկի երկնային կամ ժամանակավոր հովանավորության տակ:

1. արարողակարգի տերը՝ *Baba-Բաբան*՝ ներշնչված Հաջի Բեկթաշով

2. խոհարարը կամ *–Aşçı-Աշչին*՝ ներշնչված Ալի Սուլթանով

3. հացթուխը կամ *Ekmekçi - Էկմեկչին* ՝ ներշնչված Բալիմ Սուլթանով

4. կառավարիչը կամ *Nakib- Նակիբը*՝ ներշնչված Կայգուսուզ Աբդալով

5. դռնապանը կամ *Atacı-Աթաջին*՝ ներշնչված Կամբեր Ալիով

6. փողոց ավլողը կամ *Meydancı-Մեյդանջին*՝ ներշնչված Սարի Իսմալով

7. գերեզմանապահը կամ *Türbedar-Թյուրբեդարը*՝ ներշնչված Կարադոնլու Կան Բաբայով

8. վանքի կառավարիչը կամ *Kilerci-Կիլերջին*՝ ներշնչված Շահկուլու Հասիմ Սուլթանով

9. սրճարանատերը կամ *Kahveci*-ն՝ ներշնչված Շազելի Սուլթանով

10. զոհաբերությունների սպասարկողը կամ *Kurbancı*-ն՝

ներշնչված Աբրահամ Մարգարեով(*Ibrahim*)

11. կոշկակարը կամ *Ayakçı*-ն՝ ներշնչված Աբդալ Մուսա Սուլթանով

12. հյուրանոցատերը կամ *Mihandar*-ը՝ ներշնչված Հիզիր Մարգարեով:

Ալեվիները փոխառել են այս արարողակարգը բեկթաշիզմից. (*Ayn-i Cem) Ին-ի-Ջեմը* նրանց համայնքային գրասենյակն է, որտեղ նրանք հավաքվում են միության կարիքների համար: Տասներկու ծառայություններն այստեղ կոչվում են 12 *Hizmetler*-Հիզմետլեր:

1. Դեդէ (իմաստունը), ով ղեկավարում է *Cem- Ջեմը* կամ *Mürşid -Մյուրշիդը* (Պիո)

2. Դեդէ, ով նրան օգնում է իր գործառույթներում կամ *Rehber -Ռեհբեռը*

3. երաժիշտը, ով սաղմոսներ է երգում և ինքն իրեն նվագակցում իր սազով կամ *Ozan-Օզանը*

4. տեղանքի մաքրողը կամ *Süpürgeci-Մյուփյուռգեջին*

5. մոմերով սպասարկողը կամ *çerağcı-Չերագջին*

6. մասնակիցների հագուստի լավ վիճակի երաշխավորողը կամ *Gözcü*-ն

7. դռնապանը կամ *Kapıcı-Կապիջին*

8. խոհարարը կամ *Sofracı-Սոֆրանջին*

9. մասնակիցներին տեղավորողը կամ *Meydancı-Մեյտանջին*

10. ջուր բաժանողը կամ *Sakacı- Սակաջին*

11. *Cem*-i կազմակերպիչը կամ *Peyikci- Փեյիկջին*

12. սրբազան պարի պատասխանատուն կամ *Semahci -Սեմահջին*

Բեկթաշիների կրոնական կանոնակարգը տարածվել է ամբողջ Անատոլիայով մեկ, ինչպես նաև Եվրոպայում՝ Բալկաններում, Բուլղարիայում, Հունաստանում և

հատկապես Ալբանիայում:

Բեկթաշիների կրոնական կանոնակարգը ներգործել է ալեվիզմի վրա իր հավատալիքների համակարգով, բայց դրանք չպետք է շփոթել իրար հետ: Բեկթաշիզմը կրոնական կանոնակարգ է՝ *tarikat-թարիկատ*, որտեղ սկսնակներն իրենց կյանքն են ընծայում *ճանապարհի* ուսմունքին: Այս տեսանկյունից այն իր մեջ չի ամփոփում ալեվիների համայնքի մշակույթի դիմացկունության հատկանիշը, որը կազմում է ալեվիզմի էությունը. այն վերջնականապես կոփվել է 16-րդ դարում՝ Սեֆևիդյան արքայատոհմի շիիթական Պարսկաստանի *Kızılbaş-Ղզլբաշների* (Կարմրագլուխներ) կողմակիցների ապստամբությամբ:

10.
Ալեվիզմի բանաստեղծները

13-րդ և 16-րդ դարերի ընթացքում Անատոլիայում տարածվեցին մարդասիրական ուսուցումներ՝ շնորհիվ երգող բանաստեղծների՝ *Ozan*-ների, որոնց բանաստեղծությունները մինչ այսօր էլ ալեվիական մշակույթի հիմքն են կազմում: Նվագակցվելով իրենց *kopuz* -ով կամ սազով, որն իրենք անվանում էին «երեք լարանի Ղուրան» (Üçtelli Kur'an), նրանք այս դիմացկուն մշակույթի խորհրդանշական կերպարներն են: Գյուղական և քոչվոր ժողովուրդները, որոնք մեծամասամբ գրաճանաչ չէին, այս բանաստեղծական ներբողների մեջ գտնում էին ավելի հասանելի հաղորդագրություն, քանի որ իրենց լեզվով էր:

Ալեվիզմը կիսաընտանեկան կապ է պահպանում այս երգիչների՝ սազ նվագողների հետ: Նրանք հարազատներ են, և՛ նրանց երգերը, և՛ բանաստեղծական քառատողերը մեծ նեցուկ են իրենց ընկերակցության համար: Նրանք նույնացվում են տեքստի հետ, այսպիսով նույնացվում են հեղինակի հետ՝ նրան ներգրավելով իրենց մտերիմների շրջապատը: Ի վերջո, նրանք իրենց մասն են կազմում: Երբ նա մահանում էր, դա կարծես նույն բանը լիներ, ինչ ընտանիքի անդամին կորցնելը: Բավական է միայն տեսնել այն ընդհանուր ցնցումը, որն առաջացրեց Ահմետ Կայայի[114] մահը, կամ ավելի վերջերս՝ Ղըրվըրջիկ Ալիի[115] մահը:

Մենք ձեռնամուխ ենք եղել ալեվիզմի խոշոր

114 Ահմետ Կայան (1956-2000) քուրդ ալեվիական երգիչ էր: Նա մահացել է աքսորի մեջ, Փարիզում և հանգչում է Պեր-Լաշեզ գերեզմանատանը:

115 Ղըրվըրջիկ Ալին (1968-2011) ալեվի երգիչ էր: Ջոհվել է Ստամբուլում՝ ողբերգական ավտովթարի հետևանքով:

բանաստեղծների տեքստերի ընտրությանը, որոնք ըստ մեզ արտացոլում են նրանց ուղերձների բազմազանությունն ու հարստությունը: Ժամանակակից ալեվի ժողովրդական երգիչների թիվը այդտեղից են թելադրվում կամ դրանք վերցվում են այնպիսին, ինչպիսին իրենց ալբոմներում են:

Յունուս Էմրե (1240 - 1321)

Օ՜, ընկերներ, լսեցեք ինձ.
Սերը նման է արևի,
Իսկ անսեր սիրտը
Նման է սև քարի:
Ի՞նչը կարող է շարժել քարե սիրտը:
Այն կրողը թունոտ լեզու ունի
Եվ նույնիսկ իր խոսքերն ամենամեղմ
Դաժան են պատերազմի պես:
Բոցաշունչ է սիրալեցուն սիրտը,
Եվ նրբանում է ինչպես մոմը:
Քարե սրտերը կարծես լինեն ձմեռ.
Մութ ձմեռ, սառցի պես կարծր ձմեռ :
Մեր Արքայի դռանը,
Մեր Տիրոջը ծառայելիս
Աստղերը սիրահարների
Պարեկներ լինեն ասես:
Յունո՛ւս, հրաժարվիր ամեն մտահոգությունից,
Աշխարհիս ամեն հոգսերից:
Մարդ պետք է նախ սիրով լցվել կարողանա,
Որից հետո միայն կարող է դերվիշ դառնալ:

Սիրահար, միայն սիրահար
Ուրիշ ո՛չ մի օրենք, ո՛չ մարգարե,
Աչքերս տեսան դեմքը բարեկամի՝
Ամեն մի ցավ խինդ է ինձ համար:

Լսեցե՛ք Յունուսին, լսեցե՛ք նրան,
Ով խելագարվում է:
Սրբերի իմաստությունների մեջ
Ես սուզվեցի, էլ ի՞նչ ավելի:
Ես խեղճ անճար Յունուսն եմ,
Ոտքից գլուխ վիրավոր:
Գնում եմ թափառիկ՝ հեռու երկրից բարեկամի,
Տե՛ս, թե ինձ քո սերը ինչ դարձրեց»:

Նրան, ով սեր չունի,
Ինչի՞ն են պետք կրոն ու հավատ:
Եթե դու սիրտ ես կոտրել, թեկուզ և մի անգամ,
Աղոթքդ քեզ չի օգնի:
Ոչ մի ծայրում աշխարհի
Չես կարող դեմքդ ու ձեռքերդ մաքրել դրանից:
Եթե դու մեռնող սիրտ ես մխիթարել,
Եթե օգնել ես նրան ոտքի կանգնել,
Եթե բարիք ես գործել և ոչ գեթ մի անգամ,
Հազարից մի անգամ, չի կորչի արարքդ բարի»:

Մենք չենք ատում ոչ ոքի,
Օտարն էլ է մեզ բարեկամ:
Որտեղ կա կարիք ու վիշտ,
Այնտեղ է տեղը մեր բնակության:
Աղքատություն է անունը մեր,
Ատելությունն է մեր թշնամին:
Մենք չենք ատում ոչ ոքի,
Բոլորն էլ հավասար են մեզ:
Դրախտն է հայրենքը մեր,
Աստված է ուղեկիցը մեր,
Դեպի նա ենք մենք գնում:
Նեղ են մյուս ճամփաները մեզ:
Ծոմի ու աղոթքի համար

Արբել եմ ես գինուց,
Համրիչն ու գորգն իմ
Սազս՝ էն վեց լարանի:
Մեղադրում ես ինձ չաղոթելու համար,
Ես աղոթում եմ իմ ձևով,
Աղոթեմ, թե չաղոթեմ
Աստված գիտի և ոչ թե դու:
Բացի Աստծուց ոչ ոք չգիտի
Ո՞վ մուսուլման է, և ո՞վ ոչ;
Կաղոթեմ ես՝ ինչպես ուզեմ,
Աստծո կամոք այն կընդունվի:

Կայգյուսուզ Աբդալ (1341 - 1444)

Դերվիշն իր զգեստով է հայտնի, ոչ իր սանրվածքով.
Ջերմությունը կրակի մեջ է, ոչ թիթեղի...
Եթե ուզում ես Աստծուն գտնել, մարդու մեջ փնտրիր.
Նա ո՞չ Երուսաղեմում է, ո՞չ Մեքքայում, ո՞չ ուխտագնացության մեջ:
Եղբորդ ցավ մի պատճառի՝ նրա սիրտը կոտրելով,
Աղոթքներդ ու ծնրադրումներդ քեզ ոչնչով չեն օգնի:
Մահանում է Կայգուսուզ Աբդալը՝ սիրտը լեցուն սիրով:
Եթե չես մեռնում սիրո հետ, ուրեմն ընդունակ չէիր դրան:

Տեսա, որ դու բարձրյալն ու իմաստունն ես, Աստված իմ,
Դու քո ամենագետ խոսքն ես հեգում բառ առ բառ,
Աստված իմ,
Իսկ եթե մարդն իր հորով է հայտնի,
Անհայր, անմայր լինելով, դու ապօրինի ծնունդ ես,
Աստված իմ:

Դու ալիքի պես նուրբ կամուրջ զցեցիր,
Մի կողմ անցնենք,
Թող որ ծառան քո անցնի,
Եթե դու քաջ ես, անցի՛ր, օ՜, Աստված:
Ես Կայգուսուզ Աբդալն եմ, օ,՜ Արարիչ,
Ե՛կ, խմի՛ր կաթիլն այս վերջին,
Հանի՛ր քողը երկնային կյանքի,
Ջրոսնենք միասին, օ,՜ Աստված:

Ասում են, թե Ադամը
Չունի ո՞չ ձեռք, ո՞չ ոտք, ո՞չ գլուխ,
Իրենց պատկերն Ադամի
Չունի ո՞չ դեմք, ո՞չ հոնքեր,
Ադամը հասունանում է, է՜հ, իմաստուն,
Մրգի պատկերով,
Եթե կամենում ես, եղբայր շինիր Ադամից,
Նա ո՞չ տեսիլք է, ո՞չ ուրվական:

Իմադեդին Նեսիմի (1369 - 1417)

Կշտամբանքի թիկնոց՝
Դա եմ ես կրում...
Ամոթի ու խայտառակության շիշը
Նետեցի ես ժայռի մեջ: Ո՞ւմ է դա վերաբերում:
Հայդար, Հայդար,
«Չի՛ կարելի», – ասացին բարեպաշտները,
Իմ սիրո գինով
Կլցնեմ ես թասը, կխմեմ,
Մեղքն իմն է: Ո՞ւմ է դա վերաբերում:
Հայդար, Հայդար,
Շուտով ես կբարձրանամ երկինք
Այնտեղից աշխարհը զննելու,
Շուտով էլ կիջնեմ երկրի վրա՝

Աշխարհն ինձ զննելու:
Հայդար, Հայդար,
Բարեպաշտները ծունկի եկան
Դեպի զոհասեղանը վանքի,
Իմ աղոթատեղին շեմն է սիրեցյալի,
Այնտեղ ես կծնրադրեմ: Ո՞ւմ է դա վերաբերում:
Հայդար, Հայդար,
Կորցնում եմ նրան, փնտրում եմ ես նրան,
Սիրեցյալն իմն է: Ո՞ւմ է դա վերաբերում:
Շուտով կգնամ ես պարտեզն իմ հոգու,
Վարդեր կքաղեմ ես այնտեղ: Ո՞ւմ է դա վերաբերում:
Հայդար, Հայդար,
Շուտով կրոնական դպրոց ես կգնամ,
Այնտեղ դասեր առնեմ ճշմարիտի համար,
Շուտով կգնամ ես գինետուն,
Այնտեղ մի թաս կխմեմ սիրո համար,
Հայդար, Հայդար,
Նեսիմին հարցրեցին.
– «Գո՞հ ես սիրեցյալիցդ»:
Գոհ լինեմ թե ոչ,
Սիրեցյալն իմն է, ո՞ւմ է դա վերաբերում:
Հայդար, Հայդար:

Բա՛ց աչքդ առ Աստված
Ճշմարտություն, եթե ուզում ես դեմքս տեսնել,
Աչքը, որ զննում է պորտը նրա,
Ինչպե՞ս կտեսնի աստվածային պատկերը նա:
Դու, որ տենչում ես ոսկի ու ադամանդ,
Գիտություն տենչա փոխարենը,
Գիտությունը մարդու
Արդյո՞ք ոսկյա և փայլուն չէ:
Օ՜, Մարդ, քո ուժը գիտելիքի մեջ է,
Անգիտությունը՝ ջինի ու դևի բաժին:

Ես, որ սկիզբն եմ և հավերժությունը,
Ես արարիչն ու արարչագործությունն եմ՝ տիե-զերքի խորքում,
Այս հրամանը արդյունքն է մեր ձայնի,
Մեր զրույցների
Ինչով ստեղծվել է այն ամենը, ինչ կա:
Կրակն ու ջուրը, հողն ու օդը,
Ինչո՞ւ են նրանք մարդ կոչվում:
Փառք նրան, ով միավորել է կրակն ու օդը երկրում,
Փառք այն արտիստին, ով իր պատկերն է կերտել ջրի վրա»:
Եթե կասկածը հավատը չէ,
Ինչպե՞ս կարողացավ առաջանալ նա:
Որ քո վարսերի ծալքերում
Ես հայտնաբերեցի լույսը հավատի:
Ես դա ասում եմ նրան, ով չգիտի
Քո խոպոպների և դեմքի առեղծվածը
Նրանք մեր կասկածի և հավատի սկիզբն են:

Ո՞ւր է իր խոստումների ընկերը հավատարիմ:
Ո՞ւր է սիրուհին, ում խոսքը ճիշտ է:
Մարդիկ վերածվել են կարիճների և օձերի:
Չարիքն է համակել աշխարհը:
Որտե՞ղ կգտնեմ ես մաքուր սրտով ընկեր:
Ո՞ւր են ապա խղճմտանքն ու արդարությունը:
Իմ մեջ են աշխարհները երկու
Ես չեմ դիմանում այս աշխարհում:

Ֆուզուլի (1504 - 1556)

«Օ՜, Աստված, տուր ինձ տառապանքները սիրո,
Մի՛ զրկիր ինձ երբեք տառապանքներից սիրո:
Մի՛ խնայիր ինձ բարեգործություններից

տառապյալների
Եվ խոստացիր ծանոթացնել նրանց բոլոր
տառապանքերին:
Քանի դեռ ողջ եմ, մի զրկիր ինձ տառապելու
ցանկությունից.
Ես տառապանք եմ տենչում նույնքան, որքան նա է
ինձ տենչում:
Մի՛ թուլացրու տառապելու կամքն իմ,
Որպեսզի ընկերը չկասկածի հավատարմությանն իմ:
Ավելացրու անդադար գեղեցկությունը սիրեցյալի,
Որ ավելանան անդադար տառապանքներն իմ:
Կարողացիր թուլացնել մարմինս ցավից բաժանումի,
Որպեսզի զեփյուռը կարողանա տանել ինձ դեպ
Տիեզերք:
Մի թույլ տուր, որ Ֆուզուլին՝ տարված գոռոզութ-
յամբ,
Անուղղելիորեն կառչի ինքն իրենից, օ՜, իմ Աստված:
Ես արքան եմ սիրո երկրի,
Սակայն դիմացա մեծ դժբախտություններին:
Փառքն ու փայլը ցավն են իմ,
Գրոհները տառապանքի՝ ծառաներն իմ:
Օ՜, երկինք, ծեր ուղեկից,
Երկար ժամանակ է չեմ նայում քեզ:
Այնքան էլ կարևոր չէ, որ մեջքս կորանում է,
Քանզի ես միշտ կլինեմ ամենամեծը տարիքով:
Պարտեզում սիրո սոխակի հետ են համեմատում ինձ,
Բայց պարտեզն այդ հյուծվում է բոցերում սիրո:
Արցունքներ՝ արյունոտ, սիրտ՝ կոտրված, լեռ՝
վշտաբեկ,
Ես լեռն եմ այդ վառ ու բոսոր գույներով:
Կյանքը սիրահարի հուսախաբ երազ ու առակ է միայն:
Միայն սերը փոխադարձ կենդանություն կտա
մահամերձին:

Այս սիրով աշխարհ եկած՝ ես ավելի եմ կրթված:
Տառապյալը ենթարկվում է ցավերին հավետ,
Ես՝ Վահիդս, ասում եմ, որ համբերատար է պետք
լինել:
Ֆուզուլին՝ ես պահակն եմ հավատարմության այս
գանձի,
Եվ աչքերն իմ գանձեր են մսխում
Հայտնվում են երջանիկ հուշերը մեր միության:
Որքան որ շունչը կկենդանացնի մարմինն իմ թույլ, ես
կզանգատվեմ:
Օ՜, թոչնակ իմ հոգու, ուրախացիր դու այսօր,
Քանզի վանդակը քո հաստատ կբացվի:
Որպեսզի ոչ ոք չսխալվի և քեզ սիրի
Բարձրաձայնում եմ բռնակալությունն ու
անարդարությունը քո:
Արցունքներս խավարեցրին Մաժնունի անունը
հիշողությունից բոլոր:
Օ՜, Ֆուզուլի, աշխարհով մեկ հայտնի կլինեմ ես
շուտով:

Սիրտը, որ չի տեսել ցավը բաժանումի,
Արժանի չէ սիրեցյալի հետ միությանը երջանիկ:
Ամեն տառապանք իր ճարն ունի անշուշտ,
Սակայն անճար է տառապանքը նրանց, ովքեր չունեն
տառապանք:
Նա է սիրեկանը, ով զոհաբերում է հոգին իր
սիրեցյալին:
Բայց նա, ով սիրում է սիրեցյալին իր իսկ հոգու
համար, իր հոգին է լոկ սիրում:
Եթե սիրեցյալը հոգիս ուզի, պատիվ կլինի դա ինձ
համար.
Ի՞նչ է հոգին, որ մերժեմ այն սիրեցյալիս:
Կարողանայի հազար հոգի ունենալ սրտում իմ փշրված

Եվ դրանցից ամեն մեկի մեջ զոհաբերեի ինձ հանուն
Քեզ:

Այնքան հարբած եմ ես, որ չեմ հասկանում այլևս
Ի՞նչ է աշխարհը:
Ո՞վ եմ ես, ո՞վ է նա, որ խմում է, ի՞նչ է գինին
հավերժական:
Չնայած աղերսում եմ սիրեցյալին երջանկություն
պարգևել իմ խենթ սրտին,
Եթե սիրեցյալն ինձ հարցնի, որն է երջանկությունն իմ
խենթ սրտի,
Ես չգիտեմ դա:

Դու հրամայեցիր սպանդը մարգարեի ընտանիքի,
Ճակատագի՛ր:
Դու դաժան մի սխալ գործեցիր,
Ճակատագի՛ր:
Երբ ընկան թրերը կայծակի պես,
Դու նահատակներ դարձրիր նրանց ամենքին,
Ճակատագի՛ր:
Ճիշտ կլիներ խնայել վանքը աբեղայության,
Բայց թույլ տվիր, որ թշնամին այն տրորի,
Ճակատագի՛ր:
Կերբելայի նահատակների ծարաված շուրթերին
Դու հոսեցրիր հեղեղը դժբախտության,
Ճակատագի՛ր:
Ուժն օրենքի չկանգնեցրեց քեզ,
Քեզնով անարդարությունը կռացավ Մուհամմեդ
Մուստաֆա մարգարեի երեխաների վրա,
Ճակատագի՛ր:
Դու չխղճացիր նրանց, ովքեր արյան մեջ էին,
Օտար հողում դու վերջ դրիր նրանց կյանքին,
Ճակատագի՛ր:

Պիռ Սուլթան Աբդալ (1480 - 1550)

Եկե՛ք հոգիներ, միավորվե՛նք,
Թափահարե՛նք սուրը թշնամու դեմ,
Պահանջե՛նք իրավունքն աղքատի,
Պահանջե՛նք իրավունքը որբի,
Հավատա՛նք ճշմարիտին,
Միավորե՛նք սրտերը մեր,
Լինե՛նք ինչպես մոլեգին հեղեղներ,
Գնա՛նք, գնա՛նք,
Ապաստան գտնե՛նք ճշմարտի մոտ,
Պիռ Սուլթան Աբդալն եմ, ապստամբել եմ ես,
Թո՛ղ որ դավաճանները բացահայտվեն,
Այն, ինչ ասված է պետք լինի,
Հավատա՛նք ճշմարիտին:

«Արարքներն այս դաժան արյունռուշտի
Ստիպում են ինձ լալ, ինչպես աղետում մի սոխակ,
Քարերն անձրևի պես թափվում են գլխիս,
Ընկերոջ լոկ մի վարդը սպանում է ինձ, ինձ, ինձ, ինձ,
Ա՜հ, ինձ, ինձ, ինձ, ընկեր, ինձ, ինձ, ինձ,
Այս օրը դժբախտը ես զատեցի ընկերներիս
թշնամիներիցս,
Տասն էին տառապանքներն իմ, այժմ դարձան հիսուն,
Հասել է ժամն իմ մահվան,
Կա՛մ էլ պետք է ինձ կախել, կա՛մ էլ պետք է ինձ
սպանել,
Ինձ, ինձ, ինձ,
Ա՜հ, ինձ, ինձ, ինձ, ընկեր, ինձ, ինձ, ինձ,
Ես Պիռ Սուլթան Աբդալն եմ,
Հոգիս չի կարող փախչել իմ մարմնից,
Եթե դա չէ հրամանն Աստծո,
Չի թափվի անձրևը գթասրտության,

Թշնամու ձեռքով նետված քարերն ինձ չեն դիպչի,
Ընկերոջ վարդն ինձ կսպանի,
Ա՜հ, ինձ, ինձ, ինձ, ընկեր, ինձ, ինձ, ինձ:

Թո՛ղ որ այրվեմ աստվածային սիրով,
Ես չեմ շեղվի իմ ճամփից,
Եթե լքեմ ճամփաս ես, անգործ կդառնամ,
Ես չեմ շեղվի իմ ճամփից,
Եթե Կադիներն ու Մուֆտիները դատավճիռն արձակեն,
Եթե ինձ կախեն, ահա պարանը,
Եթե ինձ սպանեն, ահա դաշույնը,
Ես չեմ շեղվի իմ ճամփից:

Մի՛ երգիր, սոխա՛կ, մի՛ երգիր, տխուր է սիրտս,
Օ՜, ընկեր, ես այրվում եմ տառապանքից, որը ինձ ես պատճառում,
Այրվել է պատրույգը կանթեղիս և ձեթն է սպառվել,
Օ՜, ընկեր, ես այրվում եմ տառապանքից, որը ինձ ես պատճառում,
Հայդար, Հայդար, Հայդար, ես այրվում եմ,
Ալի, Ալի, Ալի, ես այրվում եմ,
Ես նման եմ հեղեղների, որ խառնվել են ծովին,
Ես նման եմ ժամանակից շուտ բացված վարդի,
Ես նման եմ մոխրի, մարել է կրակը որի,
Օ՜, ընկեր, ես այրվում եմ տառապանքից, որն ինձ ես պատճառում,
Հայդար, Հայդար, Հայդար, ես այրվում եմ,
Ալի, Ալի, Ալի, ես այրվում եմ,
Դու կլսես ինձնից հերոսների մասին խոսելիս,
Դու կխնամես իմ վերքը նահատակների մեջ,
Թափառել եմ ես քառասուն տարի եղջերուների մեջ լեռան,

Հայդար, Հայդար, Հայդար, ես այրվում եմ,
Ես Պիո սուլթան Աբդալն եմ, եկել է վերջն իմ կյանքի,
Առանց ուտելու և խմելու, ցամաքել է ջուրն իմ կյանքի
Ինձ կախել են անչափ սիրելու համար Աստծուն,
Հայդար, Հայդար, Հայդար, ես այրվում եմ,
Ալի, Ալի, Ալի, ես այրվում եմ:

Օ՜, սազ իմ դեղնած,
Ինչո՞ւ հառաչել անդադար:
Խորն է անտառս, մեծ է վիշտս,
Դրա համար եմ հառաչում:
Տե՛ս պարաններն այս թևիս,
Իրենց հազարավոր հնչյուններով զանազան,
Սոխակ Սեմերի,
Արդար չէ՞, որ հառաչեմ:
Տե՛ս պատյանն այս թևիս,
Գիտե՞ս, թե որքան եմ ես տառապել:
Ողջերի և մահացածների համար
Հառաչում եմ ես անդադար:
Տե՛ս անտառն այս կրծքավանդակիս,
Այս մատները, որ դիպչում են նրանց անդադար,
Ամեն հպումին՝ ծակում այն,
Դրա համար եմ ես հառաչում:
Արի՛ իմ սազ դեղնած,
Արի՛ ծնկներիս,
Հուշերս ինձ կոտրում են,
Նրանց համար եմ ես հառաչում:
Ես քո սազն եմ դեղնած,
Գանգատս երկինքներ է պատռում,
Պիո սուլթան Աբդալն է տերը իմ,
Իմ տիրոջ համար եմ ես հառաչում:

Երկնքի դռները բացվում են,
Բազում գանձերից պատրաստված դռներ,
Կամուրջը, որն այնտեղ է տանում…Մի թել:
Անցի՛ր, եթե քաջ ես այդքան և արի՛:
Մեր հոգի՞ն: Հրեշտակներինն է:
Մեր մարմի՞նը: Արքաներինն է:
Մեր կա՞թը: Առյուծներինն է:
Խմի՛ր, եթե քաջ ես այդքան և արի՛:
Եթե հավատարիմ եմ տիրոջն իմ,
Եթե ականջ եմ դնում հրեշտակներին,
Նրա համար է, որ թևն իմ կապված է նրանց:
Քանդի՛ր, եթե քաջ ես այդքան և արի՛:
Ես և՛ վարդն եմ դրախտի,
Ե՛վ սոխակը՝ ընտրյալների,
Ե՛վ փականքը՝ քառասուն շեմերի,
Բացի՛ր, եթե քաջ ես այդքան և եկ:
Պիո սուլթան Աբդալն եմ ես, այս անունից
Լեռները մշուշով են պատվում,
Տե՛ս Ղուրանը, տե՛ս Ավետարանը,
Ընտրի՛ր, եթե քաջ ես այդքան և արի՛:

Նորին մեծություն շահի ձայնը
Կռունկ կոչվող թռչունի մեջ է հիմա,
Գավազանն իր Նեղոսի խորքում է,
Եվ զգեստն իր մի դերվիշի հագին:
Նեղոսն ափերից դուրս եկավ,
Իմ վարդագույնը թոշնեց,
Իր հայացքն առյուծի մոտ է,
Իսկ մարտական ոգին՝ խոյի:
Ալին չգիտեր «ինձը»,
Իր սիրտն ատելություն չէր ճանաչում,
Զուլֆիկար սայրի կողմն ամեն
Վերագտնվում է իր թրում,

Ո՞ւր է ապա Պիո սուլթան Աբդալը:
Մարմինն իր ճոճվում է կախաղանում,
Բայց որևէ տեղ, Յեմենից այն կողմ,
Դյուլդյուլ ձին շարունակում է մարտը իր:

Մենք քնում էինք անհոգության քնով,
Մեզ արթնացրեցին, մեզ ողջերի շարքում հաշվեցին,
Հովվից մենք հասկացանք կանչը,
Մեզ հաշվեցին խմբերի մեջ,
Մենք լքվեցինք ուղու վրա,
Մենք հնազանդվեցինք զոհաբերությանը,
Մենք գրվեցինք ընտրյալների տետրում,
Փա՛ռք Աստծուն, մենք ընդունվեցինք,
Մենք հասկացանք մեր վիճակն իրական,
Մենք գտանք ուղին,
Մենք նեկտար հավաքեցինք ամեն ծաղկից,
Մեզ հաշվեցին մեղուների մեջ,
Մենք ներկայացված ենք աստվածային
դատաստանին,
Մենք գրվեցինք Տիրոջ տետրում,
Մենք դարձանք մեղր, մենք շարբաթ բուրեցինք,
Մենք ներառվեցինք ընտրյալների բաժակում,
Պիո սուլթան Աբդալն եմ ես, իմ անունն այսուհետ
Հայդար է,
Հրաշքները բազմաթիվ են մարդկանց մոտ,
Այս կամ այն աշխարհում
Մենք Ալիի արարածների մեջ ենք:

Այս ազատ մտավորականները իրենց մարդասիրության և ապստամբ մտքի համար հաճախ կյանքով են վճարել: Նեսիմին կենդանի մաշկազերծ է արվել Բաղդադում, իսկ Պիո սուլթան Աբդալը կախաղան է բարձացվել Սիվասում:

Բանաստեղծը, ով թափահարում է իր երաժշտական

գործիքը, ինչպես իր վերջին զենքը բռնապետության և ճնշման դեմ, ալեվիզմի շատ մեծ խորհրդանիշներից մեկը, նա այսպես միանում է Հաջի Բեկթաշին, որպես Իմամ Ալիի կողմից բացահայտված աստվածային հաղորդագրության գաղտնիքի հետնորդների ժողովրդական վերամարմնավորում. ամբողջ ճշմարտությունը մարդու մեջ է:

Գյուլ Հիմմետին (1495 – 1585)

շատ ճիշտ է արտահայտում սերունդների այդ կապ հետևյալ բանաստեղծության մեջ.

Երբեմն այդպիսին է ամպը, դու ճոճվում ես երկնքում,
Երբեմն այդպիսին է անձրևը, երկրի վրա ես թափվում,
Դու երկի±նքն ես, դու լուսի±նն ես, հայտնվում ես երկնքում,
Դու հովիկն ես, որ փչում ես մեղմորեն, դու Հաջի Բեկթաշ,
Դու բալասանն ես իմ ցավերի, դու ծակոցն ես իմ վերքերի,
Դու կրում ես չորս տարրերը քո մեջ, և փրկությունն է քո մեջ,
Մեջքիդ շուրջն է գոտին, թագն է քո գլխին,
Լույսն է ճառագում քո դեմքից, Հաջի Բեկթաշ,
Աղոթքները Գյուլ Հիմմետի չեն դադարի երբեք,
Մեզ մի տանիր հեռու Պիր սուլթանի ճանապարհից,
Վերջին դատաստանի օրը մենք վկա կլինենք,
Բարեխոսիր մեզ համար ավետաբերի մոտ, դո՛ւ Հաջի Բեկթաշ:

11.

Ալեվիզմը և Ղզլբաշների ապստամբությունը

16-րդ դարը բեկումային է ալեվիզմի զարգացման համար: Օսմանյան կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև պատերազմի ընթացքում Անատոլիան երեսուն տարի ենթարկվում է թուրքմեն ցեղերի ապստամբություններին, որոնք վտանգի տակ են դնում սուլթանների իշխանությունը: Այս ընդվզումների կողմակիցները կոչվում են *Ղզլբաշներ՝* «Կարմրագլուխներ», և սա այն արտահայտությունն է, որ մինչև 19-րդ դարի վերջը բնորոշում է ալեվիներին:

Երիտասարդ շահ Իսմաիլը (1487-1524), ով գլխավորում էր Սասանյան Պարսկաստանում շիիթական արքայատոհմը, այս ժամանակաշրջանի որոշիչ կերպարն էր: Նա էր, որ ալեվիզմի մեջ ներմուծեց տասներկու իմամների և, մասնավորապես, իմամ Ալիի պաշտամունքը և մարգարեական փրկչի՝ քողարկված իմամ *Մահդիի* հայտնվելու հավատը, որ պետք է արդարություն հաստատի նրանց համար, ովքեր տառապում են: Այս փրկիչը ժամանակին մահկանացու է եղել, բայց դարձել է Ալիի վերամարմնավորումը, որ հենց ինքը համարվում է աստվածային դրսևորումը: Իմամ Ալիի այս գերագույն պաշտամունքը ուղղափառ շիիթները անվանում են *ghulat-գյուլաթ*, որ դատապարտվում է նրանց կողմից: Ղզլբաշներին շիիթներն, ուրեմն, համարում են կռապաշտներ՝ *Ali-elahi-Ալի-էլահիներ*, ովքեր Ալիին համարում են Աստված, իսկ սուննիների կողմից համարվում են հերետիկոսներ:

1514 թվականին Չալդըրանում օսմանյան սուլթան

Սելիմ Առաջինի (*Յավուզ սուլթան Սելիմ*) ռազմական հաղթանակից հետո Ղզլբաշները ենթարկվում են ծայրահեղ կատաղի հալածանքների: Սուլթանը դառնում է ուղղափառ սուննիական իսլամի հովանավորը և դաժանաբար ճնշում է հերետիկոսներին: Օսմանյան կայսրության ներսում քրիստոնյաներն ու հրեաներն օգտվում են կրոնական փոքրամասնություններին հատուկ կարգավիճակից, որն անվանում են *զիմմի*: Ավելի բարձր հարկի շնորհիվ նրանք պաշտամունքի ազատություն և ֆիզիկական անվտանգություն են ստանում: Այս իրավունքը չի վերաբերում իսլամիզմի կողմակիցներին, որոնք մահապատժի են ենթարկվում: Ահա թե ինչու, այս ժամանակաշրջանից սկսած, Ղզլբաշներն իրենց հավատալիքներին դավանում են քողարկելով կամ դրանք թաքցնելով մահմեդական շղարշի տակ, որը կոչվում է (Takiye) *Թակիյե*: Գաղտնիքի ստվերում գտնվող հավատքը այսօր էլ մնում է ալեվիզմի հիմնական գծերից մեկը:

Ադրբեջանի սաֆեվիյան եղբայրությունը

Ադրբեջանի Արդեբիլ (*Erdebile*) քաղաքում, քաղաքի հիմնադրի՝ Սաֆի ալ-Դին Արդաբիլցու (1252-1334) (Safiyuddin Ishak Erdebilii -*Սաֆիյուդին Իսահակ Էրդեբիլի*) անունով ձևավորվում է Սաֆեվիյան սուֆիական եղբայրությունը: Նրա հաջորդներից *Հոջա Ալին* (1391-1429), շփվելով Անատոլիայի թուրքմենների հետ, ընդունում է շիիզմը: Իսկապես, այս ժամանակաշրջանում մոնղոլների առաջնորդ Թամերլանը (թուրքերեն՝ Թեմուր Լենկ) (1336-1405) տիրանում է Անատոլիային և գերի է տանում Ադրբեջան ավելի քան 30.000 թուրքմեն: Նրանց մեջ կան *Ակիիս* արհեստավորների ցեղերից անդամներ, ովքեր մեծարում են Իմամ Ալիին և *Բաբաներին* և հետևում են *Հաջի Բեկթաշի* ուսմունքին: Հոջա Ալին իրենց շփման

եղբայրությունը վերափոխում է շիիթական *գյուլաթի* և ընդունում Հաջի Բեկթաշիին որպես հոգևոր ուղեցույց:[116]

Դեռ ավելին, Բաղդադի և Հալեպի սուֆիական շիիթները ներգրավվում են եղբայրության մեջ և զարգացնում Քութուբի մեսիական գաղափարը: Հզոր արքայատոհմերի և մահմեդական կայսրությունների կողմից հաստատված կարգն անարդար է ժողովուրդների նկատմամբ, ովքեր կքված են հարկերի տակ և պատերազմների ու կողոպուտների զոհ են դառնում: Մի փրկիչ, Քութուբ-ի-ալեմը, (Աշխարհի Բևեռը) Մահդիի ձևով կհայտնվի՝ հաստատելու աստվածային ճշմարիտ արդարությունը:

Հոջա Ալիի հաջորդները՝ Ջյունեյթը և Հեյդարը, 1447-ից մինչև 1488 թթ. իրենց կյանքն են նվիրաբերում դավանափոխելու գործին թուրքմենական ցեղերին և Անատոլիայի գյուղացիներին՝ նրանց ապստամբության անհրաժեշտության կոչ անելով՝ հանուն արդարության թագավորության (Adalet Devleti-Պետական Արդարություն) և հանուն բոլորի կողմից ընդունված քաղաքի (Riza kenti -Ռիզա Քենտիի):[117] Նրանք իրենց անվանում են յոթերորդ իմամ Մուսա Քյազիմի հետնորդներ և աստծո դրսևորումներ, (ինչպես Մահդին)՝ կոչ անելով զենք վերցնել հանուն պայքարի: Եղբայրությունը և նրա հոգևոր առաջնորդները՝ (Mursid)Մուրշիդները, նշանակում են պիռերին՝ իրենց ներկայացուցիչներին, դավանափոխություն իրականացվող տարածքներում: Նրանք այնքան մեծ ազդեցություն են ձեռք բերում, որ դառնում են Քուրդիստանում իշխող Ուզուն Հասանի Աք-Կոյունլուների (աք – սպիտակ, կոյունլու – ոչխար) թուրքմենական ցեղային կարևոր եղբայրության հովանավորները: Թուրքմենական յոթ ցեղերը՝ Ուիմակ

116 Ismail Kaygusuz, *Görmedigim Tanriya tapmam, Alevik ve Materializm*, op. cit.

117 Ismail Kaygusuz, *Görmedigim Tanriya tapmam, Alevilikk ve Materializm*, op. cit. Նույն տեղը:

(Uymak) միավորվում են Հեյդարի գաղափարներին լրիվ հասու մի եղբայրության մեջ: Նրանք ստանում են Ղզլբաշ կամ Կարմրագլուխ անունը՝ կրելով «Հեյդարի Թագի» (Taj-e Heydar-Թաջ Հեյդար) տասներկու ծալքանի գլխադիրը (ի հղումս 12 իմամների): Այս կոչումը նաև հղում է 9-րդ դարում Բաբեկ Խորմանդինի ապստամբներին, որոնք իրենց անվանում էին «Շուրխջամեգան» (պարսկերեն՝ կարմիր հագածներ): Այդ յոթ ցեղերն են շամլուները, ուստաջլուները, ռումլուները, տակալուները, դուլքադարները, աֆշարները, քաջարները: Նրանք հզոր, պատերազմող քոչվոր ցեղեր են՝ եկած Անատոլիայից և Ադրբեջանից: «Առանց թուրք Ղզլբաշների երբեք գոյություն չէր ունենա Սասանյան տերությունը, Արդեբիլի կրոնական առաջնորդները երբեք քաղաքական նման նպատակներ չէին ունենա»:118 Սաֆեվիյան եղբայրությունը դառնում է քաղաքական և ռազմական այնպիսի տերություն, որ Ուզուն Հասանի մահվանից հետո Աղ-Կոյունլու առաջնորդները որոշում են դրանից առանձնանալ՝ վախենալով կորցնել իրենց իշխանությունը: Այսպիսով, Հեյդարի որդին՝ Իսմաիլը անցնում է Ղզլբաշների հովանավորության տակ:

Նույն ժամանակահատվածում օսմանյանները մեծ վախով հավաստում են շիիթական գաղափարների տարածումը Անատոլիական սարահարթում: Բացի *Ղզլբաշ* յոթ ցեղերից, մեծ թվով թուրքմենական ցեղեր, *Բաբաների* գլխավորությամբ, որ Հաջի Բեկթաշի ուսմունքին ու հուռուֆիզմին են կողմակից, սկսում են թեքվել դեպի Սասանյան կրոնական առաջնորդների կողմը: Հարստահարված սուլթանների և նրանց վեզիրների կողմից, որ նրանց ծանրաբեռնում են հարկերով՝ իրենց ռազմական նվաճումների համար ավելի շատ դրամական միջոցներ տրամադրելու համար, թուրքմենական ցեղերը դիմադրության կոչերի են հանդիպում շիիթական գաղափարների մեջ: Այսպիսով, օսմանյաններն այդ ահագնացող ընդվզումը փորձում են կանգնեցնել՝ օգտագործելով Հաջի Բեկթաշի կերպարն ու անունը:

Նախևառաջ նրանք ուժեղացնում են իրենց ռազմական խավը՝ ենիչերիներին (*Yeniçeri*): Վերջիններս ձևավորվում են ծագումով քրիստոնյա զինվորներից, առևանգված երեխաներից (*devsirme - դեվշիրմե-փունջ*), որոնք դաստիարակվում են՝ միմիայն սուլթաններին ծառայելու համար: Նրանք գտնվում են Հաջի Բեկթաշի սուրբ հովանավորության ներքո և կոչվում են «Հաջի Բեկթաշի երեխաներ» *(Haci Bektas Ogullari)*.

Եվ երկրորդ՝ նրանք հիմնադրում են բեկթաշիզմը որպես եղբայրություն՝ հասարակական կարգուկանոնի կազմակերպումը վստահելով Բալիմ սուլթանին, այդպիսով, հույս ունենալով ավելի լավ վերահսկել դերվիշների աղանդավորական ազդեցությունները:

«16-րդ դարի հենց ամենասկզբին սուլթան Բեյազիտ 2-րդը (1481-1512) հրավիրեց Բալիմ սուլթանին, որն այդ ժամանակ բեկթաշիների առաջնորդն էր, և սուլթանն ինքը և իր պաշտոնյաները միասին արքունիքում ընդունեցին Բեկթաշի կարգը: Օսմանյան սուլթանն է, որ 1501 թվականին Բալիմ սուլթանին նշանակեց սրբի տան առաջնորդ (Pir Evi- Պիռի տուն): Փոխարենը սուլթանը հույս ուներ, որ դերվիշները կհեռացնեն թուրքմեն ցեղերին ժողովրդական իսլամից և իրենց շիիթական հավատալիքներից, որ ընդունել էին մինչ այդ: Նա ցանկանում էր հակազդել պառակտիչ գործոններին, որոնք գալիս էին իրանական սահմանից և որոնք ուժգնանում էին սասանյանների քարոզչության հետ, որի մեծ մասը գալիս էր թուրքմենական ցեղերից»:[119]

Այդ քաղաքականությունը մեծ հաջողություն չունեցավ:

118 Ahmet Turan, *Harun Yildiz, Tarihten Günümüze Anadolu aleviligi,* 2008.

119 Albert Doja, *A political history of Bektashism, from Ottoman Anatolia to contemporary Turkey*, op. cit.

Ենիչերիները հավատարիմ մնացին օսմանյաններին և գլխավորեցին Անատոլիայում ղզլբաշների ճնշումը: Նրանք 1514 թվականի Չալդըրանի ճակատամարտում Իսմաիլ I շահի հաղթանակի հիմական ուժերը եղան ընդդեմ Սելիմ I-ի: Ինչ վերաբերում է Բեկթաշի դերվիշներին, եթե նրանցից ոմանք չմասնակցեցին Անատոլիայում 1519-1528 թվականների ղզլբաշների ընդվզումներին, ապա մյուսները գլխավորեցին այդ ապստամբությունները, իսկ Բեկթաշի միաբանությունը ճնշումներից փրկվածներին հովանավոր եղավ: Հաջի Բեկթաշի դամբարանը միաբանության գլխավոր մենաստանում՝ ըստ Սուրուկա Ղարաէյուկի կարգի, ֆինանսավորվեց Սելիմ 1-ի օրոք, 1514 թվականին շահ Իսմայիլի պարտությունից հետո, սակայն այն փակվեց մինչև 1551 թվականը ձգվող այդ ընդվզումների հետևանքով, իսկ Բեկթաշի դերվիշները այն ժամանակից ի վեր, կասկածվում էին հերետիկոսության մեջ և գտնվում էին խիստ հսկողության տակ:

Շահ Իսմայիլ Հաթայի դյուցազներգությունը

1500 թվականին *ղզլբաշ* յոթ ցեղերը Երզնկայում ռազմական ժողով են հրավիրում: Նրանց առաջնորդ Հեյդարի երիտասարդ որդի Իսմայիլը իրեն հռչակում է Ալիի վերամարմնավորում՝ որպես «Մարդկանց Արքա» *(Sah-I Merdan-Շահը Մերդան)* և որպես մեսիական փրկիչ *(Medhi-Մեդիի)*:Նա հավակնում է լինել իր ժամանակի աստվածային դրսևորումը, որ ուղարկվել է ճշմարիտ Աստծո կողմից՝ Անատոլիայի թուրքմեններին փրկելու օսմանյանների ճանկերից (որոնք ներկայացնում են եզդիների (*Yazid*) հետնորդներին) և հավակնում է լինել իմամ Հյուսեյնի և նրա մերձավորների դահիճը Կերբալայի ճակատամարտում: Ռազմիկներին ոգևորելու համար Իսմայիլն օգտագործում է իր խորհրդավոր բանաստեղծությունը, որը ստորագրում է Հաթայի կեղծանունով.

«Ես ճշմարտության աստվածն եմ, մեկը տասներկու իմամներից, նվաճել եմ չորս ծեգերն աշխարհի, և էությունն եմ Ալիի ուժի: Հասնելու համար Արարչի առեղծվածին նվիրվեցի ես Մուհամմեդ Ալիին, դարձա զոհը ճշմարտության, նվիրյալը՝ Հասանի, Հուսեյնի ու իմամ Զայնի, դարձա բարեկամը Մուհամեդ Բաքրի, և հետնորդը՝ Ջաֆար Սադիկի, նվիրվեցի իմամ Քյազիմին ու իմամ Ռայզիին, և Մուհամեդ Թակիի լույսն էի ճշմարիտ, Ալի Նակիի առեղծվածը, և Հասան Ասքյարի մարմնավորումը, զոհաբերվեցի ես Մուհամեդ Մեհդիին: Լավագույն կացարանը քաջ շահինն է, կապը ճշմարտության հետ և նպատակը ուղու, և վերջապես զոհաբերվեցի ես Մուհամմեդին, ինչպես բոլորն են ինձ կոչում շահ Հաթայի, զոհաբերվեցի ես, ինչպես անցյալից եկած: Նրա եղունգներն մարգարիտներ են, իսկ մարջանե արյունը Աստծուն է ներբողում, զոհաբերվեցի հանուն տասներկու իմամների:»

Անատոլիայում մնացած թուրքմեն ցեղերը պատասխանում են օսմանյանների դեմ ընդվզման նրա կոչին: Նրանք կենտրոնացնում են իրենց ուժերը, Իսմայիլին զորքեր և ռազմիկներ տրամադրում: Որոշ ցեղեր նույնիսկ ձեռնամուխ են լինում մեծ վերաբնակեցման Անատոլիայի արևմուտքից մինչև արևելք՝ միանալու համար «ճշմարիտ արքային», առավել ևս, որ Իսմայիլը թշնամիներից նվաճված տարածքները տալիս է ղզլբաշներին, որոնք կռվում են իր կողմից:

«Ղզլբաշների շարժման հետ մեկտեղ, մասնավորապես այն պահից, երբ սաֆավիդյան շեյխերը կրկին միավորվեցին և զինեցին իրենց կողմնակիցներին՝ իշխանությունը վերցնելու պատրաստ լինելու համար, քոչվոր ցեղերի արտագաղթը՝ դավանափոխված նոր կրոնին Իրանում, օրեցօր ավելի մեծ կարևորություն էր ստանում: Այսպես, հավատացյալների փոքրիկ խումբը, որ շրջապատում

էր երիտասարդ Իսմայիլին, երբ վերջինս լքեց Գիլանը, իշխանությունն իր ձեռքն առնելու համար նմանվում էր լավ ձևավորված ձնագնդիկի, որը բավական էր նետել հարմար պահի՝ երկրում եղած քաղաքական ամայությանը կյանք տալով»:[120] 1501 թվականին 7000 ռազմիկների գլուխ կանգնած Իսմաիլը ջախջախում է Աք-Կոյունլուների բանակը, չնայած վերջիններս 30.000-ով գերազանցում էին իրենց, գրավում է Թավրիզը Ադրբեջանում, և այնտեղ իրեն հռչակում շահ (թագավոր): Նա հիմնում է Սասանյան կայսրությունը, որ հիմքը ղզլբաշ թուրքմեն ռազմիկներին և Սաֆեվիյան շիիթական կրոնական եղբայրությունն է: Իսմայիլ 1-ը նաև ճանաչվում է որպես գերագույն հոգևոր առաջնորդ (*Մուրշիդ-ի Քամիլ*), ինչը նրան դարձնում է քաղաքական և կրոնական իշխանությունների պահապանը:

Ապա Իսմայիլը նվաճում է Պարսկաստանի մնացած հատվածը և Իրաքը, իսկ 1508 թվականին գրավում է Բաղդադը, իրեն է միացնում Աղ-Կոյունլու այն ցեղերին, որոնց առաջնորդներին նա ջախջախել էր: Իրանական և քրդական ցեղերը ևս միանում են նրան: «*Ղզլբաշ ցեղերի թիվը 32-ն էր՝ չհաշված տեկելուներին, դուլքադարներին, թուրքմեններին և աֆշարներին, որոնք արդեն տեղավորվել էին Իրանում: Մնացած 28 ցեղերը աստիճանաբար գալիս են Ռունի (Անատոլիա) տարածքից և համալրում իրենց հետևորդների շարքերը: Վերջապես շահ Իսմայիլի գահակալումից հետո, երբ յուրաքանչյուր սուֆի նշանակվեց մի շրջանի կառավարիչ, նրանց ընտանիքներն ու զբաղմունքներն իրենց վերադարձվեցին, և նույն ձևով, ինչպես Ռունի տարածքում, նրանք սկսեցին զբաղվել քոչվոր անասնապահությամբ և քիչ-քիչ տեղավորվեցին Իրանի շրջաններում*»:[121]

Ընդվզումները տարածում են գտնում Անատոլիայում, քանի որ օսմանները շրջափակման մեջ են պահում թուրքմենական ցեղերին՝ խանգարելով նրանց համալրել սասանյանների շարքերը: Տակալուների քոչվոր ցեղն իր տոհմերի կանոնավոր վերաբնակեցում իրականացրեց Անթալիայի մոտ գտնվող Էլմալի շրջանից մինչև Երզնկայի Դերջանը: Նրա ռազմիկների մեծ մասը Իսմայիլին միացան 1500 թվականին, ցեղի մնացած մասը հասավ իր հայրենի շրջանը: 1502 թվականից ի վեր Օսմանյան կայսրության բարձրաստիճան սունի հոգևորականները խորհրդականներին (*fatwas*) ղզլբաշների դեմ են հանում: Վերջիններս հռչակվում են «անհավատներ», «սատանայի բարեկամներ» կամ «Աստծո թշնամիներ», նրանց առաջնորդներն ու ընտանիքները շիկացած երկաթով երեսներին դաջվածք են ստանում և արտաքսվում Ալբանիա կամ Հունաստան: Նրանք, ովքեր հրաժարվում են ենթարկվել սուլթանի կարգադրություններին և թողնել իրենց շիիթ հավատքը, բանտարկվում են և սպանվում: «*Այնքան մարդ մահապատժի ենթարկվեց կամ աքսորվեց, գյուղերն ամբողջովին դատարկվեցին: Դեպի Իրան վերաբնակեցմանը խանգարելուց հետո, իրենց շահին միանալու համար Բեյազետ 2-րդը որդեգրեց զանգվածային տեղահանման այս քաղաքականությունը*»:[122] 1511 թվականին իրենց դերվիշի՝ Շահ Ղուլու Սուլթանի (Sah Kulu Sultan) կոչով ցեղի 20.000 անդամները զենք են վերցնում ընդդեմ օսմանյան բռնի նստակյացության անցնելուն և հարկեր գանձելու քաղաքականությանը, և իրենց են միավորում բոլորին, ովքեր դժգոհ են սուլթանի վարած քաղաքականությունից: «*Կողմնակիցներն առաջին հերթին առաջնորդների մերձավոր շրջապատից էին, այսինքն նրանք սկիզբ են դնում իրենց իսկ հետևորդների գոյությանը, որոնք միաժամանակ ընդվզումների քարոզիչներն ու*

120 Hassan Pirouzdjou, *L'Iran au début du XVI –e siècle*, L'Harmattan, 2010.

121 Նույն տեղը:

122 Riza Yildirim, *Turkomans between two Empires: the origins of the Qizilbash identity in Anatolia (1447-1514). Bilkent University,* Ankara, 2008.

կազմակերպիչներն են: Հետո գալիս է կողմնակիցների երկրորդ շերտը՝ կազմված քոչվոր կամ գյուղացի մահմեդականներից և այլադավան քրիստոնյաներից՝ դժգոհ վարչակարգից, կառավարությունից, որոնց ավելանում են արկածախնդիրներն ու ավազակները»:[123]

Նրանք սպասում են, որ իրենց իրավունքները կպաշտպանվեն աշխարհագրական փոփոխությունների հետևանքով, և որ այսպիսով կհասնեն իրենց «արքային»՝ շահ Իսմայիլին: Նրանք գրավում են Անթալիան, այն թալանելուց հետո բռնում են Բուրդուրի և Իսպարտայի ճանապարհը, որտեղ փող, սնունդ, ձի և զենք են կուտակում՝ Քյութահյա քաղաքի վրա հարձակվելու համար: Այնտեղ ջախջախում են օսմանյան առաջին բանակը և հրի մատնում քաղաքը, ապա Այդինի մոտ ջախջախում օսմանյան երկրորդ բանակը: Այնուհետև նրանք ուղղվում են դեպի Կայրաման, որտեղ ոչնչացվում է օսմանյան երրորդ բանակը: Շահ Կյուլու սուլթանը վերջնականապես ջախջախվում է Կեսարիայի մոտ, բայց նրա ապստամբ բանակից կենդանի մնացածները Իրանում միանում են Իսմայիլ շահին:[124]

Թուրքմենական *տեկելու /Tekelu/* ցեղի մնացած մասը, մասնավորապես կանայք և երեխաները, Բեյազիտ 2-րդ սուլթանի կողմից տեղահան են արվում և քշվում դեպի Հունաստան և Պելոպոնես:

Օգտվելով այն բանից, որ օսմանյան թագաժառանգները պայքար են մղում Բեյազիտ 2-րդին հաջորդելու համար՝ 1512 թվականին Իսմայիլ շահն իր հետևորդների առաջնորդներից մեկին՝ Նուռ Ալի Խալիֆին, 20 000 հոգու

123 Ahmet Yasar Ocak, *Syncrétisme et esprit messianique: le concept de Qotb et les chefs des mouvement messianiques aux époques Seldjoukide et Ottomane (XIII-XVII siècle), syncrétismes et hérésies dans l'Orient Seldjoukide et Ottoman (14-18 siècle)* Actes du Colloque du Collège de France, Peeters Paris 2001.

124 Erdem Cipa, *Sahkulu Rebellion*, 2001

գլուխ կանգնած, ուղղարկում է Ամասիան գրավելու: Նրա նպատակը օսմանյան շրջափակումը խափանելն է, որպեսզի իր կողմնակիցները միանան իրեն և Ղզլբաշ շարժումն ամուր հաստատվի այդ շրջանում: Հասնելով Եվդոկիա՝ բնակչության մեծ մասը միանում է Նուռ Ալի Խալիֆին: Այստեղ նա ջախջախում է առաջին օսմանյան բանակը: Սելիմ 1-ինը ընտրվում է որպես նոր սուլթան, չնայած նրա հարազատ եղբայր Մյուրատը միացել էր ապստամբ շարժմանը: Ղզլբաշների բնակավայրերն ավերելու Սելիմի արյունոտ դաժանության պատճառով նրան անվանում էին «Սելիմ Ահեղ»:

Ղզլբաշները գրավում են Ամասիան և Չորումը՝ հավաքելով տասնյակ հազարավոր հետևորդներ և ետ են գալիս Էրզնկան, որը օսմանյանների դեմ պայքարի ժամանակ ապստամբ զորքերի կենտրոնացման վայր է ծառայում: Սուլթան Սելիմ 1-ինը նրանց դեմ 50 000-անոց զորք է ուղարկում, որը պարտվում է Սիվասում (Սեբաստիա): 1513 թվականին նա Ադրիանապոլսում ռազմական ժողով է հրավիրում, որտեղ իրեն հռչակում է Աստծո ստվեր, ով պարտավորված է Սուրբ Պատերազմ (Ջիհադ) մղել հանուն մահմեդական ճշմարիտ կրոնի և ոչնչացել ճշմարիտ հավատքի թշնամուն՝ Իսմայիլ շահին:

Կայսրության սունի մահմեդական իշխանությունների կողմից նոր խորհուրդներ են (ֆատուա) դրվում, որոնք «Ղզլբաշ հերետիկոսների» կոտորածի համար թույլտվություն են տալիս զորքերին: Բոլոր տղամարդկանց բնաջնջումը, ինչպես նաև կանանց, երեխաների և գույքը որպես ավար բաժանումը որակավորվում է որպես Աստծո առաջ սուրբ պարտականություն: Այդ խորհուրդներից մեկը ձևակերպվում է այսպես. *«Ոչ մի կասկած չկա, որ նրանք ուխտադրուժներ, անհավատներ են: Նրանք պետք է ենթարկվեն ուխտադրուժների օրենքներին, նրանց հողերը պետք է ավերվեն, ամուսնություններն անվավեր համարվեն,*

երեխաները պետք է հայտարարվեն խառնարյուններ, կենդանիները, որ նրանք պահում են, պիղծ են»:[125]

Այսպիսով, Սելիմ 1-ինը մահապատժի է ենթարկում ավելի քան 40.000 անատոլիացի ղզլբաշ՝ մինչև իր զորքերին Իսմայիլ շահի դեմ հանելը:

1514 թվականին Սելիմը հավաքում է 140.000-անոց բանակ, գրավում Սիվազը, Էրզինկանն շարունակում շարժվել դեպի արևելք՝ վճռորոշ ճակատամարտ մղելու նպատակով: Որպես պաշտպանական մարտավարություն ղզլբաշները կիրառում են հրկիզման մարտավարությունը: Օսմանյան բանակը, այսպիսով, չի կարողանում տեղաշարժվել իր տարածքի 1500 կիլոմետրի վրայով: Օսմանյանների բարեհաճ պատմիչ Իդրիս-ի-Բեդլիսը գրում է.

«Սուլթանը կարգադրեց, որ Դերջանի և Թավրիզի միջև ընկած տարածքներն անցնեն որքան հնարավոր է արագ, քանի որ Դերջանից մինչև Խոյի երկիր ու Սալմաստից (Ադրբեջան) սկսած բացարձակ անապատ էր. ո՛չ հողագործություն կար, ո՛չ անասնաբուծություն: Այս ճանապարհորդության ժամանակ, որը նրանցից մեկ ամիս խլեց, նրանք չհանդիպեցին կյանքի և ոչ մի նշանի (...) Դիարբեքիրի և Քուրդիստանի երկրների մոլորության մեջ ընկած կառավարիչը՝ շահի կողմից նշանակված Մուհամեդ խան Օստակլուն, լսելով Իրանի երկրներում սուլթանի նոր արշավանքի մասին, փախավ, տեղահան արեց Բինգյոլի (ճապաղաջուր) և Ալաշկերտի ճանապարհով դեպի Ադրբեջան բոլոր ցեղերին, թուրքմեն և քուրդ ցեղերի ռազմիկներին, իր ճանապարհին այրեց դաշտերն ու արոտավայրեր, որպեսզի այլևս գոյություն չունենան ո՛չ քաղաք, ո՛չ գյուղ, ո՛չ տուն, որոնք կարող էին ծառայել հավատքի ռազմիկների կյանքի կամ ճամբարների համար»:[125]

125 Hassan Pirouzdjou, *L'Iran au début du XVIe siècle*, op. cit.

Ճակատամարտը տեղի է ունենում 1514 թվականի օգոստոսի 23-ին Չալդիրանում՝ Ադրբեջանում: Սելիմ 1-ինի օսմանյան բանակն ուժեղանում է և հաշվվում է մինչև 200.000 ռազմիկ, մինչդեռ Իսմայիլ շահն ուՂզլբաշները կարողանում են հավաքել միայն 80.000 մարդ: Օսմանյանները ծանր պարտության են ենթարկում Սասանյան տիրակալին, ում, այնուամենայնիվ, հաջողվում է փախչել: Իսմայիլ շահը կորցնում է իր անպարտելիության և աստվածային փրկչի կարգավիճակը: Մի քանի ամիս անց, 1515 թվականին, հետդարձի ճանապարհին օսմանյան բանակը Չեմիշգեզեկում ջախջախում է Նուռ Ալի խալիֆին:

Անատոլիայում Ղզլբաշների ընդվզումների շարունակությունը

Չալդիրանում Իսմայիլ շահի պարտությունը ծանր հետևանքներ թողեց օսմանյանների դեմ խռովարարական շարժման վրա:

Սասանյանները լքում են Անատոլիայի ղզլբաշներին, ինչպես նաև հրաժարվում թուրքմենական ազգաբնակչության ազատագրման իրենց վեհ նպատակներից: Շահ Տահմասպի օրոք, ով 1524 թվականին հաջորդում է Իսմայիլ շահին, տասներկու իմամների շիիզմը ընդունվում է որպես պետական կրոն. նա ճնշում է շահ Իսմայիլի նախկին կողմակիցներին և Սասանյան տերությունը կառուցում է իրանական ազնվականության և զինվորական հրամանատարության շուրջ: Շատ աշխույժ ղզլբաշները 1528 և 1533 թվականներին հեռացվում են. վարչակազմում ու բանակում փոխարինվում վրացիներով *(Gürcüler)* և չերքեզներով (*Çerkesler*):

Այդ պատճառով էլ Անատոլիայի ղզլբաշները, որ ենթարկվում են սարսափելի հալածանքների, իրենց դիմադրության սեփական ճանապարհներն են մշակում

՝ այլևս հույս չդնելով իրանական տիրակալների վրա: Այսպիսով, ականատես ենք լինում բեկթաշիական միաբանության որոշ սուֆի առաջնորդների, թուրքմենական Բաբաների և Ղզլբաշ Պիռերի մերձեցմանը, որոնք իրենց շարժման մեջ ընդգրկում են Օսմանյան կայսրության կողմից սոցիալապես և կրոնապես ճնշված բնակչությանը: Այս խռովությունները, որ ծավալվում են Անատոլիայում 1519-1550 թվականներին, ինչ-որ ձևով ալեվիզմի ծնունդը հաստատող վավերացումներն են, այնպես, ինչպես մենք կարող ենք հասկանալ այսօր:

Քանզի սոցիալական տեսակետից խոսքը նախ և առաջ օսմանյանների կենտրոնամետ քաղաքականության դեմ արձագանքների մասին է: Եվրոպայի և Եգիպտոսի պատերազմները ֆինանսավորելու համար՝ ծանր հարկերի տակ գտնվող Անատոլիայի գյուղացիները, աղքատության մեջ ապրող զորացրված նախկին զինվորները, բռնի ուժով նստակյացության անցած և իսլամ ընդունած թուրքմենական ցեղերը կազմում են բոլոր ճնշվածների հակահասարակությունը, որի համար սուլթանների դեմ պայքարը միակ այլընտրանքն է :

Եվ հետո, մշակութային առումով և գաղափարապես այս խռովությունները գործնականում կազմում են հերետիկոսական համարվող բոլոր ուղղությունների համադրություն, շամանական հավատալիքները, բեկթաշի ուսմունքն ու շիիթական մարգարեությունը դառնում են դիմադրության մշակույթի հիմքը: 1517 թվականին Շեյի Ջելալը ապստամբության կոչ է անում Եվդոկիա և Ամասիա քաղաքներից: Նա հավաքում է բանակ՝ կազմված 20.000 աղքատ գյուղացիներից և թուրքմեն Ղզլբաշներից, և երկու տարի պայքարում Սվազ և Երզնկա նահանգներում:

1519 թվականին Յոզգաթ քաղաքից նրա հետնորդ շահ Վելին՝ 4000 ապստամբների գլուխ կանգնած, գալիս է Սվազ քաղաքը գրավելու և այնտեղից օսմանյան

իշխանություններին աքսորելու: 1525 թվականին Բաբա Զյունը ձեռնամուխ է լինում մի ընդվզման, որը շատ արագ ներգրավում է Սվազի, Եվդոկիայի, Ամասիայի, Ադանայի, Տարսոնի և Մարաշի նահանգները: Երկու տարվա ընթացքում խռովարարները օսմանյան կառավարիչներին և նրանց ջատագովներին ձախողման են մատնում: 1528 թվականին Բալիմ սուլթանի հարազատ եղբայրը՝ Քալընդիր Ջելեբին, ով բեկթաշիների հիմական մեհյանի առաջնորդն է, 30 000 կողմակիցներից բանակ է հանում Քըրշեհիրում: Խռովությունները տարածվում են Անկարայում և Կեսարիայում (Մաժաք): 1547 թվականին Պիռ սուլթան Աբդալն իր բեկթաշի մեհյանից խռովություն է կազմակերպում, որը հասնում է Սվազ, Եվդոկիա ու Յոզգաթ և որը ավարտվում է 1550 թվականին Սվազում՝ Աբդալին կախաղան բարձրացնելով:

Արդեն առասպել է դարձել նրա մահապատժի դրամատիկ պայմանները: Իսկապես, օսմանյան բարձր աստիճանավորը, որը կարդում է դատավճիռը, ոչ այլ ոք է, քան իր նախկին աշակերտ Հիզիր Փաշան, որն անցել էր խռովությունը ճնշողների կողմը: Վերջինս իբրև թե առաջարկել է Պիռ սուլթան Աբդալին արտասանել երեք կարճ բանաստեղծություն, առանց հիշատակելու «շահ» բառը՝ փրկություն ստանալու համար: Պիռ սուլթան Աբդալը պատասխանել է հետևյալ բանաստեղծական տողերով, որոնք հայտնի են բոլոր ալեվիներին.

Քանի դեռ Հիզիր Փաշան մեզ չի կախել,
Բացեք դռները, գնանք գտնենք շահին,
Քանի դեռ չի եկել մահապատժիս օրը,
Բացեք դռները, գնանք գտնենք շահին,
Օ՜, դպիր, ես օրհնում եմ գրիչ բռնած ձեռքդ,
Գրի՛ր այս բանը, իմ լուրերը հասցրո՛ւ շահին,
Աստվա՛ծ սիրես, օ՜, դպիր, գրի՛ր այսպես.

Օր ու գիշեր աղաչում եմ շահին իմ աղոթքներում,
Եվ խնդրում, որ արյունալի Սիվասը փլուզվի,
Գրի՛ր այս բանը, իմ լուրերը հասցրու շահին,
Այս չքնաղ դաշտերը, այստեղ, հենց իմ դիմաց,
Ես կգնամ՝ անկարող դրանցով անցնել,
Օ՜, տեր իմ՝ կապտականաչ աչքերով, պաշտպանի՛ր ինձ
Այս բարձր լեռնահարթերի միջով, գնա՛մ հասնեմ իմ շահին,
Ես Պիռ սուլթան Աբդալն եմ, աշխարհիս ընթացքը կանգ չի առնում,
Եվ անցած կյանքն էլ ետ չի դառնալու:
Իմ դիմացը շահն է, ես նրա ուղին չեմ թողնի երբեք:
Այս բարձր լեռնահարթերի միջով, գնամ հասնեմ իմ շահին:

Ուրիշ ավելի փոքր ընդվզումներ ևս կզարդարեն 16-րդ դարի երկրորդ կեսը՝ ի պատասխան սուլթանների հալածանքներին: Օսմանյան տարեգրությունները նկարագրում են խռովություններ Անտեպում և Կիրկյուկում (1570), Ուրֆայում (1574), Էլբիստանում, Մալաթիայում և Սիվասում (1578) և կրկին Ուրֆայում (1578-1602):

Տասնյակ հազարավոր զոհերի գնով են ժողովրդական այդ շարժումները ճնշվում (ըստ թուրք պատմաբան Իսմայիլ Կայգուսուզի):[126]

Ղզլբաշներն այդ ժամանակից ի վեր իրենց հավատքը թաքուն են պահում Անատոլիայում: *Տակիյեն* /Takiye/ (ծածկամտություն) դառնում է օրենք: Որոշ ցեղեր, փախչելով հետապնդումներից, ապաստան են գտնում Քուրդիստանի

126 Ismail Kaygusuz, *Gormedigim Tanriya tapmam, Alevilik ve Materyalizm*, op. cit.

լեռնային զառիվեր շրջաններում. Իրաքի *Սհաբակ* և Իրանի *Ակլ-ը Հակկ* համայնքները, որոնք ալեվիների հետ ունեն շատ ուժեղ նմանություններ, *ղզլբաշ* թուրքմենական այդ ցեղերի սերունդներն են:[127]

127 Martin van Bruinessen, *A kizilbash community in Iraqi Kurdistan: the Shabak*, Les Annales de l'autre Islam, 5, 1998.

Երկու խոսք՝ որպես վերջաբան

"*Bin Yillik Yürüyüs*" (Բին Յիլլիկ Յուռույյուշ) «Հազարամյա երթ» բառակապակցությունը կատարելապես ամփոփում է ալեվիզմը:

Մի երթ, որի յուրաքանչյուր փուլը պայքար է քաղաքական և կրոնական բռնապետության դեմ, մի երթ, որն այսօր դեռ շարունակվում է Թուրքիայի Հանրապետությունում՝ տարբեր կառավարություններից ստեղծված AKP (Adalet ve Kalkinma Partisi)[128] ընդդիմության մեջ: Այս կառավարություններից յուրաքանչյուրի փորձը՝ փոքրիկ բաժիններով պարտադրել իսլամական օրենքը պետական մակարդակով, վերջանում է ալեվիների ըմբոստացմամբ: Յուրաքանչյուր գրոհ այս երկրի Սահմանադրության մեջ գրված աշխարհիկության դեմ, տապալվում է այս համայնքի կողմից:

Բայց և այնպես, քաղաքական քվեարկությունների, խորհրդարանական ընտրությունների հոսանքում Թուրքիայի իսլամական քաղաքականությունը բարենպաստ լինելով Եվրամիություն մուտք գործելու համար և սատարվելով Եվրոպական երկրների և Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից, շարունակում է իր առաջընթացը: Ալեվիները, որոնք բնակչության մեջ փոքրամասնություն են կազմում, չեն կարող արգելք հանդիսանալ այդ ամենի դեմ, և ավելի ու ավելի շատ են զգում մոտալուտ վտանգը: Զանազան փաստեր հիշատակում են սուննի մուսուլման մեծամասնության անհանդուրժողականությունը նրանց հանդեպ: Այդ փաստերը զբաղեցնում են տպագիր մամուլի մի մասը: Այստեղ աշակերտների ծնողներ են, ովքեր ըմբոստանում են իրենց երեխաներին իսլամի դասընթացների պարտադրման դեմ, այստեղ մի երիտասարդ զինակոչիկի պատմություն է. երբ նրան իր բանակային ընկերները ենթարկում են լինչի դատաստանի, որովհետև նա Ռամադանի ծոմը չի պահում: Այստեղ պայքարի պատմությունն է՝ արդյունահանվող քարհանքի փորման դեմ, որը բացվում էր հենց Աբդալ Մուսա Սուլթանի դամբարանի վրա, Էլմալիում, Անթալիայի մոտ: Այստեղ պայքար է մղվում ջրամատակարարման պատնեշների կառուցման դեմ և երկրպագության բնական տարածքների քանդման դեմ Տյունջելի/Դերսիմում:

Այս իրավիճակը հանգեցրեց ալեվիական մի շարք զուգորդական կառույցների ստեղծմանը Թուրքիայում, իսկ դեպի Եվրոպա արտագաղթը պահանջեց կրոնական փոքրամասնության կարգավիճակ՝ կրոնական գործերի նախագահությունում (*Diyanet Isleri Bakanligi*): Այդ նպատակով այս կառույցները փորձում են ալեվիզմը ներկայացնել որպես շիիթական իսլամի մի ճյուղ, որն ըստ Սահմանադրության նրանց կապահովի ունենալ երաշխավորված իրավունքներ: Եվ շատ հաճախ կարելի է գտնել համայնքի անդամներ, որոնք հաստատվել են որպես «ալեվի մուսուլմաններ»:

Ահա թե ինչպես է դա բացատրում Հասան Կիլավյուզ Դեդէ Գերմանիայից. «*Ալեվիզմը ամբողջովին լիիրավ հավատք է: Ալեվիները հավատում են, որ Աստված Տիեզերքում ամենուր է: Հազար տարուց ի վեր իրենց գործունեությունն ու իրենց հավատալիքներն արտահայտվում են չափազանց մաքուր և պարզ ձևով: Այսօր որոշ դեղեր փորձում են այդ ձևը պարուրել կեղծ տարազներով: Այդ դեղերը, որոնք չեն վստահում նրանց և թույլ են տալիս նրանց դեգերել թերարժեքության բարդույթում՝ սուննի իսլամական հավատին դեմ հանդիման, հենց ալեվիզմի էությունից են դուրս քաշում*

128 AKP (Հանուն Արդարության և Զարգացման կուսակցություն) – Թուրքիայում իսլամական և պահպանողական կուսակցություն իշխանության մեջ, որը գոյություն ունի 2002 թվականից:

մեր ավանդույթներն ու մեր բարքերը... Մենք չենք կարող Անատոլիայի ալեվիների հավատը կապել իսլամական կրոնի հիմնարար սկզբունքների հետ»:[129]

Այս միտումը, եթե ամրապնդվի, լուրջ վտանգ կներկայացնի, մասնավորապես Եվրոպա ժամանած ալեվի երիտասարդների համար: Իրոք, այդ երիտասարդները ջանում են գտնել իրենց տեղը այն հասարակությունների մեջ, որոնք ավանդաբար փակ են Մերձակա և Միջին Արևելքի մշակույթներում: Միաժամանակ նրանք փնտրում են իրենց սեփական ինքնության կառուցվածքը, որը կես ճանապարհին է՝ իրենց ծնողների ինքնության և այն երկրի միջև, որտեղ նրանք ծնվել և մեծացել են:

Բազմաթիվ երիտասարդ տղաներ և աղջիկներ, որոնց ես ճանաչում եմ, պատմել են, թե իրենք ինչպիսի դժվարությամբ են երբեմն փորձում բացատրել իրենց շրջապատին, դպրոցական կամ մասնագիտական միջավայրում, թե ինչ է ալեվիզմը:

Ոչ այն պատճառով, որ չեն ուզում կամ չեն կարողանում, այլ պարզապես չգիտեն՝ ինչպես բացատրել կապվածությունն իրենց մշակույթին:

Այդ ժամանակից ի վեր գայթակղությունը մեծ է՝ իրենց համար հեշտացնել բացատրությունը Եվրոպայում հայտնի մի կողմնորոշիչով՝ իսլամով: Այսպես, ինքնահաստատումը «ալեվի մուսուլման»-ով ավելի նպատակահարմար է և բացատրելու համար ավելի արագ, քան ասել՝ «ես ալեվի եմ»: Իբրև թե, ալեվիզմն ամփոփվում է իսլամական այդ ավելի «մոդայիկ» ձևի մեջ:

Ընդհակառակը, ավելի կարևոր է փորձել բացատրել և ծանոթացնել այդ հավատքի համընդհանրությունը և նրա հիմնարար հատկանիշը, այն է՝ ընդվզումը անարդարության և կամայականության դեմ և նրա խոտորումը մարդկային

129 Hasan Kilavuz, *Alevilerin inanç ve ibadeti çagdas, Dedeleri yol göstericidir, "Alevilerin sesi"* 69, 2003.

հարաբերություններում՝ հանդուրժողականությունը:

Միայն հարմարեցումն իր ամբողջականության մեջ կարող է օգնել հասկանալու ալեվիզմը, և ոչ թե մի քանի խորհրդանիշեր, որքան էլ որ դրանք ուժեղ լինեն:

Դաջել մարմնիդ վրա Zulfukar –Զյուլֆյուկար՝ իմամ Ալիի թուրը, կամ այն որպես վզնոց պարանոցին կրել, անշուշտ օգտակար և անհրաժեշտ կլինի նրան, ով ինքնահաստատման կարիք ունի: Սակայն պետք է ավելի հեռուն գնալ: Պետք է ապրել: բայց ապրել համաձայն այն սկզբունքների, որոնց պաշտպանն ես ուզում դառնալ:

Միայն այդպես է հնարավոր Եվրոպայում կոտրել ռասիստական նախապաշարմունքները, որ գոյություն ունեն Թուրքիայից եկող ամեն ինչի նկատմամբ: Ո՛չ, Թուրքիայից եկած գաղթականները միայն բեղավոր մասոններ չեն կամ միայն *«Քյաբաբ՝ սպիտակ թացանով, առանց սոխի»* վաճառողներ: Ո՛չ, նրանք «արաբներ» չեն: Ո՛չ, նրանք «անխուսափելիորեն մուսուլմաններ» չեն. ո՛չ, կտրականապես՝ ո՛չ: Նրանց կանայք և դուստրերը նույնպես «տնային ստրուկներ» չեն:

Այս գիրքն ընթերցելուց հետո, փորձեք ամենից առաջ բացահայտել այս հարուստ մշակույթը, հրեք և բացեք ալեվիների ընկերակցությունների դռները, որոնք գոյություն ունեն ձեր քաղաքներում, գնացեք ընդառաջ նրանց, որոնք տարբերվում են ձեզանից, սակայն ձեզ կապացուցեն, որ հանդուրժողականությունն այն դուռն է, որ տանում է դեպի բարեկամություն:

Եթե դուք անեք այդ քայլը, այս էջերը կհասնեն իրենց նպատակին:

Hiç bir milleti, insani ayiplamayiniz. Մի՛ պարսավեք ոչ մի ժողովրդի, մի՛ պարսավեք ոչ մի մարդու:

Էրվան Կերիվել

Մատենագրություն

- Ֆրանսուազ Առնո-Դեմիր, *Ալեվի-Բեկթաշյան համակարգը երգերում, որոնք ուղեկցում են Սեմահի արարողակարգի պարը, սինկրետիզմները և աղանդները սելջուկյան և օսմանյան արևելքում (14-ից մինչև 18-րդ դարը)*, Քոլեժ դը Ֆրանսի գիտաժողովի նյութերը, 2001, Peeters, Paris, 2005.

-Nihal Bayram, *Alevilikte inanç, ahlak ve hukuk sistemi*, Yeni Özgür Politika, 31 août 2009

-*Bulletin de la Société Ernest-Renan*, Revue de l'histoire des religions, tome 167 1, 1965

-Claude Cahen, *Baba Ishaq, Baba Ilyas, Hadjdji Bektas et quelques autres*, Turcica 1 1969

-Erdem Cipa, *Sahkulu Rebellion*, 2001

-Henry Corbin, *Terre Céleste et Corps de Résurrection : de l'Iran mazdéen à l'Iran shi'ite*, La Barque du soleil, Buchet-Chastel 1960

-Nuri Dersimi, *Kürdistan Tarihinde Dersim*, Doz Yayınları, 2004

-Albert Doja, *A political history of Bektashism, from Ottoman Anatolia to contemporary Turkey*, Journal of Church and State 2006

-Odkan Erdenay, *Aleviliğin Yazılmayan Tarihi*, 2008

-Kudsi Ergüner, *Villayet Name, le livre des derviches bektashi*, Le Bois d'Orion 1997

-Ismet Zeki Eyuboğlu, *Haci Bektaş Velî*, Özgür Yayınları Istanbul 1998

-Marzena Godzinska, *Rituals of Alevi and Bektashi religious minorities-The religious relations in the Sunni majority environment in secular Turkey*, Asian and Pacific Studies 4/ 2007

-Fernand Grenard, *Une secte religieuse d'Asie Mineure, les Kyzyl-Bâchs*, Journal Asiatique 10-3, 1904

-Pierre d'Hérouville, *La ruine dans la taverne, 1ère partie : ascètes et ordres hétérodoxes d'Iran*, 2010

-Ismail Kaygusuz, *Görmediğim Tanrıya tapmam, Alevilik ve Materyalizm*, Su

Yayınları Istanbul 2009

-Raymond Kevorkian, Paul Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide*, Arhis Paris 1992

-Hasan Kılavuz, *Alevilerin inanç ve ibadeti çağdaş, Dedeleri yol göstericidir*, Alevilerin sesi 69, 2003

-Mehmet Fuad Köprülü, *Influence du chamanisme turco-mongol sur les ordres mystiques musulmans*, 1929

-Aram Mardirossian, *Le livre des canons arméniens de Yovhannes Awjneci, Eglise, droit et société en Arménie du 4e au 8e siècle*, Peeters Leuven 2004

-Elise Massicard, *La communauté, un universel sociologique ?*, Labyrinthe 21 2005

-Irène Melikoff, *Sur les traces du Soufisme turc, recherches sur l'islam populaire en Anatolie*, Isis Istanbul 1992

-Irène Melikoff, *Le Gnosticisme chez les Bektachis/Alévis, syncrétismes et hérésies dans l'Orient Seldjoukide et Ottoman (14e-18e siècles)*, Actes du Colloque du Collège de France, 2001, Peeters Paris 2005

-Irène Melikoff, *Hadji Bektach, un mythe et ses avatars*, Brill New-York 1998

-Irène Melikoff, *De l'épopée au mythe, itinéraire turcologique*, Isis Istanbul 1995

-Michèle Nicolas, *Pèlerinages aux « gisants » d'Anatolie, Les Ottomans et la mort, permanences et mutations*, sous la direction de Gilles Veinstein, Brill New-York 1996

-Ahmet Yaşar Ocak, *Syncrétisme et esprit messianique : le concept de Qotb et les chefs des mouvements messianiques aux époques Seldjoukide et Ottomane (XIIIe-XVIIe siècles), syncrétismes et hérésies dans l'Orient Seldjoukide et Ottoman (14e-18e siècle)*, Actes du Colloque du Collège de France, 2001, Peeters Paris 2005

-Ali Tayyar Önder, *Türkiye'nin Etnik Yapisi*, Kripto Kitaplar Istanbul 2008

-H.B. Paksoy, D. Phil, *Introduction to Dede Korkut*, Soviet Anthropology and Archeology, 29 1990

-Hassan Pirouzdjou, *L'Iran au début du XVIe siècle*, L'Harmattan 2010

-La Revue de Téhéran, *Le culte de Mithra en Iran et à Rome (1)*, N°35 octobre 2008

-La Revue de Téhéran, *Khezr : du prophète au guide personnel vers la « Source de la Vie »*, N°26 janvier 2008

-Jean-Paul Roux, *Les Astres chez les Turcs et les Mongols*, Revue de l'histoire des religions, 195 1979

-Savaş Şengül, *Une pratique religieuse du Dersim*, 2002

-Efdal Sevinçli, *Özel-gizli bir dil: çepni dili*, Journal of Yaşar University, 2009

-Ahmet Turan, Harun Yildiz, *Tarihten Günümüze Anadolu Aleviliği*, 2008

- Hüseyin Türk, *Nusayrilik Arap Aleviliği ve Nusayrilerde Hızır inancı*, Ütopya Yayınevi 2002

-Ilyas Üzüm, *Günümüz Bulgaristan aleviliği*, Horasan Yayınları Istanbul 2006

-Martin van Bruinessen, *A kizilbash community in Iraqi Kurdistan : the Shabak*, Les Annales de l'Autre Islam 5 1998

-Raoul Vaneigem, *Les Hérésies*, PUF 1994

-Vengê Dêsimi, *Dersim Inanci'nda Hizir ve Hizir Orucu*, 2006

-Ali Yaman, *Kizilbash Alevi Dedes*, 2006

-Mehmet Yaman, *Alevilikte Cem*, Can Yayınları 2003

-Hidir Yergezen, *Alevilikte devriye varoluş Çemberi*, 2006

-Riza Yildirim, *Turkomans between two Empires: the origins of the Qizilbash identity in Anatolia (1447-1514)*, Bilkent University Ankara 2008

-Hakan Yücel, *Le mouvement alévi*, Actes du Colloque Nantes-Galatasaray, Signes, Discours et Société 2010

-Thierry Zarcone, *Poétesses soufies de la confrérie bektachie*, Signatura 2010

-Thierry Zarcone, *Hommes-Pierres, Hommes-Arbres et Hommes-Animaux en Asie turque et en Europe orientale*, Diogène PUF 2004

Հետքեր...



Գրքի հեղինակը Հաջիբեքթաշի արձանի մոտ:
Ապրիլ, 2008:

Սուլթան Բալիմի դամբարանը Հաջիբեքթաշ վանքում, Նեվշեհիրում, 2008թ

Հաջի Բեքթաշի արձանը Նեվշեհիրում և Քըրշեհիրում, առյուծի և եղջերուի միջև

Աբդալ Մուսա սուլթանի դամբարանի մուտքը: Գյուղ Թեքքե, էլմալը, հուլիս, 2010թ

Դերվիշների գերեզմանաքարեր դամբարանի այգիներում, 2010թ

Ցանկությունների ծառ դամբարանամերձ բլուրի վրա
գյուղ Թեքքե, էլմալը, (2010)

Գրքի հեղինակը էլիֆ Անա դամբարանի դիմաց: Գյուղ Աշաղը
Պուլիանլի, Նառլը, Պազարջըք, ապրիլ, 2011թ

Էլիֆ Անայի դամբարանը, Կահրամանմարաշ, ապրիլ 2011թ.

Էլիֆ Անայի և իր ամուսնու դիապատվանդանը, ապրիլ, 2011թ.



Մովսեսի ծառը: Գյուղ Հիդիրբեյ, 2011թ:

Սալման-ի-պաք դամբարանը: Գյուղ Սալմանիպաք, ապրիլ, 2011թ:



Սալման-ի-պաք դամբարանի ներսույթը:



Ալի Բաբայի դամբարանը: Գյուղ Էղլեն. ապրիլ, 2011թ:

Ալի Բաբայի դիապատվանդանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 7

Երկու խոսք՝ որպես առաջաբան... 11

Ալեվիզմի բնակչությունը և աշխարհագրությունը 17

Ալեվիզմը իսլամի մա՞ս 41

Համայնքային ծիսակարգերն ու սովորույթները ալեվիզմում 53

Այնի Ջեմի (*Ayn-I Cem*) համայնքային ծիսակարգը 67

Ալեվիզմը և չորս բնական տարրերը 79

Ալեվիզմը, գնոստիկները և սուֆիզմը 92

Թուրքերի ալեվիզմը և շամանությունը 105

Հաջի Բեկթաշը և բեկթաշիզմը 136

Ալեվիզմի բանաստեղծները 155

Ալեվիզմը և Ղզլբաշների ապստամբությունը 171

Երկու խոսք՝ որպես վերջաբան 188

Մատենագրություն 193

© «SIGEST» հրատարակչություն, 2013
29 rue Etienne Dolet - 94140 Alfortville - France
http://editions.sigest.net
N° éditeur : 9782917329
ISBN : 978-2-917329-57-3

Réalisation du livre :
PAO éditions SIGEST

Rédaction :
Varoujan Sirapian, Samvel Gasparian

Images de la couverture et photographies des pages intérieures:
© Erwan Kerivel

Achevé d'imprimer en avril 2013
Présence-Graphique à Monts (France)
Dépôt légal : 2e trimestre 2013

Գիրքն առաջին անգամ լույս է ընծայել SIGEST հրատարակչությունը,
2011 թվականին,
" La Vérité est dans l'Homme - Les Alévis de Turquie "
1ère et 2ème édition : ISBN : 978-2-917329-337
3ème et nouvelle édition : ISBN : 978-2-917329-46-7
© SIGEST